12420



ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀՈԴԱԲԱՐԺԱԿԱՆ ԹՈՒՅԼ
ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՐՎԱԾ Է ՈՐՊԷՍ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿԱԶՄԵՑԻՆ
ԱՐՇԱԿ ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՇՄԱՃԵԱՆ
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Գ. ՏԱՐԻ

Իմաստասիրական, փոխաբերված յոդուածների եւ անկարների արտատպութեան իրաւունքը վերապահուած է։

ՎԵՑԵՐՈՐԴ ՏՊ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ԵՐԵՒԱՆ
Տպարան «ԼՈՅՍ», Բէհբուդեան փող. № 12
1916

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

(Բ. հրատարակութեան կցած)

Դասընկերն առաջին հրատարակութիւնից սկսած ձեռագրի գործածութեանն առանձին տեղ տուեց, հիմնուելով ներկայ էքսպէրիմենտալ մանկավարժութեան պահանջների վրայ և հայ դասագրքերից առաջին անգամ Դասընկերն էր, որ Ա. Բ. Գ. և Դ. տարիների մէջ ձեռագրին առանձին տեղ յատկացրեց՝ յարմարեցնելով ծխական դպրոցների պահանջներին։

Այս անգամ Դասընկերն առանձին ուշք է դարձնում շարադրութեան նիւթերի վրայ. մի խնդիր, որը ոչ միայն մեզանում, այլև եւրոպական երկրներում բազմատեսակ քննադատութեան նիւթ է դարձել և մինչև օրս վերջնական լուծումն չէ ստացել։ Այս առթիւ առաջարկում են բազմապիսի ձևեր, որոնցից, մեր կարծիքով, ամենապարզ տեսակները կարող են համարուել մանկական նամակները, պարզ, ձեւափոխուող պատկերներ եւ այնպիսի նիւթեր, որոնց մէջ նա ապրել է, կենդանի կերպով մասնակցել։ Այդ հիման վրայ Գ. և Դ. տարիներում մենք դրել ենք ձեռագիր նամակների նմուշներ, որտեղ աշակերտը պարզ կը նկատէ, որ նամակի նիւթ կարող է լինել այն ամենն, ինչ առօրեայ կեանքում իր հետ պատահում է և ինչ որ ինքն իր մտիկնելիս պէտք է բանաւոր հաղորդէր։ Այլ խօսքով՝ աշակերտի այն շրջապատն է իրեն նիւթ դառնալու, որի մէջն ինքն ապրել է և բազմապիսի տպաւորութիւններ է ստացել։ Այստեղ աշակերտը ոչ յօդուածի բառերին և ոչ էլ ուսուցչի պահանջին գերի է դառնում. նա ազատ է իրեն յայտնի բառերը, դարձուածքները գործածել, որոնց ուղղագրութեանը ծանօթ է։

Բնականաբար այս ձևն հեշտ է, ինքնուրոյն, աշակերտի համար հետաքրքիր, ուղղագրութեան և բովանդակութեան տեսակէտից արդիւնաւէտ։

Նման առաւելութիւններ ունեն նոյնպէս աշակերտին ծանօթ և շրջապատից վերցրած այն պարզ պատկերները, որոնց մէջ գործողութիւնները փոփոխելով՝ աշակերտին ազատ դիտողութեան, մտածողութեան և ստեղծագործութեան նիւթ են տալիս։

Այստեղ էլ աշակերտն իրեն ցանկացածի նման կ'արտայայտէ, առանց գրքի կամ ուսուցչի կաշկանդումների։ Այս տեսակ պարզ շարադրական վարժութիւններից յետոյ, նոր կարելի է անցնել զուգընթացաբար շարադրութեան միւս տեսակներին—այն է, սովորած յօդուածի բովանդակութիւնը գրել, ճանապարհորդական զբօսանքներ նկարագրել, ազատ շարադրել և այլն։

Ընտանեկան, դասարանական եւ երկրագործական իրերի պարզ գծերից կազմուած պատկերները նկարելու համար են. դրա համար նախ պէտք է իրականը, ապա պատկերը դիտել և յետոյ յիշողութեամբ նկարել։

ԾԱՆՕԹ. 1. Ձեռագիր յօդուածներն արտագրութեան համար են. դրանով կարելի է գրել-կարդալն աւելի հիմնաւորել, աւելի խորացնել և հեշտութեամբ ուղղագրութեան վարժեցնել երեխաներին (տես «Դասընկեր» Ա. տ. Համառօտ բացատրութիւն գործադրողներին)։ Ձեռագիր յօդուածներն (ինչպէս և տպագիրը) անպատճառ պէտք է արտագրութեան նիւթ դառնան այն ժամանակ, երբ՝ դասատուի ղեկավարութեամբ յօդուածն ըմբռնել են երեխաները և վարժ կարդում են։

2. Ծանկում՝ ձեռագիր յօդուածների հանդէպ փակագծերում նշանակուած հնչիւնները, ածանցները և այլ բացատրութիւնները ցոյց են տալիս, որ իւ-

1. Կարդա

Կարդա՛, ա՜յ իմ խելօք մանուկ,
Կարդա՛, գրի՛ տարին բոլոր.
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր։

Գիր կարդալով՝ դու գրքերում
Շատ նորանոր բան կ'իմանաս.
Շատ շատերից, շատ բաներում
Մտքով հեռու կը սլանաս։

Գիր կարդալով՝ դու աշխարհիս
Կը ճանաչես չարն ու բարին.
Ո՞վ է խնդում, ո՞վ է լալիս,
Ո՞վ է զրկում խեղճ թշուառին։

Դու կ'իմանաս՝ ինչու մարդիկ
Պէտք է ապրեն իրար համար.
Ի՞նչ է մարդկանց ցաւն ու կարիք,
Ի՞նչ է լոյսը, ինչը խաւար։

Կարդա՛, որդիս, որ հօրդ պէս,
Դու էլ անուս, խեղճ չմնաս,
Որ ամենքին վիպ չծռես
Ու միշտ ապատ առաջ գնաս։

Յիռնային երգեր

Յիռների մերկ գաղգաթները պարզ երգ-
կոյիան արևերը. իսկ շորերի մեջ լոյսը կիրկի-
ր աղօր գոյն էր արտանում: Ակիգոյնը
ամպերն անապին կլորներով գլորում էին
օդի բարձրութեան մեջ:

Գիշերվայ երգեր էր. երբ խաղար Անդամ
ին նովիներեր երգերը, երբ ախորժ
լսել արօրիս դարձող ոչխարների ծօրերի բառնա-
ձայն բառաչիւնները և ջրերի երամակների
ուրախ խրխնջոցը, որոնք կայրովելով վա-
կում ին դէպի իրենց գիշերային օթևանը:
Նոյն ժամին թրթռ քամին նազելով քաշում
է քո երեսին և ծրմնզում է «Ընդ՝ր
լի կուրծքով անուշ զանուրութիւնը, որ
իս իմ Նապարաւոր Ծաղիկներիս»:



Դիտեցէք իրականը, այս պատկերը և յիշողութեամբ նկարեցէք:

4 Գիշեր

Գեղեցիկ ու զով
Գիշերն է պայծառ,
Անուշիկ քնով
Քնած է աշխարհ:

Ծառերը մեղմիկ
Քամուց օրօրւում,
Հեզիկ ու նազիկ
Երգ են սրլրրլում:

Իսկ լայնատարած
Երկնակամարով
Լուսինն է կամաց
Անցնում ամենով:

Ասպերն էլ սիրուն
Ժպիտով փայլում,
Իրենց թագուհուն
Ճամպայ են դնում:

Գեղեցիկ ու զով
Գիշերն է պայծառ,
Անուշիկ քնով
Քնած է աշխարհ...

5. Լեռներում

Երկու ընկեր էինք և գնում էինք սարերով, ձորերով. միևնույն հոգն էր մեզ երկուսիս էլ միաժամանակ մեր յարկերի տակից դուրս շպրտել։

Կէս օր էր և դեռ մենք որքան պիտի գնայինք վտանգաւոր տեղերից ազատուելու համար։

—Տեսնում ես այն սև մեծ ժայռը մեկանից դէպի ձախ, ասաց ընկերս. նա կոչւում է Կոկորդ կարող։

—Ինչու։

—Որովհետև շատ ինձ ու քեզ նման ողորմելիներ գլուխները թաղել են այնտեղ։

—Որ այդպէս է, ինչու այստեղից եկանք. չէ՞ որ դու ճանաչում ես այս լեռների բոլոր անկիւնները։ Չէնք էլ չունենք։

Նա յետ նայեց մեզմ ժպտալով. «Չէնքով ինչ կ'անէիր»։

—Ի՞նչ կ'անէի, ես ինչ գիտեմ. դէ, վտանգաւոր սարերում անգէն լաւ չէ։

—Դու շատ ես վախենում։

—Ի՞նչ կայ չվախենալու. այս ժայռը, այս սարերը։

—Դու հաւատում ես բազդիդ։

—Ի հարկէ։

—Եթէ հաւատում ես, էլ ինչու ես վախենում. ինչ գրուած է, այն էլ կը կատարուի։

—Իրաւունք ունիս, բայց վախենում եմ։

Վ՛զզ... Մի գնդակ էր, Կոկորդ կարող ժայռի կողմից եկաւ ու անցաւ մեր գլխի վրայով։ Վ՛զզ...անցաւ երկրորդը։

Սարսափած նայեցի դէպի ժայռի կողմը և տեսայ, թէ ինչպէս վեր ցցուեց նախ մի մարդու պատկեր, ապա երկրորդը։

Քիւրդ աւազակներ էին։

—Կանգ առէք, հրամայեցին նրանք մի զոյգ հրացանի փողեր մեզ ուղղած։

Մենք կանգ առանք. ճար չկար։

—Ցած իջէք ձիերից, լսեց երկրորդ հրամանը։

Ընկերս մի բոպէ ճնշուց մտազբաղ։—Տեսնես քանի հոգի են, ասաց նա կամացուկ։

—Երկու են, ես լաւ տեսնում եմ. դրանից մեզ ինչ օգուտ. մի հոգի էլ լինէր, այդ հրացանով մեզ...

—Ցած իջէք, թէ չէ... լսեց նոյն հրամանն աւելի խիստ կերպով։ Մենք ցած իջանք։

—Այժմ թողէք ձիերը և հեռացէք մի կողմ։

Ընկերս իր ձիու սանձից բռնած մի քանի քայլ առաջացաւ դէպի աւազակները։

—Նայեցէք, ասաց, ես բոլորովին անզէն եմ. այս ձին կատաղի է, եթէ թողնեմ, կը փախչի. ցած եկէք ու տարէք, մեզ էլ թողէք մեր ճանապարհը ոտքով շարունակենք։ Մեզ մարդիկ ենք, ինչպէս տեսնում էք, մեր ցաւի համար չօլերն ենք ընկել։

Աւազակները մի երկու բոպէ իրար հետ խորհրդակցեցին և ապա, հրացանները մեզ վրայ բռնած՝ ցած իջան ժայռից և առաջացան դէպի ընկերս, որ հանգիստ կանգնած սպասում էր նրանց։ Ահա նրանք բոլորովին մօտեցան, աներկիւղ և վստահօրէն։ Ընկերս շարունակում էր կանգնել անշարժ և հանգիստ։ Ահա նրանցից առաջինը ձեռքը մեկնեց ընկերոջս ձեռքից ձիու սանձը բռնելու։ Ես նայում էի սրտատրոփ։ Մէկ էլ յանկարծ ընկերս ազատ ձեռքը բարձրացրեց և հոնի փայտով արագութեամբ մի ծանր հարուած իջեցրեց քիւրդի մեկնուած ձեռքի դաստակին ու փշուր փշուր արեց. սա ցաւից մռնչաց, կծկուեց ու թեը բռնած գետին ընկաւ. համարեա միևնոյն վայրկեանին փայտի երկրորդ հարուածն իջաւ միւս քիւրդի գագաթին, որ նոյնպէս գլորուեց գետին, հրացանը ձեռքից թողնելով։

—Վազէ՛ր, ճչաց ընկերս։ Ես մօտեցայ։ Մի վայրկեան յետոյ երկու աւազակները զինաթափ և կողոպտուած՝ մեր ոտքերի առաջն էին։ Ես աչքերիս չէի հաւատում։

Թակարդում բռնուած գազանների պէս այս երկու քիւրդերն ընկած էին կանաչի վրայ և ապուշ ապուշ նայում էին մեզ։ Նրանք շշմել էին անսպասելի դէպքից։

—Զուր, մրմնջաց ջարդուած բազկի տէրն առանց մեզ նայելու։

—Զուր տուր սրան, ասաց ընկերս։ Ես վազեցի մօտակայ աղբիւրը, գլխարկիս մէջ մի փոքր ջուր ածեցի և բերի։ Պապակած քիւրդը խմեց, բայց շարունակում էր անքալ ցաւից։

—Կապիր սրա թեը, դարձաւ ինձ ընկերս։ Ես վազեցի, պատռեցի քիւրդի շորերի մի մասը, վիրակապ շինեցի և պատեցի փշրուած բազուկը։ Միւս ընկերը շարունակում էր նայել դաղանի, վայրենի աչքերով և կարծես ոչինչ չէր հասկանում։

—Ինչու՞ չէք սպանում մեզ, ասաց նա յանկարծ։

—Դուք մեր տեղը լինէիք, կ'սպանէիք։

—Անպատճառ։

—Ինչու՞ էք սպանում անմեղներին։

—Ես ինչ գիտեմ։

—Մենք ձեզ չենք սպանի։

—Հապա ինչ կ'անէք։

—Մի բան կ'անենք։ Վեր կաց, սիրելիս, հեծնենք ձիերը, արևն արդէն թեքուեց, իսկ մենք շատ ճանապարհ ունենք։

—Իսկ սրանք։

Պատասխանի փոխարէն ընկերս արձակեց անդէն գերիներին։

—Գնացէք, ասաց նա։

Քիւրդերը վեր կացան իրար բռնած, օրօրուելով գնացին նորէն դէպի Կոկորդ կորող սարը, իսկ մենք վերցրինք նրանց զէնքերը, թռանք ձիերի մէջքին և քշեցինք, անցանք վտանգաւոր վայրերից։

—Ասա այժմ, սիրելիս, գրածը կատարուեց, թէ չգրածը։

—Չգիտեմ, պատասխանեցի. բայց ընկերս դարձաւ իմ աչքում մի հսկայ, որ կարծես՝ իր ձեռքում տանում էր իմ բազկը, և այդ բազկին էլ ոչ մի վտանգ չէր սպառնում...

Ամրի մօր գուրգուրանքը
Քալա ունիմ նապանիր,
Չիմ գայ նապար թոռանիր.
Իր պաշկիմ իմ բալիա,
Իր գուրգուրիմ գառնուկիա։
Ոէ միծայիր, իմ խաղրիկ,
Զանիա նապիր, անուշիկ։
Քո նօր խանդուաշ օգսիրն
Նիյուկ դարշիր, իմ անգին.
Ոէ, թուռա՛, թուռա՛,
խանդա՛, որդիա, իսաղ ապա՛,
Նը միշանաս, կը վատա՛,
Ձանգաշ ֆրագա, իմ բալէ։

---

7. Ենիարիկը

1.

Տին-տօ, տին-տօ, հնչում էր եկեղեցու մեծ զանգը։

—Էս ինչ բարձր ձայն է, ինչպէս ձագերս վախենում են, ասում էր բնի մէջ նստած մայր ծիծեռնակը։ Զլինի այդ բարձր ձայնը ձագերիս խլացնէ, մտածում էր հայր ծիծեռնակը։

Ձայնը կարուեց. փոքրիկ ձագերը կամաց կամաց գլուխները բնից դուրս բերին, կտուցները բացին և ճաշ խնդրեցին.

—Քաղցած են, ասաց հայր ծիծեռնակը։

—Ինչ լաւ ախորժակ ունեն, վրայ բերեց մայրը։

—Ա՜խ, դուք, փոքրիկ շատակերներ, էլի փափլիկ ճանճեր էք ուզում. այսօր ամեն մէկդ քսան հատ կերել է. քիչ էլ

սպասեցէք, գնամ՝ բերեմ, ասաց հայրը և թռաւ։

Մայրն էլ թռաւ. երկուսով այնչափ ճիճուներ, որդեր, մոծակներ բերին, որ ձագերը կշտացան։

Երկու աղջիկ, երկու տղայ, ինչ հիանալի բան։

2.

Մի օր էլ հայրն ասաց.

—Դուք հիմա մեծ էք, պէտք է ինձ հետ թռչէք, դէհ, եկէք, ասաց ու թռաւ։

—Ապրի չարաճճիս, ապրի, ասաց մայրը. տեսնում էք, ինչպէս լաւ թռաւ։

—Ապա դու էլ ինձ հետ եկ, փափլիկս, ասաց մայրն ու թռաւ։

—Կեցցէ փափլիկս, կեցցէ, կանչեց մայրը. դու էլ արի, սևուկս, դու էլ, նիհարիկս։

Սևուկն էլ թռաւ, մօրը հասաւ։ Նիհարիկն էլ ուզեց փորձել, բայց վախեցաւ, բունը մնաւ։

3.

Չարաճճին, փափլիկն ու սևուկը ուրախ ուրախ յետ դարձան. էլի թռան, էլի եկան, իսկ նիհարիկը բնի մէջ կուչ եկաւ։

—Ես չեմ ուզում թռչել, ասաց նա մօրը. օ, ես վախենում եմ։

—Նիհարիկս, միշտ բնի մէջ չի կարելի մնալ, ասաց հայրը. դու պէտք է թռչել սովորես, դու պէտք է ճանճեր, մոծակներ բռնել իմանաս, մենք աշնանը պէտք է գնանք։

—Սևուկը բարի է, նա ինձ մօտ կը մնայ և ինձ համար ճանճեր կը բերէ։

—Ձմեռն այստեղ ճանճեր չեն լինում։

—Նա կը գտնէ, մայրիկ, նա կը գտնէ, ասաց Նիհարիկը։

Հայրն ու մայրն որչափ փորձեցին, չկարողացան Նիհարիկին բնից դուրս բերել։

4.

—Ի՞նչ համեղ ճանճեր ես բերել, սևուկ Ջան, ասաց Նիհարիկը։

—Գիտէ՞ս, Ջրի երեսից եմ բռնել. այնտեղ այնչափ կան, այնչափ կան, որ չեմ կարող ասել։ Ջուրը շատ լաւ է, մա-

քուր, հիանալի է, նրա մէջ ձկներ են լողում։

—Եթէ մեր բունը բարձր չլինէր, ես էլ կը գայի, ասաց Նիհարիկը։

—Թռչելը շատ հեշտ է, Նիհարիկ, ուզում ես, փորձենք։

Նիհարիկը սիրտ արաւ, թռաւ, նստեց բնի ծայրին։

Սևուկը կամաց կամաց հրելով, մէկ էլ հօպ՝ օդի մէջ գցեց։

—Կորա՛յ, կորա՛յ, կանչում էր Նիհարիկը և թևերը շարժում. նա գնաց, նստեց մօտիկ կաուրի վրայ։

—Ի՞նչպէս է քէֆդ, Նիհարիկ, հարցրեց սևուկը։

—Գի՛ժ, քիչ էր մնացել՝ փողոցն ընկնէի, ասաց Նիհարիկը։

—Մի վախենար, բան չի լինի. դէ հիմա եկ գնանք մեր բունը։

Նիհարիկն էլի փորձեց և թռաւ։ Այսպէս քիչ քիչ նա վարժուեց, բայց թռչելիս ճանճեր չէր կարող բռնել։

—Պէտք է կաուցդ բաց թռչես, երբ ճանճ տեսնես, հափ անես, ուտես։ Նիհարիկը չէր կարողանում. քանի՛ քանի անգամ նա հափ էր արել և կարծում էր, թէ արդէն բռնել է, բայց ո՞րտեղից, ճանճը կողքովն էր անցել։

—Այսպէս մի քանի օր չարչարուելով, վերջապէս սովորեց, սևուկի հետ ծի՛ւ ծի՛ւ կանչելով ամեն տեղ թռաւ։

5.

Աշունն էր. ցերեկները կարճացել էին, գիշերները ցրտել, ճանճերն ու մոծակները պակասել էին։ Հայրն ու մայրը մտածում էին օտար երկիր, տաք տեղեր գաղթել։

—Նիհարիկը բաւական նուազ է, ասում էր հայրը։

—Ես էլ եմ վախենում, կրկնում էր մայրը. եթէ եղանակը լաւ լինի, էլի ոչինչ, իսկ եթէ անձրևային լինի, նրա բանը շատ դժուար կը լինի։

Ծիծեռնակները հաւաքուեցին, հաղարներ կազմեցին։

Գնալու նշանը տուեց։

Մնաք բարով, մեր բներ, մնաք բարով, մեր գետեր, ծլուծլուացին ծիծեռնակներն ու թռան։

—Գնաք բարով, ծիծեռնակներ։

—Բարով յետ գաք, սիրուններ։

8.

Հայրենի աղբիւր,
Երգերս վճիտ
Հիւսել կուգայի
Բիւրեղ կարկաջիդ։

Ես հիմա այնպէս
Ցաղնած եմ ու լուռ,
Դու նորից կ'երգես,
Հայրենի աղբիւր։

9.

Գիրապակ, մրրակ, Մրդրան, վասակ,
Բագրատ, Ղողիկ, Գևորկ, Սիրան,
Եկէք, գրանցնենք, կարող էք դուք
Վիճել իմ հիշդ հանելուկ։
Մի բառ գրում՝ Իրկվանկանի,
Ջարագուշակ նա ցայն ունի...
Ուզինք, դուզինք պապրուհաս է,
Բայց երկնքից յաճ կը վազ է։

---

10. Իշխանի բերդն ու ջրաղացը

Ժայռերի վրայ բուրգերով և պարիսպներով պատած՝ հրպարտ բարձրանում էր իշխանական մի շքեղ բերդ. իսկ ձորի մէջ, գետի ափին, աղքատի պէս կծկուել էր մի խարխուլ ջրաղաց, որ օր ու գիշեր չխկ-չխկում էր։

Մի օր բերդը վերևից արհամարանքով նայեց ջրաղացի

վրայ և զոռող ձայնով ասաց.—Է՛յ, դու, շատախօս ջրաղաց, քո անվերջ չիկ-չիկոցով գլուխս տարար, արածդ ի՞նչ է, գործդ ի՞նչ է, որ ձայնդ չես կարում։

—Ներողութիւն, իշխան բերդ, խոնարհ պատասխան տուեց ցածլիկ ջրաղացը. ես իմ պարտքն եմ կատարում. օր ու գիշեր աշխատում եմ ու քթիս տակ ինձ ու ինձ երգում. դու ինչո՞ւ ես նեղանում։

—Դէհ, մի սրա լեզուին նայեցէք, գոռաց բերդը. չի էլ ամաչում, ինչ բերան է բաց անում իմ դէմ։ Գիտե՞ս, ես ով եմ. իշխանները, տէրերն իմ մէջ են ապրում. իմ դռներից են դուրս գալիս հրամաններ ու օրէնքներ. իմ շէմքի վրայ հազարաւոր մարդիկ գլուխները դնում են ու լիզում քարերս. ես շքեղ եմ ու պայծառ, ես հզօր եմ ու անյաղթելի. իսկ դու, դու իմ սաւերի տակն ես ապրում և դեռ յանդգնում ես հետս խօսել. լռիր, ձայնդ կտրիր։

—Նորից ներողութիւն, ասաց ջրաղացը խոնարհ չրիկ-չիկոցով. շատ մի պարծենար. եթէ ես ձայնս կտրեմ, քո քարը քարիկ վերայ չի կանգնի. դու ինձ ես պարտական քո ուժով, լաւ բան չէ երախտամոռ լինելը։

—Քեզ եմ պարտական, ինչ չէ, բարձր հրհռաց բերդը. ասա՝ տեսնենք, ի՞նչպէս, շատ հետաքրքիր է։

—Մ՛յ, ինչպէս. ես գիշեր ու ցերեկ գլուխս կախ, ալիւրի մէջ կորած՝ աշխատում եմ ու աշխատում, աշխարհին հաց եմ տալիս. գիտե՞ս, եթէ որ չախչախս լռեցնեմ, տէր ու իշխան, ժողովուրդ ու գինուոր սովից կը մեռնեն. էլ ոչ ոք չի մնայ քեզ պահող ու պաշտպանող, քեզ շէնցնող ու պայծառացնող...

Բերդը լսեց և գլուխը կախ գցած մաքի մէջ ընկաւ։

Էն ի՞նչն է՝
Շինած է քարից, կերածն է ալիւր,
Խմածն է ջուր,
Ամբողջ երկրին կշտացնում է,
Միայն ինքն է, որ չի կշտանում։

Դիտեցէք այս պատկերը. որտեղ է նստած կարդում մանուկը. յետոյ ի՞նչ է անում. ո՞վ է զարթեցնում քնած մանկանը. ինչո՞ւ է այծը նրան զարթեցնում։ Պատմեցէք այդ բոլորը, վերնագիր դրէք, ապա դրեցէք։

---

12. Սիրոյ բուն

Թիթեռնիկի թեւերով
Սէրն երկնքից վայր իջաւ,
Բնակարան փնտռելով
Այստեղ-այնտեղ ման եկաւ
Եւ վերջապէս մայրական
Սրտի մէջը բուն դրաւ։

---

13. Զրաղաց

Զուրն է թշշում,
Զուրն է խշշում,
Զրաղացում
Իրարանցում,
Ալեկոծում.
Եւ կարծես թէ
Հազար կանայք
Լաց են լինում
Ու հեծեծում։
Երեք-չորս հատ
Զաղացաքար
Իրանց անդուլ
Զախչախներով
Պըտրտւում են
Հա պըտրտւում.
Դուրսը,
Ներսը
Հարա-հրոց,
Սայլի ճռինչ,
Քարի գրռռոց.
Մինը բեռը
Ներս է կրում,
Մինը նրան
Դուրս է բերում,
Մինն աղօնը
Վրայ անում,
Ցորեն տալիս,
Ալիւր հանում։
Տես և մի կողմ
Զաղացպանը

Ալրաթաթախ՝
Ալրատանը
Քարը տեղից
Իջեցրած,
Նրա տակը
Վրէն արած,
Հա տալիս է
Քարին մուրճը
Եւ կայծեր է
Թափում շուրջը.
Եւ ծնկները
Քարի վրայ
Նա երգում է
Երգն իրա։
—«Արի, իմ քար,
Զաղացաքար,
Քեզ կռանեմ,
Խոր փոսիկներ,
Սուր ատամներ,
Կուռ կռանալով՝
Ծանր մուրճով՝
Լանջիդ հանեմ,
Որ դու աղաս
Բնաղօնը,
Բնաղօնը,
Զոր աղօնը.
Ալիւր, ալիւր
Տաս աշխարհին
Եւ ծառային,
Եւ արքային։

Աշխարհը լայն,
Մեր տեղը նեղ,
Հալւենք, մաշւենք
Մենք միատեղ։
Արի, իմ քար,
Աշխարհը լայն,
Մեր տեղը նեղ,
Հալւենք, մաշւենք
Մենք միատեղ»։

Ես քո տէրը,
Ես քո գերին,
Աբի, հաց տանք
Ողջ աշխարհին։

---

14. Առիւծը

1.

Ինչպէս պատահեց, գաղանանոցից առիւծը փախաւ։ Կատաղի ձայնով նա մռնչում, փողոցով վազում էր։ Ամենքը սարսափած՝ թաք էին կենում։ Մի մայր էլ վախից՝ գրկած երեխին ձեռքից վայր գցեց։

Առիւծը մօտեցաւ, ուզեց պատառել։

—Իմ որդուն մի ուտիր, իմ որդուն մի պատառիր, սարսափած կանչում էր մայրը։ Նա ծնկաչոք ձեռքերը մեկնեց դէպի առիւծը և որդուն խլեց առիւծի թաթերից։

Առիւծը կանգնեց և մտածեց. նա նայեց մանկանը. նայեց, նայեց՝ հեռացաւ։

2.

—Էլի եկաւ, առիւծն եկաւ, ասացին գիւղացիք և տները փախան։

—Ի՞նչպէս կատաղի մռնչում է, ասացին հովիւները և թաք կացան։ Պարսպապատ բակի մէջ գիւղի նախիրը դէս ու դէն կուչ եկաւ, քարացաւ։ Գամբռ շները ձայները կտրեցին, հեռացան։

Առիւծն եկաւ, բարձր պատերից բակի մէջ թռաւ, մի մեծ ենջիկ խփեց, մէջը կտրեց, գետնին տրած՝ ոտքը



15. Աշնան վերջին

Աշունը մօտենում էր իր վախճանին։ Դաշտերն ստանում էին տխուր և գունաթափ կերպարանք։ Կանաչ մարգագետինները, օրըստօրէ դեղնելով, մեռելային դէմք էին կրում։ Անխղճաբար փչում էր սառը քամին և թափում մերկ ծառերի մնացած տերևները։ Երկնքի խոժոռ և մոխրագոյն դէմքի վրայ գլորւում էին մթին ամպերի ահագին բեկորներ և արգելում էին արևի թոյլ ճառագայթները։ Խիստ տխուր եղանակով լսելի էր լինում կռունկների խուլ կռնչիւնը, նրանք բարձր եթերքի միջով, եռանկիւնի շարքերով, դիմում էին դէպի օտար աշխարհ։ Ծիծեռնակներ ամենևին չէին երևում, նրանք վաղուց էին գաղթել։ Միայն մրջիւնները խիստ եռանդով կրում էին դէպի իրանց ամբարներն ընդեղէնների գանազան տեսակներ։ Ամեն արարած պատրաստւում էր ընդունել ձմեռը՝ իր անախորժ հիւրը։

---

16. Աշուն

Ինչպէս եղաւ, թռաւ յանկարծ
Ցուրտ հիւսիսից էն չար քամին,
Տեսաւ սիրուն դրախտ դարձած՝
Սարերն անցած ճանապարհին
Ու զայրացած յետ դարձաւ նա։
—Ինչ էք, ասաւ, գուգելնորել,
Անհետացէք, գալիս եմ հա,
Սև պիտ նեբկեմ սար ու ձորեր։
Ծաղիկները սուգ նստեցին,
Քամուն տին սիրուն շորեր,
Տխուր, տխուր արտասուեցին։

«Ախմոս, անցան գարնան օրեր»։
Թռչուններն երամ կազմած
Իրար յետքից շարան-շարան՝
Թողին սիրուն սարերն ամպած,
Թևին տին, աչքից կորան։
Հովիւ, սարմը մէգ-մշուշով
Հօտեր, նախիր քշեցին ցած.
Առաւ, առաւակ «ախ» ու «վուշով»
Աղմկեցին՝ ձորերն առած,
Ու վախեցած դողդողացին
Տերևները ցուրտ ճիւղերին,

Փախան մէկէն, մերկ թողեցին՝ Ամպն եկաւ, նրան թաղեց։
Սեր հագաւ կանաչ մէրին։ Խաւար երկինքը վշտացած՝
Արևն երկրից չկշտացած՝ Վերից հանդարտ արցունք մաղեց։

Ինչ ինչն է
մարմինն է մարդից
կլուսկուրն է կրակից
հոգին է գրից,
փոքն է փայտից
փորոքիին ին ղնչաւոր և անղուն
առաբկանվրից։

Ով ինչ է անում. գիտեցէք, պատմեցէք և գրեցէք։

19. Քաջ որսկանը

1.

Աբէլն յանկած կանգ առնելով, ինքն իրեն հարց տուեց.

—Ո՞նց անեմ. աջ քշեմ, թէ ձախ։

Ճանապարհներից մէկը խիստ երկար էր, միւսը կարճ։ Առաջինով եթէ քշէր, կէս գիշերին պիտի հասնէր. իսկ երկրորդով շուտ, սակայն ճանապարհը խիստ վտանգաւոր էր։ Աբէլը բռնեց կարուկ ճանապարհը։ Նա պիտի անցնէր խիստ մութ անտառի միջով, ուր ապրում էր մի «ուշաբ»—մի պատառոտ, արիւն ծծող կենդանի գազան, որի ահից ոչ միայն մութ ժամանակ ոչ ոք չէր համարձակւում անցնել, այլ և ցերեկով։ Զորն ահռելի էր, լեռները զարհուրելի, որջերով ու ծերպերով լի։

Յանկարծ, իրենից քիչ հեռւում, մթութեան մէջ, մի գոյգ կայծ երևաց ու հետզհետէ սկսեց համարձակ գալ դէպի նա։

—Սա ի՞նչ պիտի լինի, շշնջաց Աբէլը, հրացանը իջեցրեց ուսից և ուղղեց հարամու ճակատին։

Գազանը վառ աչքերով առաջ եկաւ անվախ և հէնց հասնում էր, որ ջարդի Աբէլի աւանակին, հրացանը թնդացրեց անտառը,

գնդակը դիպաւ գազանին։ Գազանը գոռալով ու կատաղած՝ յարձակուեց որսկանի վրայ. նա իրեն ամենևին չկորցնելով՝ դարանչէն էլ կրակեց ու դաշոյնը դուրս քաշեց։ Գազանը կողկոնձալով՝ դէպի ձորը գլորուեց։

—Դէհ, գնա, որտեղ քոնն ասես, էնտեղ էլ իմն ասա։

2.

Աբէլը համոզուած լինելով, որ գիշերուայ այն ահռելի գազանը հրացանից ընկած է կուի տեղում, հետևեալ օրն ուզեց գնալ մի նոր-շան բերէ, որ նախապաշարուած զիւղացիներին համոզէ, թէ ինքը վերջացրել է «ուշաբին» ու կարճ ճանապարհ է բաց արել. դրա համար զինուած մտաւ ձորը։ Մեծ եղաւ նրա զարմանքը, երբ տեսաւ, որ խաբուած է։ Կենդանին չկար տեղը. մի քանի քայլ առաջ գնաց և կանգ առաւ։ Նա արեան հետքեր նկատեց, փոքր ինչ առաջ գնաց ու նորից կանգ առաւ։ Նայեց ուշադրութեամբ և յանկարծակի գալով՝ իրեն մի ժայռի տակ շպրտեց ու վերջապէս դիրք մտնելով, հրացանն ուղղեց դէպի այն խիտ, մութ մորուտը, որտեղից լսւում էր վիրաւորուած գազանի ահռելի մռնչոցը։ Գազանը որոորդի հոտն առած՝ թփերն ու ցախերը ջարդ ու փշուր անելով՝ փնտռում էր նրան։ Այստեղ արդէն մահն սպառնում էր երկուսից մէկին։ Աբէլն ուրիշ անգամ էլ փորձուած լինելով վիրաւորուած գազանների կատաղութեանն ու վրէժխնդրութեանը՝ աշխատեց մի այլ աւելի ամուր դիրք գտել իրեն և այնտեղից պաշտպանուել։ Բայց մռնչող գազանը կատաղաբար նրան հասաւ և այլևս ժամանակ չտուաւ։ Հրացանը թնդաց և ազդրներից մինն ջարդուեց. սակայն տաքացած գազանը ոչինչ չզգալով՝ ահագին ուժով ընկաւ Աբէլի վրայ, ճանկերի մէջ առաւ նրան և սկսեց տրորելով քաշ տալ ու քարերին խփել կատաղաբար։ Դաշոյնը պիտի բան տեսնէր, սակայն պատեանից հանելու հնար չկար։

Կռիւը խիստ, սոսկալի և օրհասական էր։ Արջն այնպէս էր ջարդում ու տրորում նրան, որ կարծես թէ վրան ամենևին վէրք չունէր։ Արջն Աբէլին երբ մի կողմ շպրտեց և մինչև նորից իրեն հասնելը, նա չուխէն փաթաթեց աջ կռնովը և երբ նորից ճանկն ընկաւ, փաթաթած ձեռքը խրեց արջի բերանը։ Գազանը մոմռալէն ծամում էր նրա թաթն ու կուռը. որսկանը ձախ ձեռքով՝ մի կերպ դուրս քաշեց դաշոյնը և տակից խրեց սիրտը թէ չէ, կենդանին սոսկալի մռնչիւնով շուռ եկաւ մէջքի վրայ։ Վերջին հարւածը հասցրնելով ճակատին՝ տեղն ու տեղը բոլորովին ցրեց ամենի գազանին։

—Օ՜, ինչ անիրաւ արջ էր, յոգնած և շնչասպառ կանչեց Աբէլը. նա մէջքի վրայ ընկաւ գետին և երկար ժամանակ հանգըստանալուց յետոյ, վեր կացաւ ու սկսեց արջի կաշին քերթել։ Բացի կաշուից, արջի վրայից վերցրեց երեք փութ չաղութիւն, գլուխն ու թաթլիկները կապելով կաշի մէջ՝ շալակեց ու ճանապարհ ընկաւ եայլաղ։

Բոլոր ժողովուրդը մնացել էին զարմացած։

20.

Ահիս, մի սիրտը լիքը դարդ, յաւ,
Օր ու արև շրթանք.
Ամիս, մի կիանքը աւուղ անցաւ,
Աղիսարիկ բան չիմացանք։
Ժարուստ մարդիկ կուրմն-իմն
Աղիսարի ֆոխ սիղանից.
Մինի աղիսարի խորթ գոյիրն ինք,
Միկ փայ չկայ աղիսարիկ։
Խիղճ աղիսարի հոգին դուրս գայ
Քարիկ, հոգիկ հաց խամ,

Քիրով հայը հարարին դայ,
ժարուարն իրիկ, վայելէ:
Իսկ աղիարը դառը դարի,
Դարարկ նարի... Էյ, աղիարե,
Էլ ինչու Իս խարը բողնում
Քարի վրայ, խար-աղիարե:

---

21. Զինուած քուրդը

Թուրը, մի ջուխտ ատրճանակ, վահանը և նիզակը քրդի մարմնի անդամներն են. սրանք միշտ մնում են նրանից անբաժան. հրացանը նա գործ է ածում մեծ կռիւների մէջ։

Թամքած ձին, որ միշտ պատրաստ է նրա վրանի առաջ, քրդի հաւատարիմ ընկերն է. նրան սիրում է տէրն աւելի՝ քան իր կնոջն, աւելի՝ քան իր որդիներին։ Քուրդն իր վրանի մէջ հիւրասէր է որպէս Աբրահամ, բայց նա չի խնայելու կողոպտել նոյն հիւրին, եթէ նա կը հանդիպէր մէկ մդոն հեռու իր վրանից։ Արեան վրէժխնդրութիւնը, որպէս ամեն կիսավայրենի ցեղերի մէջ, նոյնպէս քրդի մէջ անցնում է սերնդից սերունդ։ Սպանուածը հանգիստ չէ իր գերեզմանի մէջ, քանի որ նրա արեան փոխարէնը չի առնուել սպանողից կամ նրա մօտ ազգականներից։ Սպանողն այն ժամանակ միայն ազատ է մնում վրէժխնդրութիւնից, երբ գնում է ոսոխի տունը, իր սուրը զցում է նրա ոտքի տակ և ներողութիւն խնդրում։ Բայց հազիւ կը գտնուէր մի քիւրդ, որ խոնարհուէր մինչ այս աստիճան ստորութեան։ Քիւրդը քինախնդիր է և ոխերիմ. նա մինչև մահ չի մոռանում վիրաւորանքը կամ անպատուութիւնը, քանի որ դեռ լիակատար բաւականութիւն չի ստացել։ Նա միևնոյն ժամանակ շատ հանգամանքներում հպարտ է և ազնիւ։ Քուրդը դադարեցնում է իր կռիւը, երբ հակառակ կողմից միջամտութիւն են գործ դնում կանայք։ Նա իրան չէ ստորացնում, պատերազմելով իրանից թոյլ արարածների հետ, թէև քրդի կինը կուի ասպարէզում նոյնքան կատաղի է և քաջասիրտ, որքան իր ամուսինը։

---

22. Քուրդը ձիու վրայ

Մանկութիւնից քուրդը կրթւում է ձիու ստնձ կառավարելու, զէնք գործածելու, մարմնամարզութեան և այլ ճարպիկութիւնների մէջ։ Դժուար է նկարագրել, թէ որքան ճարպիկ, որքան արագաշարժ է քուրդը, երբ նա ձի է հեծած։ Զին ամենայն արագութեամբ վազելու ժամանակ՝ քուրդը ճախարակի նման պտտւում է նրա ամեն կողմերը։ Երբեմն տեսնում ես, նա մի թռիչք գործեց, ձիու պարանոցովն անցաւ և կրկին նստեց թամբի վրայ։ Երբեմն տեսնում ես, նա իր ոտքերն ասպանդակի մէջ թողնելով, կռացաւ և գետնից հաւաքում է քար, փայտ, կամ իր ձգած նիզակը և նրանցով կարկտի նման մինը միւսի յետևից որմբակոծում իր հակառակորդին, որին հալածում է։ Բայց ձին

նոյն միջոցին արագ վազում է առանց կանգնելու։ Եւ գլխաւորը, որ միջոց է տալիս քրդին պատերազմել ձիու վրայ, այն է՝ որ նրա ձեռքերն ամենևին չեն զբաղուած իր նժոյգի սանձը կառավարելով. նա սանձը բոլորովին բաց է թողնում և իր ծնկների զանազան շարժմունքները բաւական են ցոյց տալու ձիուն իր ընթացքի ուղղութիւնը։ Եւ խելացի անասունն այն աստիճան վարժուած է, որ բոլորը հասկանում է և համարձակ զուշակում իր տիրոջ միտքը։ Այսպէս ձիաւորի ձեռքերն ազատ են մնում և նա կարողանում է իր ձին դէպի զանազան կողմեր պտտցնել և միևնոյն ժամանակ գործ ածել իր զէնքերը՝ հրացանն արձակել, լցնել, դարձեալ արձակել, թէև ձին անդադար շարժողութեան մէջ է։ Մի խօսքով՝ ձին և քուրդը գործում են որպէս մի մարմին։

Դիտեցէք այս պատկերը. ինչ է անում աղջիկը փիսիկին. ինչ է անում փիսիկն աղջկան. երրորդ պատկերի մէջ ինչ է անում աղջիկը. ինչ տեսակ վերնագիր կարելի է դնել։ Պատմեցէք և գրեցէք։

24. Աղուէսն ու գայլը

1.

Ուստա աղուէսն օյինբաղ,
Պոչը մազոտ, երկու գագ,
Իրան քաշած ձէն ու ձուգ
Ճամբին տուեց սուտ մեռուկ։
Թմբուկ-զուռնա ածելով,
Կարմիր գինի կոնծելով,

Տասը քսան ձիաւոր,
Ալ ու ալան հարսնեւոր
Մի նորահարս՝ նոր խաթուն
Տանում էին կեսրանց տուն։
Տեսան ճամբին աղուէսին,
Ընծայ տալին նոր հարսին,
Դրին հարսի գաւակը,
Բայց էն չարի գաւակը
Թուաւ, ելաւ շալակը,
Խուստ տուեց էն հարսին։
Հարսն էլ ասաւ աղուէսին.
—Աման աղուէս,
Աներես,
Ինձ մի անի
Սևերես.
«Լաւ, հարսիկ ջան, բաշխեցի.
Դէհ, ոսկիքդ տուր ինձի»։
Նորահարսն ամօթից
Ոսկիքը հանեց իր վզից։
Ուրախ—ֆըրլախ աղուէսը
Թուաւ գետին ու վրզզաց,
Միայն հարսն էր, որ սրզզաց։
Ցիսուն-վաթսուն, քչիցը,
Ոսկին կապած պոչիցը,
Մին ձախ, մին աջ,
Ցեռ ու առաջ չարաճճին
Վեր էր թռչում,
Պոչն էր պաչում,
Խաղ էր կանչում.
—Աման, աման,
այ աման.
Ով կայ, ով կայ
Ինձ նման։

Ելայ հարսի գաւակը,
Գաւակից էլ շալակը,
Ոսկիքն առայ
Ու փախայ,
Դէհ, աղուէս ջան,
Դէհ, խաղա։
Աղուէսն էդպէս առաջ, յետ,
Հա խաղում էր պոչի հետ.
Մի գէլ եկաւ դունչը խէտ,
Կուճին անմազ, վիզը փէտ,
Ասաւ. «Ասա, այ աղուէս,
Էսքան ոսկին որդից քեզ»։
—Գէլիկ,
Փէլիկ,
Լիճը տրուեց
Ինձ ընծայ.
Գնանք, կ'ուզես, գէլ բիձա,
Ամբողջ լիճը տամ ընծայ։
—«Որ էդպէս է,
Այ աղուէս,
Հեծի վրէս,
Տանեմ քեզ»։

2.

Աղուէսն հեծաւ գէլ բիձին,
Եկան՝ հասան էն լճին։
Գէլը ջրում պըպըզեց,
Պոչն արմատից ներս բզեց։
Աղուէսը թէ՝ «Գէլ, քեզ մօտ
Մին էլ կը գամ առաւօտ.
Տեղէդ չեմնես դու ըսկի,
Պոչդ թող լաւ սրտրզկի,
Որ դուրս հանի շատ ոսկի»

Մի ցուրտ օր էր յունուարի,
Գիշերն եղաւ մի տարի.
Երկինք,
Գետինք
Ճրկճրկաց,
Գէլը ցրտից
Վընգվընգաց,
Գոչեց.«Ոսկի, ճուկ պէտք չի»,
Պոչը քաշեց, որ փախչի,
Բայց ոբտեղից, էն լճից.
Լիճը կպել էր պոչից։

25.

Արիւնի ընկեր վարդան՝

Ախոռն, շայր ախոռն, որ Եւանդութ-անդ-
պատքառով չկարողացար դուրոց դալ։ Այսօր
շատ ուրախ անցա։ Ուսուցիչը սովորեցրեց
արգի և արգունկների երգը։ Նա մեզ բաժա-
նեց երեք խմբի։ Առաջին սեղանի առաջին
աշակերտ թադեոսին դարձրեց արգ։ Երկրորդ
երրորդ աշակերտներին նրա շատերը։ Արանք
մուր անպատուոն են ապրում, գանգ խնշոր,
ասլոր և այլ պղտուղներ են քաղում, ուրում
Ներկրորդ, երրորդ սեղանի չորրորդ Հինգերորդ
վեցերորդ, եօթներորդ և ութներորդ աշա-
կերտներից միանգամայն դարձրեց գիշատիներ,
մանավանդ երիսանք։ Արանք երեսանները
կախած, կողովները ձեռքերին գնում են
մուր անպատուոն գանգ խնշոր քաղելու։
Գրաբարը էր գրանել փոքրիկ վարդին
և վարոսին. մեկը երեսանն ուսին դրած,
մյուսը կողովն ձեռքին բռնած, գիշատիներ-
ների առաջից ու յետևից գնկրնկալով
վազում էին։ Արգունկները երբ մանունկներին
գրանում են, բակոյն թռչկոտում են
նրանց մօտ։ Մանունկներն այ, վայ կան-
չելով փախչում են։ Գիշատիներից
մեկը երեսանով, երկրորդը մանակով,
երրորդ, չորրորդը բաներով նրանց
փախցնում են։ Այս բոլորն ընկերնե-
բրա մեր առաջ ներկայացնում են,

իսկ մինչ իրգում ու ծաղի ինչ գալիս.
յիրոյ էլ նրանչ ին իրգում, մինչ ինչ
խաղում: Ջարդանա, պէրդէ ֆո ադի-
րով գիանիս, որ գրաշնիրա լաւ նասկանաա:
Հայաոր ընկերներդ ֆէկ. ղաոր յիղիցին,
ամէն էլ ղաոր բարևներ ին ուղարկում:
Ֆո ընկեր Թորգոմ.

---

26. Արագածի որսորդը

Ժամանակով մի որսորդ վերցնում է նետն ու աղեղը և գնում է Արագած լեռն որսի։

Լեռան կանաչ թիկունքի վրայ մի եղնիկ է որոճ անելիս լինում. որսորդը տեսնում է նրան, նա էլ որսորդին. տեսնելն ու փախչելը մէկ է լինում. որսորդն ընկնում է նրա յետևից. նա թռչում է քարից քար, որսորդն էլ յետևից. մէկ էլ եղնիկը մի բարձր ժայռի ծայրին մոլորված կանգ է առնում. ինչ անէ խեղճն. առջևն անտակ անդունդն է խորանում, յետևն անգութ որսորդն է ընկած, նետն ու աղեղը լարած պատրաստ, ազատիլ անհնար է. կամ պէտք է որսորդի նետից մեռնի, կամ անդունդն ընկնի, հազար կտոր լինի։

Որսորդը հասնում է և նշան բռնում. եղնիկը մի հրաշքով լեզու է առնում և ասում է.—«Ա՛յ մարդ, խղճի արի, մեղք եմ, երեխաներ ունիմ, անօթի կը մեռնեն ձագուկներս, որբ ու անտէր ձագուկներս»։

Որսորդը չի լսում աղաչանքն ու նետն արձակում է. նետը թռչում, քարի է դիպչում. որսորդը նորից նշան է բռնում։

Եղնիկը լալով աղաչում է նորից.—«Դու երեխայ չունիս, դու սիրտ չունիս, անգութ-անխիղճ մարդ»։

Այնպիսի մորմոքելի ձայնով է ասում խեղճ եղնիկը, որ ժայռի սիրտը մղկտում է, իսկ որսորդի սիրտը դառնում է քարից քար։

Ու երբ որսորդն ուզում է նորից նետն արձակել, եղնիկը չուզելով անգութ մարդու ձեռքն ընկնել, ապաւինում է առուելի անդունդին, վազ է տալիս ու իրեն ձգում է ժայռից ցած։

Ժայռը գթոտ ձեռները տարածում է, քնքուշիկ բռնում է եղնիկին հանդիստ, ապահով իջեցնում է անդունդի յատակը; դալար հովտի մէջ կանգնեցնում, ասես թէ՝ եղնիկը կանաչ թուփից՝ կանաչ թուփի վրայ է ցատկել։

Որսորդը կատաղած վազ է տալիս եղնիկին բռնելու և ոտքը սայթաքում է ու ժայռից գլխիվար գլորում. ժայռը հղօր բազուկներով ամուր բռնում է որսորդի ոտներից ու էլ բաց չի թողում։

Ասում են, այն օրանից մինչև այսօր որսորդը ժայռից կախված է գլխի վար։

---

27. Խորամանկ կապիկը

Գիւղացին մածնի մի քանի կճուճ իշուն բարձած՝ իր կապիկի հետ եկաւ քաղաքը։

Նա քաղաքի մէջ, մի բանուկ փողոցում, ծառից կապեց էշը, մածնի կճուճները դրեց ծառի սուերի տակ, ինքն էլ նստեց այնտեղ։

—Ա՛յ լաւ մածուն առնող, ա՛յ լաւ մածուն առնող, անդադար գոչում էր նա, անցնող-դարձողի ուշադրութիւնն իրեն գրաւելով։

—Եթէ լաւ մածուն է, մի-երկու կճուճ բեր այստեղ՝ տեսնենք, պատշգամբից ձայն տուեց մի կին։

Գիւղացին վերցրեց մի երկու կճուճ և մտաւ այդ կնոջ տունը։

Այդ միջոցին կապիկը, երբ մնաց մենակ, բաց արաւ մածնով լիքը կճուճն, արագ արագ կերաւ, լափլփեց բոլոր մածունը և երբ վերջացրեց, մածնոտ թաթը քսեց իշու քթին ու շրթունքներին. ապա դատարկ կճուճը դրեց իշու տակին, ինքն էլ բերանը սրբեց, նստեց իր տեղը։

Գիւղացին երբ վերադարձաւ ու տեսաւ դատարկ կճուճը, իշու մաճնոտ բերանը, շատ բարկացաւ, վերցրեց փայտը և սկսեց խեղճ անասունին տուր թէ կը տաս. էշը մեռցել էր շարած՝ չհասկանալով բանն ինչումն էր։

Դիմացի խանութում եղած մարդիկ, որ կապիկի արածը մէկ մէկ տեսել էին և ծիծաղից թուլացել, խղճահարեցին ու յայտնեցին գիւղացուն, ինչ որ եղել էր։

Այս անգամ գիւղացին յարձակուեց կապիկի վրայ, բայց դեռ մի երկու հատ չէր խփել, որ կապիկը դուրս պրծաւ նրա ձեռից, կանգնեց փողոցի մէջտեղը և սաստիկ կատաղած՝ քարեր էր շպրտում այն խանութի մարդկանց վրայ, որտեղից մարդիկ մատնել էին իրեն։

Ոչ ոք սիրտ չէր անում վրիժառու կապիկին մօտենալ, միայն տէրը համարձակութիւն ունեցաւ կամաց կամաց դնալ մօտը՝ քաղցր դէմք ցոյց տալով։

Կապիկը հանգստացաւ, բռնեց տիրոջ փէշը և յետոյ բաղմելով իշու վրայ՝ առաջ-վառաջ գիւղ վերադարձաւ։

28.

Գիրքն արագիլն, ինչպէս բանդարկուած,
Քարշը պարսպի յերկնի է փակուած.
Կուզէր նաև թռչել ու անցնել ծովը,
Բայց, ափսոսս, խիղճի խուզած է թևը։

---

29. Ջրի կաթիլի ճանապարհորդութիւնը

1.

—Ա՜խ, ինչպէս կուզեմ վերև բարձրանալ, վերև, շատ վերև, էն սարի գլխուն, էն ամպի մօտն, արևի քովն, աստղերին հասնել, առաց մի կաթիլ։

—Ես էլ եմ ուզում, ես էլ եմ ուզում, ձայն տուին ծովից ջրի շատ կաթիլներ. վերև բարձրանալ, վերևից նայել, թէ ինչ կայ էստեղ՝ աշխարհի վրայ։ Էնտեղից տեսնել սարեր, ձորեր, դաշտեր, անտառներ, քաղաքներ, ծովեր. ա՜խ, ինչ լաւ կը լինէր։

2.

Արևը լսեց, տաք տաք ճառագայթներ ներքև ուղարկեց, ջրի կաթիլներին նա վերև կանչեց։

Մէր կաթիլները քիչ քիչ տաքացան, անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան։ Նրանք բարձրացան, շատ շատ բարձրացան, սարերից վերև, ամպերին մօտեցան։

—Էս ինչպէս բան է, ասաց կաթիլն. էսչափ բարձրացայ, էսչափ վեր եկայ, հէչ բան չտեսայ։

—Ափսոս, շատ ափսոս, որ շատ յոգնեցի, ասաց ուրիշը. ես էլ չեմ կարող վերև բարձրանալ։

—Էստեղ շատ ցուրտ է, ասացին միւսները. շատ շատ դժուար է վերևում ապրել։

—Այո, այո, ձայնեցին ամենքն. ինչ լաւ կը լինէր, առաջուայ նման ներքևում լինէինք։

3.

Արևը լսեց, ցուրտ քամի ուղարկեց։

Գոլորշիները քիչ քիչ մրսեցին, կուչ ու ձիգ արին, իրար մոտեցան, քիչ քիչ խառնվեցան, անասնելի դարձան։

—Ինչ մութ ամպեր են, ասացին մարդիկ։

4.

Քամին սաստկացավ, սև, մութ ամպերն իրար մոտեցան։

—Էս ինչպես ցուրտ է, ինչպես քամի է, ասացին նրանք՝ կաթիլներ դարձան։

—Ա՛յ, հիմա լավ է, ասաց կաթիլը. այժմ ամեն ինչ ես լավ տեսնում եմ։

—Մենք էլ ենք տեսնում, մենք էլ, կանչեցին բոլորը։

—Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ, ասաց կաթիլը. ինչպես լավ եղավ, որ կաթիլ դարձանք։

Մեր կաթիլները զրույց անելով՝ հանդիսավ ու հանդարտ ներքև են իջնում։

—Ինչ լավ անձրև է, ասացին մարդիկ։

5.

Խումբ խումբ կաթիլներ սարերի վրայից գոռում—գոչիւնով ներքև են վազում. ներքև են վազում, հողը պատառում, ծառեր, ծաղիկներ քոքահան անում և առաջ գնում։

—Ինչ վատ հեղեղ է, ասացին մարդիկ։

—Ես շտապում եմ, շուտ ճամբայ ուէք, ասում էր հեղեղը և առաջ գնում. այսպէս նա գնաց, շատ առաջ գնաց, հասավ մեծ գետին։ Հեղեղն այստեղ շուտով կուլ գնաց և հանդարտ հոսեց։

Մարդիկ նավերով ապրանք են տանում ջրի երեսով. ապրանք են տանում քաղաքից քաղաք, ապրանք են տանում ծովի այն կողմը։

Մեր կաթիլները վերջապէս հասան իրանց մօր գիրկը։

—Բարով եկաք, իմ կաթիլներ, ասաց ծովը։

Էն ինչն է՝
Կաթնաղբիւրից ջուր է խմում,
Արիւն ծովից ձէն է հանում։

---

30. Հովի դարձը սարից

Մնաք բարով, մարգեր,
Արօտներ փայլուն.
Ամառն անցկացավ,
Հօտը գնում է տուն։

Մենք էլի կը գանք, կը բարձրանանք սարը,
Երբ թռչունների զարթեն երգերը,
Երբ ծաղիկները ծածկեն երկիրը,
Անուշ մայիսին վազեն ջրերը։

Մնաք բարով, մարգեր,
Արօտներ փայլուն.
Ամառն անցկացավ,
Հօտն իջնում է տուն։

---

31. Թրդի կարծիքը գրի մասին

1.

—Հասօ, տար այս նամակը և տասը դասը ազային տուր, ասում է տէրն իր քուրդ ծառային։

Առաջին օրը Հասօն հասնում է տունը և ուզում է մի գառն անուշ անել. որպէս զի գողութիւնը չբռնուի, նամակը տանում, գոմում թաղցնում է, որովհետև «թղթերն աչքեր ունեն, կը տեսնեն և կը խօսեն քաղաքացիների հետ», մտածում էր քուրդը։ Այդ գիշեր գառը մորթում է, մի լավ քէֆ է անում։ Միւս օրը մնացած գառները նամակի հետ յանձնում է ազայի ծառաներին։

—Ճիշտ տասը հատ է, հարցնում է ազան ծառային։

Ո՛չ, տէր, ինքը գառ է բերել։

Ազան զուրս է գալիս և հարցնում է բերող քրդին.

—Քեզ տասը գառն են տուել, իսկ դու ինն ես բերել, ուր է մէկը։

—Այո՛, տէր իմ, բոլորն էլ այստեղ են։

—Բայց դու ինքը հատ ես բերել։

—Այո՛, տէր, ինքը։

—Բայց քո բերած թուղթն ասում է՝ տասս հատ է։

—Այդպէս է, տէր, տասը հատ է, բոլորն էլ այստեղ է։

—Քուրդ, եթէ բերածդ տասը զատը տասը մարդու վրայ բաժանենք, ամեն մէկին քանի կ'ընկնի։

—Մէկ մէկ հատ, տէր։

—Որ այդպէս է, համարիր այստեղ կանգնած մարդկանց և ասա, քանի հոգի են։

—Ութը, տէր։

—Մէկն էլ դու՝ ինքը, մէկն էլ ես՝ տասը, հիմա իւրաքանչիւրը մէկ մէկ բռնեցէք։

Ամենքը բռնում են։

—Տեսնում ես, որ ես չունեմ, ասում է ագան. հապա ինն ուր է։

—Ա՜խ, ասում է քուրդն ինքն իրեն. «Եթէ ես իմանայի, էդ նամակի հոգին կը հանէի»։ Յետոյ դառնալով ագային՝ ասում է.

—Ես գիտեմ, տէր, քեզ այդ սատանայ նամակն է տալ, թէ ես... Բայց ես ինչ անեմ, թող դու էլ քո բաժինը բռնէիր։ Ագան ծիծաղում է քրդի միամիտ պատասխանի վրայ։ Նա ուրիշ նամակ է տալիս քրդին, որ տանի տիրոջը տայ։

2.

Քուրդը կարծելով թէ նոյն նամակն է, ճանապարհին քարի տակ դնելով՝ մի լաւ ծեծում է, ասելով. «Էլ մատնութիւն չանես, եթէ ոչ հոգիդ կը հանեմ»։

Երբ քուրդը տեղն է հասնում, նամակը տալիս է տիրոջը։

Տէրը բարկացած հարցնում է.—Ինչու ես նամակը քարով ծեծել։

—Ես չեմ ծեծել, տէր։

—Ինչպէս թէ չես ծեծել, երբ պարզ երևում է։

—Տէր, ես ահագին մարդ եմ, ինձ չես հաւատում, այդ մի կտոր թղթին ինչպէս ես հաւատում։

—Աստուծոյ անպիտան, ասում է տէրն. այս նամակը քարով այնչափ ես ծեծել, որ գրերը չեն կարդացուում։

—Տէր, այսինքն այդ գրի լեզուն առնուած է։

—Այո՛, այո՛։

—Որ լեզուն առնուած է՝ այդչափ բաներ է ասում, եթէ առնուած չլինէր, ով է իմանում, ինչ սաեր պիտի խօսէր, ասում է քուրդը։

Արիւնի գոյրիկ!

Մայիսի 1-ին առաւօտեան մի-գ տարան դաշտ զբօսնելու։ Ճանապարհին մինչ երգելով, վազելով, խօսելով գնում էին։ Արիւգակն էլ ուրախ փայլում էր և մի-գ լաւ ուրախացնում էր։ Դաշտի մէջ սրաշում էր ոչխարի հօտը, իսկ աւուր ափին գառների և ուլիկների հօտը։ Արիւնիկ ուլիկները, փոքրիկ գառները ուրախ, վազելով թռչկոտում և սրաշում էին։ Ցոյն գոյն ծաղիկների հոտից մինչ շէին կշտանում, մանուշակի հոտն ամենից դուրեկանէր։ Անտառում մինչ ծաղիկներ, երիկոյեան դէմ ծաղիկների փունջեր կապեցինք և առաւօտուայ նման ուրախ տուն վերադարձանք։ Որքան լաւ, որքան

ուրախ էր այդ օրը: Ահա այսպէս վէր-
զնայաւ մէր գրօսանքը:
Նամակս կարդա, մայրիկիս, հայրիկիս և
քոյրիկս մօր. ասա, որ իմ շատ լաւ է:
Շատ բարևներ արա ամէնին:

Քո Յարութին

20 Մարտի 1912
Երևան

---

33. Ջան, ա՛յ լուսին

Լուսինն ելաւ էն սարից,
Սարի բարձր կատարից,
Շէկլիկ-մէկլիկ երեսով
Փուեց գետնին լուսի ծով:
—Ջան, ա՛յ լուսին,
Ջան քո լուսին,
Ջան քո կլոր
Շէկ երեսին:

Խաւարն իսկոյն չքացաւ,
Ու էլ գետնին չկացաւ,
Լուսնի լուսից հալածւած՝
Խոր ձորերի մէջ մնաց:
—Ջան, ա՛յ լուսին,
Շէկլիկ լուսին,
Ջան քո արծաթ,
Կամար ուսին...

Բայց ամպերը մոլեգին
Նախանձեցին լուսնիկին,
Ելան երկինք կապուտակ՝
Լուսինն առան իրենց տակ:
—Ջան, ա՛յ լուսին,
Խաւրած լուսին,
Ջան, կ'սպասենք
Մենք քո լուսին:

---

34. Ռօբինզօնը կղզու վրայ

Ռօբինզօնն երբ ուշքի եկաւ, տեսաւ, որ ծովափին մենակ ընկած էր: Նրա բոլոր ընկերները ծովի ալեկոծութեանը զոհ էին գնացել, նաև էլ խորտակւել, ոչնչացել էր:

—Ինչո՞ւ ես ազատւեցի, ի՞նչ օգուտ, երբ հիմա քաղցից պէտք է մեռնեմ, կամ վայրի գազաններին կերակուր դառնամ: Նա յուսահատ ընկած էր ծովափին. քաղցն ու ծարաւն էլ տանջում էին նրան: Յանկարծ տեսաւ մի ձկնկուլ, որը կլոցում ձուկ բռնած թռչում էր:



—Մի՞թէ ես էլ չեմ կարող ծովափին ձուկ կամ մի այլ կենդանի գտնել, քաղցս յագեցնել, մտածեց նա և վեր կացաւ: Շատ չէր գնացել, երբ յանկարծ կանչեց.—Խեցգետին, ասաբէ. նա վրայ պրծաւ, կերաւ, քաղցը յագեցրեց: Երբ մութը ընկաւ, մի ծառ բարձրացաւ և գիշերն այնտեղ անցկացրեց: Այնպէս աբաւ մի քանի օր և վայրի գազաններից ազատւեց:

Վերջապէս մօտիկ լեռան վրայ մի այր գտաւ ու այնտեղ մնաց: Ռօբինզօնը չոր խոտ հաւաքեց, անանկողին պատրաստեց և հանգիստ քնեց:



Դիտեցէք այս պատկերներն. ինչու է աքաղաղը կանչում. ինչ է անում մանուկն երկրորդ պատկերի մէջ. ինչ պատրաստութիւն է տեսնում մանուկը, վերջն ուր է գնում։
Պատմեցէք այս պատկերը, վերնագիր դրէք և գրեցէք։

36. Կկուն եւ տատրակը

Ծառի վրայ տխուր կկուն
Հա կրկնում էր անվերջ
կու-կուն.
—Կկու քուրիկ,
Հերիք, հերիք,
Կու-կու անես,
Հոգի հանես։
—Ա, բախտաւոր ընկեր
տատրակ,
Սիրուս լինէր գրած տատրակ,
Մի կարդայիր ամէն էջը,
Տեսնէիր թէ ինչ կայ մէջը։
Դու չես տեսել
Զիգրի մրմուռ,
Դու չես չափել
Արցունք բուռ-բուռ,
Դու չես թափել
Ցաւից փետուր։

Երնէկ հաւին,
Ինձից լաւին,
Բաղին, սագին...
Զագերն անգին
Հեռանում չեն
Մօրը մօտից,
Ոնց որ կապեն
Ոսը ոտից։
Իմ ձագերը
Սիրուն, սիրուն,
Բայց որ մօրը
Հէչ չեն սիրում։
—Կկու քուրիկ,
Թէ որ ճիշտ է,
Սիրող մօրը
Սաստիկ վիշտ է,
Ես լինէի,
Տանիլ չէի,
Այ, ցեղակից,
Էսքան կսկիծ,
Զիգրի մրմուռ,
Արցունք բուռ-բուռ.
Թափիլ չէի
Ցաւից փետուր,
Ինձ կը տայի
Մի սուր փշի,
Ինձ ամեն օր
Չէի մաշի։
Բայց, քուրիկ ջան,
Միշտ կը գիտեմ
Ու լաւ գիտեմ,
Գարուն, ամառ,
Միշտ անդադար
Թռչկոտում ես
Հա ծառից ծառ.
Ոչ ուն ունես,
Ոչ բուն ունես,
Էլ ո՞ւրտեղ դու
Ածեցիր ձու,
Զագ հանեցիր,
Թևեր տուիր,
Ու թռոցրիր։
—Խելքից դատարկ,
Ցանցառ տատրակ,
Նախանձ, չկամ,
Բա ման չգամ։
Ի՞նչ, գարունը
Ծալապատիկ
Ընկնեմ բունը
Հա տիկ-տիտիկ,
Պատռեմ սրտիկ։
Քիչ կան դաշտում
Այլոց բներ,
Նրանց մէկում
Դրի ձուեր։
—Էդ է, կկու,
Որ չի
Լինի
Մինդ երկու։
Ով չունենայ
Իրա բունը,
Ձածի ձուան,
Նստի վրան,
Հոգս չտանի,
Ձագ չհանի,
Վերջը քեզ պէս
Կու-կու կ'անի։

Էն ինչ՝ է
Որչափ շատանայ,
Այնչափ խաղցրանայ,
Որչափ ծիրանայ,
Այնչափ կծրանայ։

---

38. Ռոբինզոնի գիւտերը

ա—կոկոսենին է, բ—արմաւենին.

—Էս ինչ ծառ է, ինչ մեծ մեծ պտուղներ ունի, զարմացած ասաց Ռոբինզոնը։ Դրանք երեխայի գլխի մեծութեամբ կոկոսընկոյզներ էին։ Ռոբինզոնը մէկը կտրեց և համտես արաւ։ Շատ լաւ է, խիստ համով է, ասաց ինքն իրեն. ընկոյզն ուտելիք կ'անեմ, կեղևն էլ ջրաման։ Այսպէս մտածելով, նա մի քանի հատ պոկեց և տարաւ։

—Ի՞նչ լաւ խուրմա է, իսկ և իսկ Բաղդադի խուրմա, ուրախութիւնից գոռաց Ռոբինզոնը և ամեն օր քաղում, տանում էր։ Մի անգամ էլ տեսաւ մի ուրիշ ծառ, նրա ճիւղերը կանեփի թելի նման կախուած էին։—Մի՞թէ սրանից չի կարելի թել քաշել և պարան շինել, ասաց Ռոբինզոնը։ Այդ բոյսից քաղելով՝ մի քանի օր ջրի մէջ դրեց, լաւ թրջեց, յետոյ արևի տակ կախեց, չորացրեց, երբ փայտով ծեծեց, բարակ ու երկայն թելերը դուրս թափուեցին։

—Հիանալի է, հիանալի, մտածեց Ռոբինզոնը և նրանից բաւական թել և պարան հիւսեց։

Օրերի կարգը չմոռանալու համար Ռոբինզոնը մտածեց օրացոյց շինել. ինչ անէր, երբ թանաք, թուղթ, գրիչ չունէր. մտածեց, մտածեց՝ հնարը գտաւ։ Նա չորս ծառ ընտրեց. ամեն երեկոյ մէկի վրայ սուր քարով մի գիծ էր քաշում. սա նշանակում էր, թէ մի օր անցաւ. այս տեսակ եօթը գիծը ցոյց էր տալիս՝ թէ շաբաթը լրացաւ. սրանից յետոյ երկրորդ ծառի վրայ մի գիծ էր քաշում. սա էլ նշանակում էր մի շաբաթ, երբ այս ծառի վրայ չորս գիծ է լինում, երրորդ ծառի վրայ նշան էր անում՝ այսինքն մի ամիս եղաւ. իսկ երբ այս ծառի վրայ տասներկու գիծ էր քաշում, չորրորդ ծառի վրայ մի նոր նշան էր դնում՝ այսինքն թէ տարին լրացաւ։

---

39. Պատկեր

Սիրուն գիշեր...
Լուսնի շողեր
Պար են բռնել
Ջրի հետ.
Գետն է հոսում,
Օրօր ասում,
Փսփսում է
Լուսնի հետ։

Մեղմիկ քամին
Փարուում ջրին,
Խաղ է անում
Գետի հետ.
Արծաթ ջրեր,
Լուսնի սուեր,
Համբուրուում են
Իրար հետ։

---

40. Նապաստակներ

Նապաստակներն ամբողջ ցեղով
Անտառի մէջ արին ժողով,
Եւ ժողովում մի ծեր շղթիկ
Ասաւ. «Լսէք, մեծ և պատիկ.
Շունը հաչէ,
Քամին փչէ,
Ամպը գոռայ,
Մուկը ճռռայ,
Օձը սողայ՝
Մեր էս ցեղը
Հա՛ կը դողայ։
Էսպէս ապրել չի կարելի
Էս աշխարհում չարերով լի.
Զարն ու բարին աշխարհի հետ
Թողնենք, գնանք, թափենք
մի գետ»։
Շղթիկները ոչ էս, ոչ էն,
Երան ընկան մահի ճամբէն,
Հէնց որ եկան գետին մօտիկ,
Էն գորտերը մեծ ու պատիկ
Խառնիխուռոր
Թափան ջուրը։
Իսկոյն էդտեղ մի այլ շղթիկ՝
«Դարձէք, կանչեց, պապիս որդիք։
Էլ մի կախէք ձեր քթերը
Մեզնից վախկոտ են գորտերը»։

---

41. Խալիֆի դատաստանը

Բաղդադում ապրում էր մի անուանի սափրիչ Ալի Սաղկալ անունով։ Նրա գործն այնչափ յաջող էր գնում, որ նա կամաց կամաց սկսեց հպարտանալ ու գոռոզանալ, այնպէս որ բացի բէգերից

ուրիշ ոչ ոքի չէր ցանկանում սափրել։ Մի օր, մի խեղճ փայտահատ, իր էշի վրայ բարձած մի բեռ փայտ, բերեց նրան ծախելու։ Ալի Սաղկալը մի գին նշանակեց հեռանալ խօսքերով.

—Այս գինը տալիս եմ էշի վրայի բոլոր փայտերի համար։

Փայտահատը համաձայնեց, բեռը վայր ձգեց և պահանջեց խոստացած գինը։

—Դեռ բոլոր փայտը վայր չես ձգել, ասաց սափրիչը.—դու պէտք է տաս ինձ նաև համեստը (համեստը շինուած է լինում փայտից), որովհետև մենք այդպէս պայմանաւորուեցինք։

—Այդ ինչ ես ասում, ասաց փայտահատը շլարած։—Ե՞րբ է տեսնուել այդպիսի առեւտուր։ Ո՛չ, այդ անկարելի բան է։

Շատ խօսքերի փոխանակութիւնից յետոյ սափրիչը բռնի կերպով վերցրեց համեստը էշի վրայից և հեռացրեց խեղճ գիւղացի փայտահատին։

Անճարացած՝ գիւղացին գնաց դատաւորի մօտ և գանգատուեց. դժբաղդաբար այդ դատաւորը Ալի Սաղկալի մուշտարիներից մէկը լինելով՝ չուզեց լսել նրա գանգատը։ Նա դիմեց բարձրագոյն դատաւորին, սակայն այդտեղի դատաւորն էլ պաշտպանեց սափրիչին։ Գիւղացին չյուսահատուեց։ Նա խսկոյն գնաց գրագրի մօտ և գրել տուեց մի խնդրագիր խալիֆին ներկայացնելու համար։ Խնդրագիրը մատուցեց և փայտահատը կանչուեց խալիֆի մօտ։

—Բարեկամ, ասաց խալիֆը, պայմանները պէտք է անպատճառ պահուին։ Դու համաձայնել ես սափրիչին տալ էշիդ վրայի համբողջ փայտը, և նա յանցաւոր չէ, եթէ վերցրել է համեստը, բայց...

Խալիֆը գիւղացուն իր մօտը կանչելով՝ մի ինչ որ բան փըսփրսաց նրա ականջին։

Մի քանի օրից յետոյ գիւղացին գնալով Ալի Սաղկալի խանութը իր էշի երասանից բռնած՝ խնդրեց նրանից սափրել իրեն և իր ընկերին։ Սափրիչը որոշեց մի վճար, գիւղացին համաձայնեց։ Նա սկսեց սափրել նրան և երբ վերջացրեց, ասաց գիւղացուն.

—Շուտ արա, ուր է ընկերդ, դէ, ասա՝ շուտ ներս գայ։

Նա դուրս գնաց և իր էշի երասանից բռնած ներս մտաւ՝ ասելով.

—Ահա՛ իմ ընկերը. դու պիտի սափրես սրան էլ։

—Սափրեմ գրան էլ, գոռաց սափրիչը. բաւական չէ՞, որ ես գիշել եմ քեզ պէս մի մարդու սափրել, դու համարձակւում ես խնդրել ինձանից սափրել և քո էշին։ Կորիր. կորիր, եթէ ոչ՝ երկուսիդ էլ ջհաննամը կ'ուղարկեմ։

Եւ նա դուրս հրեց երկուսին էլ։

Խեղճ փայտահատն անմիջապէս գնաց խալիֆի մօտ և պատմեց եղելութիւնը։

—Այս բոպէիս ինձ մօտ բերէք Ալի Սաղկալին իր ածելիներով, հրամայեց նա իր ծառաներին։

Տասը բոպէից յետոյ սափրիչը ներկայացաւ։

—Ինչո՞ւ դու չես սափրում այս մարդու ընկերին, հարցրեց խալիֆը. չէ՞ որ դու համաձայնել ես նրան էլ սափրել։

Ալի Սաղկալը համբուրելով գետնին՝ ասաց.

—Ո՛վ խալիֆ, ճշմարիտ է, որ ես համաձայնել եմ, սակայն ով կարող էր երևակայել, թէ սրա ընկերը մի էշ է։

—Դու լաւ ես ասում, ասաց խալիֆը. բայց ես էլ պիտի քեզանից հարցնեմ, թէ երբ է լսել կամ տեսնել, որ փայտ գնողը իրաւունք ունի էշի համեան էլ վերցնել որպէս գնած փայտի մի մասը։ Ո՛չ, ոչ, աղա սափրիչ. այժմ այս խեղճ գիւղացու հերթն է, և ես հրամայում եմ քեզ սափրել էշին։

Սափրիչը պարտաւորւեց պատրաստել մի մեծ ամանով օճառի փրփուր, որով նա տրորեց էշի ամբողջ մարմինը և սկսեց սափրել նրան խալիֆի և ամբողջ դատարանի առջև՝ յարուցանելով բոլորի ծիծաղը։

Փայտահատը հեռացաւ մի լաւ ընծայ ստանալով և ամբողջ Բաղդադում տարածւեց հաւատացեալների պետի արդարադատութեան լուրը։

Թոչուններ

Մի թոչուն կայ պապլիկ,
Մարմին ունի կլորիկ,
Կզուլը կարճ ու հատիկ
Փիթկում է սիրունիկ։
Մի թոչուն կայ ապիրատ,
Վիզն երկար ու բարակ,
Ոտներեը ցիգ, այլանդակ,
Թռիչ ունի համարձակ։
Մի թոչուն կայ զուր չոր,
Պանկալի գարուն բերող,
Որտ է անում թոչելով,
Բունը շինում մարդկանց քով։
Մի թոչուն կայ կչկչան,
Ինչն երկար փրմփրան,
Թէ որ դրկէ վարժարան,
Կը խօսի մարդու նման։

Մի թռչուն կայ կռաւան,
Զգոյշ է գողի նման,
Գիշակեր է, անկշտում,
Մարդիկ նրան չեն սիրում։

Մի թռչուն կայ հաւի չափ,
Սիրած տեղն է լեռ քարափ,
Համեղ միս է տալիս մեզ,
Լաւ երգում է, բայց անտես։

Մի թռչուն կայ ամպերում,
Նա արքայ է հաւքերուն,
Բուն է շինում ժայռերում,
Հորթ ու գառ է փախցնում։

Մի թռչուն կայ հորթի պէս,
Ոտներ ունի գաղ ու կէս,
Անապատում արևկէզ՝
Վազ է տալիս ձիու պէս։

Հիմի գտէք՝

Ո՞րն է ծիտն ու կաքաւ,
Արծիւ, ջայլամ, չար ագռաւ,
Արագիլն ու կաչաղակ,
Մեր սիրելի ծիծեռնակ։

Դիտեցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և գրեցէք։

44. Ռոբինզոնի ճանապարհորդութիւնը և նոր գիւտերը

1.

Ծովափում ոստրէներ քիչ էին գտնւում. կոկոսի ընկոյզն էլ պակասել էր. քաղցած չմնալու համար Ռոբինզոնը որոշեց իր կղզին ման գալ և ուտելու բան գտնել։ Նա զէնքեր չունէր, որ վայրի գազաններից պաշտպանուէր. շատ մտածեց, հնար չգտաւ։ Մի օր էլ մտածելով գնում էր, յանկարծ սուր սուր ծայրերով, կլոր անցքով մի քար տեսաւ։—Սա ինձ համար լաւ կացին կը լինի, մտածեց նա. իսկոյն ծառի ճիւղից մի կոթ շինեց և կացինը պատրաստ էր։ Քարերի մէջ ման գալով գտաւ նրման քարեր. դրանցից էլ մեծ ու փոքր մուրճեր, տէգեր շինեց։ Փափուկ ճիւղերը կռացնելով աղեղ պատրաստեց և թելով կապեց. սուր սուր քարերից և փայտերից նետեր շինեց. այսպիսով նետ ու աղեղ էլ պատրաստեց։

Շողից պաշտպանուելու համար ծառի փափուկ ճիւղերից շրջանակ շինեց, կոկոսի լայն տերևներով ծածկեց, ձկան փշերով ամրացրեց և հովանոց պատրաստեց։ Մնում էր ճանապարհորդական պարկը. Ռոբինզոնը դրա հնարն էլ գտաւ. պարանից մի պարկ հիւսեց և վիրը գցեց։ Ամեն ինչ պատրաստ էր. հետևեալ օրը մի քանի կոկոս հետն առաւ, զէնքերով զինուեց, հովանոցը գլխին բռնած՝ դուրս եկաւ ճանապարհորդելու։ Բուսական գնաց, մէկ էլ կանգնեց փոքրիկ թփերի առաջ և ինքն իրեն հարց տուեց.

—Էս ինչ տեսակ մանրիկ, կանաչ խնձորներ են այս թփերի վրայ. իսկ ապա սրանց կապոյտ ու սպիտակ ծաղիկները... Ռոբինզոնը խնձորներից մէկը կծեց.—Ի՞նչ անհամ է, բարկութիւնից նա ամբողջ թուփը պոկեց և դէն շպրտեց։ Օ՜հ, այս ինչ գնդեր են

սրա տակից կախված. չլինի՞ այս թուփի պտուղները սրանք են, ասաց ու կծեց. սա էլ անհամ է. ուզում էր բոլորը թափել, բայց մէկ էլ մտածեց և մի քանի հատ պարկի մէջ դցեց ու առաջ գընաց։

Շատ չէր գնացել, երբ սարսափից մի քարի տակ քարացած կանգնեց. Ռոբինզոնը ծածուկ նայեց և ինչ տեսաւ։ Եղջերուի նրման մի խումբ կենդանիներ խաղալով ու ցատկոտելով գալիս էին։ Սրանք լամաներ էին։ Ռոբինզոնը սաստիկ ցանկացաւ միս ուտել. նա կացինը ձեռին սուս փուս կանգնեց և սպասեց. հէնց որ մի լամայ այդ կողմով անցաւ, գլխին խփեց։ Լաման ընկաւ. Ռոբինզոնն ուրախ ուրախ ուսին դրեց և տուն դարձաւ։ Շատ չէր գնացել, երբ գոռալով կանչեց.—Լիմոններ, լիմոններ. վրայ հասաւ, մի քանի հատ քաղեց, զամբիւղն ածեց և շարունակեց գնալ։

—Բայց ես ինչպէս խորոված անեմ, երբ կրակ չունեմ, հառաչելով ասաց Ռոբինզոնը։ Նա լսել էր, որ վայրենիներն երկու փայտ իրար քսելով, կրակ են ստանում. ինքն էլ փորձեց, չարչարուեց, չարչարուեց՝ չյաջողուեց։ Ռոբինզոնը տխուր տրտում կաշին քերթեց, ապա փռեց, որ չորանայ։

2.

Գիշեր էր. ամպերը խիստ գոռում էին, կայծակները փայլում։ Ռոբինզոնը քնից վեր թռաւ և չկարողացաւ հանգստանալ։

—Ինչ սարսափելի գոռոց է, ինչ խիստ անձրև է, մտածում էր Ռոբինզոնը։ Գոռոցը քանի գնում աւելի ու աւելի սաստկանում էր։ Մէկ էլ կայծակի մի զօրեղ ճայթիւն կարծես գլխի վերևում տրրաքաւեց։ Ռոբինզոնն ուշաթափուեց. լոյսը բացուել էր, երբ ուշքի եկաւ և այրից դուրս փախաւ։

—Տէր Աստուած, այս ինչ կրակ է, կանչեց Ռոբինզոնը և վազեց դէպի իր բնակարանի մօտ գտնուած ծառը։ Նա իսկոյն հասկացաւ, որ գիշերուայ կայծակն է խփել. ծառը մոմի պէս բոցավառուում էր։ Ռոբինզոնը լաւ կրակ արաւ, լամայի միսը խորովեց և համով խորոված կերաւ։ Այդ թանկագին գանձից, կրակից, չզրկուելու համար՝ գիշեր, ցերեկ շարունակ փայտ էր վառում և մոխրի տակ կրակ պահում։ Առաջին օրուայ քաղած գնդակներն էլ մոխրի մէջ թաղեց և երեկոյեան դէմ երբ հանեց՝ կերաւ, հիացած կանչեց.—Իսկ և իսկ հաց է, հացի համ ունի, հացի հոտ ունի։

Այնուհետև ամեն օր այդ գետնախնձորներից խորոված և մեծ ախորժակով ուտում էր։ Այդ գնդերը մեր այժմեան գործածած կարտոֆիլն է, որ աշխարհի ամեն կողմերում տարածուած է, իսկ այն ժամանակ մարդկանց դեռ անյայտ էր։

—Մինթէ չեմ կարող կաթ ու մածուն ունենալ. մինթէ չեմ կարող մի լամայ բռնել, հարցնում էր ինքն իրան Ռոբինզոնը։

Այդպէս մտածելով՝ հետևեալ օրը գինուած դուրս եկաւ մի ծառի տակ թաք կացաւ և պարանը օղակ շինած՝ սպասում էր։ Երբ մի լամայ այդ կողմով անցաւ, Ռոբինզոնը գցեց նրա վիզը և քաշեց։ Լամայի յետևից վազեցին երկու ձագ։

—Ինչ լաւ եղաւ, մէկի տեղ երեք, ուրախացած կանչեց Ռոբինզոնը. ես հիմա միս, կաթ, մածուն, պանիր և իւղ կ'ունենամ։

Ճանապարհին բաւական կարտոֆիլ հանեց և հետը տուն բերեց։ Լամաները քիչ քիչ նրան սովորեցին և ընտելացան. նրանք միշտ Ռոբինզոնի յետևից գնում էին, իսկ Ռոբինզոնը նրանց համար խոտ և փափուկ կանաչներ էր բերում, աղբիւրն էր տանում, ջրում և ամեն առաւօտ առատ կաթ կթում ու անուշ անում։

—Պէտք է ամեն շինեմ, որ կաթ պահեմ, մածուն մակարդեմ, մտածում էր Ռոբինզոնը։ Դէս ու դէն ընկաւ, կաւ գտաւ, ոտնե-

բով տրորեց, այնչափ տրորեց, որ լաւ փափկեցաւ։ Յետոյ շատ փորձեր արաւ, շատ շինեց, քանդեց, վերջապէս կարողացաւ հատաբակ ափսէներ, խոր ամաններ, մեծ ու փոքր պտուկներ շինել։

Ապա այդ շինածները կրակի մէջ դնելով՝ թրծեց. ամաններր պատրաստ էին։ Ռոբինզոնը բաւական շատ փորձեր արաւ. վերջապէս կարողացաւ կաթի հում սերից կարագ ստանալ, կաթը մակարդեց, մածուն ստացաւ, մածնից՝ թան, թանից՝ շոռ։ Այնպէս որ, կաթ, մածուն, սեր, կարագ, պանիր, իւղ և թան նրա համար անպակաս էին։

3.

Մենակութիւնից Ռոբինզոնը ձանձրացել էր. նա տխուր էր և շատ անգամ մտաբերում էր իր ծնողներին, խաղընկերներին, ազգականներին... իսկ հիմա ոչ ոք չկար մօտը. մէն մենակ ընկած էր կղզու վրայ։

—Ա՛խ, Աստուած, ինչ անեմ. մէկը չկայ, որ հետը խօսեմ, մարդու լեզու իմանամ. այս ինչ բան է, այս ինչ կեանք է, հառաչում էր նա։ Մի օր մտածեց թութակ կամ սարեակ բռնել, խօսել սովորեցնել։ Այդպէս էլ արաւ. մի թութակ բռնեց, ծառի ճիւղերից վանդակ շինեց, մէջը դրեց և ամէն օր նրա հետ պարապեց, խօսել սովորեցրեց։ Երբ մի օր էլ թութակը մարդու նման մի քանի խօսք ասաց, Ռոբինզոնը ուրախութիւնից արտասուեց։ Երեք տարուց յետոյ առաջին անգամն էր՝ մարդու խօսք լսում։

Ռոբինզոնի շորերը բոլորովին մաշել էին. ճանճերն ու մոծակները նրան անհանգիստ էին անում և շարունակ կծոտում։ Նա մտածեց լամայի կաշուց շորեր, կօշիկներ պատրաստել. և մի քանի օրից յետոյ արդէն պատրաստ էր։ Թէև նրա տրեխները շատ կոշտ էին և ոտները ցաւեցնում էին, բայց ինչ կարող էր անել։ Երեսի համար էլ մի դիմակ շինեց, որի երկու ծակից աչքերն էին փայլում։

---

45. Անձնուէր պահապանը

Ով ճանապարհորդել է երկաթուղով, նա տեսած կը լինի, որ

գնացքն անցնելիս՝ երկաթուղու պահապանը կանգնում է իր տնակի մօտ՝ ցերեկը կանաչ դրօշակ, իսկ գիշերը կանաչ լապտեր բռնած. եթէ երկաթագծերից մէկն ու մէկը վնասուած է, կամ թէ հեղեղը փճացրել է ճանապարհը, այն ժամանակ նա ցերեկը կարմիր դրօշակ, իսկ գիշերը կարմիր լապտեր է բռնում և դրանով իմաց տալիս գնացքի մեքենավարին, թէ ճանապարհը վտանգուած է։

Եթէ պահապանը կամ մեքենավարն անզգոյշ գտնուին, կը կորչեն թէ գնացքը և թէ ճանապարհորդները։

Պահապան Յարօն երկար տարիներ կատարել էր այդ ծանր, պատասխանատու պաշտօնը։

Մի երեկոյ, երբ Յարօն դիտում էր ճանապարհը, երկինքը յանկարծ ամպեց, աշխարհը սևացաւ և անձրևը հեղեղի նման թափել սկսեց։ Փոթորիկ, որոտ, կայծակ։ Ծեր կաղնիներն սկսեցին ճռճռալ, քամին ծռում, գետնին էր կպցնում հաստաբուն ծառերի գագաթները։

Հէնց որ Յարօն մօտեցաւ իր տնակին, երկինքը սաստիկ որոտաց, կայծակը խփեց, փշրտեց երկաթագծերը և վառեց նրա տնակը։

Նա շշմեց, ուշաթափուած փուեց գետնին...

Քիչ յետոյ, հեռից, շատ հեռից լսեց գնացքի սուլոցը. Յարօն ուշքի եկաւ ու նրա աչքին պատկերացաւ սոսկալի վտանգը... Գնացքը կը խորտակուի՝ իր հետ տանելով այնքան թանկագին կեանքեր։ Բոլորը, բոլորը կը մեռնեն...

Ժամանակ չկորցնելու համար՝ Յարօն մի կերպ ոտքի ելաւ, դաւաւ մի սովորական լապտեր, վառեց, իր կարմիր շապկից մի կտոր պատռելով փաթաթեց նրա շուրջը և գծի վրայ նստելով՝ վեր բարձրացրեց։

Լապտերը բարձր բռնած՝ Յարօն նայում էր դէպի հեռուն, որտեղից պիտի երևար գնացքը. սիրտն արագ բաբախում էր, աչքերը մթնում։

Ահա... հրեղէն զոյգ հսկայական աչքեր, որ արագ մօտենում էին... գնացքն էր, որ սլանում էր բոլոր թափով։ Ա՜խ, եթէ մեքենավարն իմ լապտերը չնկատէ, բոլորը կը մեռնեն, մտածում էր Յարօն։

Բայց... մեքենավարը նշանը տեսաւ, ընթացքը դանդաղացրեց ու Յարօից մի քանի քայլ հեռու գնացքը կանգ առաւ։

Իսկ նա, որ փրկեց գնացքն ու շատ թանկագին կեանքեր, ուժասպառ և անզգայ նորից փաւեց գետնին...

---

46. Խեցգետնի արկածը

Տարիս արդէն լրացել էր, ես մեծ խեցգետին էի։ Թէև բնակւում էի նոյն քարի տակ, բայց բոլորովին ազատ։ Ես ինքս էի ինձ համար կերակուր որոնում, կարողանում էի յետ ու առաջ լողալ, յարմար ժամանակին թշնամիներից թագնուել և մինչև անգամ պատահած դէպքում ունելիքներով յարձակուել։ Բայց տես, որ այդ միատեսակ կեանքն ինձ համար տաղտկալի էր և ես միշտ արկածներ էի երազում։ Ի վերջոյ մի այնպիսի արկածի հանդիպեցի, որ Աստուած հեռու տանի, մինչև մեռնելս էլ բաւական է ինձ։



Մի երեկոյ տուն էի դառնում զբօսանքից, տեսնեմ մի քթոց, մէջն էլ մեռած ձկներ։ Մենք խեցգետիններս էլ հօ շատ ենք սիրում գէշը։ Մտայ քթոցն ու լաւ ճաշակեցի. մէկ էլ էն տեսնեմ, ջրում մի բան շարժւեց։ Քթոցը ջրից դուրս քաշեցին ու ինձ էլ միւս խեցգետինների հետ միասին թափեցին մի պարկի մէջ։ Ա՛յ տղայ, ի՞նչ էր կատարւում այնտեղ մեզ հետ, դժւար է պատմելը. շոգ, նեղւածք, օդ չկայ. մէկ միւսի վրայ ընկած ջարդում են իրար, հրում են, կրծում ու կմշտում, աշխատում են ազատւել այդ դժոխքից, բայց ո՞ւր, որտեղից ենք կարող։ Պարկից մենք ընկան խոհարարուհու զամբիւղը։ Զամբիւղը տարան դրին խոհանոցի մի անկիւնը։

Շատ ծանր էին մեզ համար այդ րոպէները. թոյլերն ուշագնաց էին լինում, ուժեղներն աշխատում էին փախչելով ազատւել. ես էլ վերջինների հետ դուրս պրծայ, սողում էի խոհանոցում և արդէն հասել էի աստիճաններին, երբ յանկարծ, որտեղից որտեղ դուրս պրծաւ մի շուն, սկսեց հաչել և աշխատում էր ինձ բռնել, բայց ես իմ ունելիքներով այնպէս պինդ սեղմեցի նրա դունչը, որ նա սկսեց կոնձկընձալ։ Վրայ հասաւ խոհարարուհին ու բղաւեց.—«Ա՜յ, այ, այս ի՞նչ է, բոլոր խեցգետինները դուրս են փախել զամբիւղից և նորից սկսեց մեզ հաւաքել։ Այն անպիտան շան պատճառով ես նորից ընկայ ամանի տակը, թէ չէ ազատւելու էի։

Անցաւ մի քանի րոպէ, տեսնեմ ամանում միայն մի քանի հոգի ենք մնացել, իսկ միւսները որտեղ են. նրանք կաթսայում եռացող ջրի մէջ էին, հասկանում էք. զուցէ սրխալւում եմ. մի՞թէ ինձ էլ են ուզում կենդանի եփել։ Սարսափը և յուսահատութիւնը տիրեցին ինձ։ Յանկարծ տեսնեմ խոհարարուհին՝ բռնում է ինձ, արդէն ես նրա ձեռքումն եմ, դարձեալ մի րոպէ և ես կորած եմ, ինչպէս և իմ միւս ընկերներս։ Յուսահատութեան մէջ ես կծում եմ նրա մատը. նա ուզում է ինձնից ազատւել. մինչև անգամ տեսնում եմ՝ ցաւից արտասուքներ են երևում նրա աչքե-

բում. թող չկարծի, թէ այնքան էլ հեշտ է խեցգետինի հետ գործ ունենալը. յաւից նա սկսեց ձեռքը թափ տալ, որ աղաւաւի ինձնից, այդ ժամանակ ես բաց թողի նրա մասը և ընկայ ածիի դոյլը։ Այնտեղից ազատուելով՝ մի կերպ հասայ իմ ջուրը։

---

47. Գիւղացու երջանկութիւնը

Շատի հագին տրեխ է, գուլպայ էլ չունի, որ ոտը ծածկի. շատի չուխի վրայ հարիւր կարկատան կայ, էն էլ ռանգ ռանգ կտորներով, որը կարմիր, որը դեղին, որը գոլ գոլ. շատի ձեռների, երեսի, միրքի վրայ տասը տարեան ագտ, կեղտ, թող ու մոզ կայ, բայց ի՞նչ կ'անես, որ տունն ու շիրախանէն հազար բարութիւնով լիքը՝ տրաքում է ու Աստուծոյ հոգի կայ մէջներումը. մէկ օձի ձուն է պակաս տանիցը։ Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու գոմէշները հորթ ու ձագը տակներին գոմումը, գութանը դռանը լծած, մառանը եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խըլթիլթում և մանողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում է։ Որն երկու, որն երեք բաղ ունի։ Կարասներով կողակ, կճուճներով դաւուրմայ, աքաշներով գոխ, բոխ, ողորմակոթ, բղուղներով եղ ու կարագ, մօթայներով պանիր. ծով, ի՞նչ տուն։ Մէկ կողէկի բան բազարից տուն չի գայ՝ բացի իրանց հագնելու շորից. էն էլ կտաւ, շապկացու, չուխացու շատը հարսներն ու աղջկերքն են նրանց համար մանում, գործում, կարում։ Շատը չորս, հինգ հարս ունի տանը. որ մէկ տեղը ցաւալիս՝ ուզում են գլխովը պտիտ գան ու աչքը կթած ունին, որ տեսնեն, թէ իրանց տէրը կամ զօնաղը ի՞նչ կը հրամայի, որ կատարեն։ Մեծ ու պատիկ աշխատում են, մեծի պատիւը գիտեն, նրա հրամանը ոչ ով գետնովը չի տայ, էնքան հնազանդ են։

Արդիւնք !

Էրիկ տղա էր, բոլորա միասին գնացիք
ծորիկ ուխտարդը։ Ճանապարհին վարժա-
պիրի առուզարկու բիւնով մէկը պատմում
էր առակներ, միար կիսարներ, իրրոդը
եանիլուկներ, իսկ ղորդոդը սրսիւսուրիւն-
ներով մի ղար գարժացնում էր։ Ճանա-
պարհն անցքալի սեղա։ Ուխտարդում
մի բաղմութիւն կար։ Ամենամեծարում
կոլկուսարները, իրիսթամեծարները իրաց
ապրանքները էլ ճախում. միանիրը
գնորդներ էին կանչում, ապրանքներն
էին գովում և կամ ցոյց տալիս։
Որ մէկն ասի, ահա՛ կայսրն ան-
ղամ ապրանքներ, ղրիւսուած սր-
բուն զարդարանքներ, բաղմարիսակ

խաղալիքներ և ուրիշ բաներ: Ընկերները
ծոր նստած էին դժբաղդ աղջիկները.
մեկն անուշ, միւսն անուր, երրորդը գեղար,
չորրորդը նայվածքամ և ապշած: Ընկեր-
յուն մի-ի բայսուրիւն կար. վառուած
մոմակալները գիշերի լուսաւորում
էին. ժամանակութիւնը շատ դուրի
կան էր: Ընկերներս միշ Կռու
լարախաղալի, պուղների
ծոր, մի-ի բայսուրիւն էր նստած.
ամէն էլ ուրախ էին, զարգանում կամ
մեզ էին անում:
Ժայրիկ գաս, այդ օրը իմ անշատ ու-
բախ էի, սիրուն, որ դու, մայրիկս
և Սանդուխտը ծոր չէիք:
Ամբուրում իմ ամիրդ.

Իս որդի Արամ

1912 թ 5 յունիսի
ուրբաթ

Ով ինչ է անում. դիտեցէք, պատմեցէք և գրեցէք։

49. Ծեր ամեոը

«Փու-հա-փուհ... փու-հա-փուհ...»
Փչում է ձմռան քամին ահարկու.
«Եկա՛ւ .. վա՛յ եկա՛ւ... էլի յետ եկա՛ւ...»
Արաբ աշխարհում վայնասուն ընկաւ...
Բայց ծեր-երկիրն է, պէտքն էլ չի անում,
Ձիւն մուշտակն խոկոյն մերկ մարմնին քաշում,
Ու տակից իր գետ գըլ-գըլան բերնով
«Օ՛խ-օ՛խ» է անում, ձմրան հէրսն հանում...

---

50. Սղոան

Բլրակի լանջը սառել էր. հեռից այնպէս էր պսպղում, պէտ պէտին տալիս, որ կարծես թէ մի մեծ հայելի էր բլրի գագաթից մինչև ստորոտը։

—Տղէք, գնանք սղոան, ասաց Գէորգն ընկերներին։

—Գնանք, գնանք, ասացին միւսները և սղոաններն առած գը-նացին։

Անուշն ու Սինոն էլ գնացին, թէև սղղան չունէին։

Օրը պարզ էր և ցուրտ։ Արեգակը բոլորովին չէր տաքացնում երեխաների սառած ձեռքերը։ Նրանք կատակներ էին անում, վազվզում, որ չզգան ցրտի սաստկութիւնը։

Կարգով կանգնում էին բլրակի գլխին և սղղաններին նստած, իրար ետևից բաց էին թողնում, սղղալով իջնում էին մինչև ստորոտը և նորից բարձրանում։ Սղղան չունեցողները կանգնած ծաղրում, քաջալերում էին սղղացողներին։

—Սինո, Անուշ, ես յողնեցի, եկէք դուք սղղացէք, ասաց Կոստին։

—Առաջ դու սղղա, Սինո։

—Չէ, դու սղղա, Անուշ։

Վերջապէս Սինոն զիջեց և սկսեց սղղալ։

Երբ երկրորդ անգամ սկսեց սղղալ, հէնց սկզբին սղղանը պըտրտուեց և արագ թափով իջաւ։ Սինոն ճչում էր, օգնութիւն էր կանչում։ Ի՞նչ անէին. եթէ մօտենային, պիտի ընկնէին։ Բոլորն էլ կողքից վազում, վայ վայ էին կանչում։

—Վայ, Սինո ջան, լաց էր լինում Անուշը և մօտից վազում։

Սղղանը տատանւում էր, պէտք է շուռ դար և խեղճ Սինոին տակովն անէր։ Մէկ էլ էն տեսանք, որ Անուշն ամբողջ մարմնով մեկնուեց ճանապարհի վրայ։

Բոլորը զարմացած ճիչ արձակեցին։ Սղղանը դէմ առաւ Անուշին ու կանգնեց։ Սղղանի ծայրը դիպաւ Անուշի դէմքին և քիթ ու բերանը սաստիկ արիւնոտեց։ Ցնծութիւնն ընդհանուր էր։ Բոլորը հաւաքւել էին անձնազոհ Անուշի շուրջը և աշխատում էին ձիւնով կտրել նրա քթի արիւնը։ Սինոն էլ արիւնը տեսնելով՝ բարձր ձայնով լալիս էր։

---

51. Հարսնաքար

Սուրբ խաչ վանքի հէնց դէմ ու դէմ
Սարի լանջին տափարակ՝
Հին ժամանակ հարուստ ու շէն
Մի աւան կար հայաբնակ։

Ժամանակով այդ աւանի
Մի անուանի օջախում՝
Հեզ, ամօթխած ու դեղանի
Մի նորահարս է լինում։

Հարսը մի օր գլուխը բաց
Բակում լացք էր անում.
Ցանկարծ... դրսի դուռը ճռռաց,
Կնքաւորն էր գալիս տուն։

«Հողը գլխիս»... Հարսը ճչաց,
Տաշտն առաւ բաց գլխին
Ու ամօթից արձան կարած՝
Աչքն ուղղեց երկնքին.

Ամ՛խ, Տէր Աստուած, ինձ քար շինիր
Կամ անցրու գետնի տակ,
Հող դարձրու կամ թէ մոխիր,
Թէ չէ եղայ խայտառակ...

Աստծու դուռն էդ վայրկեանին
Բաց էր՝ լսեց նրա ձայն.
Ցաղճաց պարկեշտ նորահարսին
Եւ դարձրեց քար-արձան։

Ու հիմի էլ սարի լանջին
Դարերից յետ անհամար
Կայ արձանը տաշտը գլխին—
Եւ կոչւում է Հարսնաքար։

---

52. Գողին բռնեց

Մի գիւղացի կար։ Սա ոչ միայն որևէ բանի պակասութիւն չունէր, այլ և ունեցածն այնքան շատ էր, որ խրճիթում չէր տեղաւորւում, ուստի նա էլ մի մթերանոց-շտեմարան է շինում և Աստծու տուած բարիքի մի մասն այնտեղ տեղաւորում։

Աստած է, գողերի ահից հարուստի քունը չի տանիլ։

Մի գիշեր դուրս գալով շուրջն է դիտում. նրա ականջին ծրդնոտի խշխշոցի ձայն է հասնում։ Գիւղացին սկսում է ականջ դնել և նրան այնպէս է թւում, որ մէկը անց է կենում շտեմարանի մօտից։

Տանտէրը նորից ականջ է դնում. լսելի է լինում նոյն խշխշոցը, նա շունչը բռնած՝ կուզէ-կուզ, դաղտագողի առաջանում է դէպի շտեմարանը։ Երբ արդէն բաւական մօտենում է, կանգնում և շուրջն աչք ածում ու մէկ էլ ինչ տեսնում. հէնց ուղիղ իր դիմաց մի ուրիշ մարդ էլ իրան է նայում։

Այդպէս իրար շատ նայեցին. գողը հեգնական սրատապնդւելով՝ կէս-մին դուրս է գալիս իր թաքստեան տեղից, տանտէրն էլ նոյնն

է անում. նրանք սկսում են ուղղակի միմեանց աչքերի մէջ նայել։

—Հը՞, մեր աղայ, ցածը ձայնով հարցնում է գողը, չլինի թէ դու էլ ինձ պէս դուրս ես եկել մի բան ճանկելու։

—Ինչպէս տեսնում ես, պատասխանում է տանտէրը։

—Բայց ո՞ւր գնանք։

—Ուղիղն ասեմ, ախպէր, ինքս էլ չգիտեմ, ասում է գողը. Ես անփորձ մարդ եմ. այս առաջին անգամն է գողութեան դուրս գալս։ Եւ թէպէտ շատ վատ բան է գողութիւն անելը, բայց էլ ուրիշ ճար չկար...

Արի, խօսքը շարունակում է գողը, արի այս շտեմարանի դուռը կոտրենք...

Բայց ինչո՞վ կոտրենք, մօտդ լինդ, կացին կամ մի այլ բան ունե՞ս։

—Չէ, ախպէր, ես ոչ մի բան չունիմ։

Սպասի՛ր, սպասի՛ր, ասում է տանտէրը. ես՝ կարծեմ՝ շինծու բանալիներ ունեմ մօտս. կարելի է, թէ սրանից մէկն ու մէկը յարմար է գալիս փականքին։

Այդ ասում է տանտէրը և գօտկից կախած բանալիներից մէկով բաց է անում շտեմարանի դուռը։

Երկուսով ներս են մտնում։

—Ը՞հը, ահա մի մեծ արկղ, դէ՛, կոտրի՛ր, ասում է տանտէրն ու ինքն քաշւում է մի կողմի վրայ, որ մի յարմար բան ձեռք գրցի ու գողի գլխին հասցնի, խփի։

—Չէ, ախպէր, իր արկղն իրան լինի. ինձ միայն հաց է հարկաւոր, իսկ այստեղ ես թաժայ հացի հոտ եմ զգում։

Ասում է գողը և հոտոտելով սկսում է առաջ գնալ։

—Սպասի՛ր, ահա ես գտայ։

Գողն իսկոյն վրայ է վազում, երկու ձեռքով բռնում հացն ու վրայ պրծած ագահաբար կծոտում։

—Այդ ի՞նչ է, ա՛յ մարդ, ասում է տանտէրը, որ կացինն արդէն ձեռքին պատրաստ կանգնած էր. այսօր չե՞ս ընթրել, ի՞նչ է։

Ի՞նչ ընթրիք, ասում է գողը և ծամում է. երկու օր է՝ բացի ջրից ուրիշ բան չեմ դրել բերանս, սոված մեռնում էի։

Էլի մի քիչ ուտելուց յետոյ գողը դարակից մի քանի հաց էլ վերցնում է։

—Է՛հ, շնորհակալ եմ, ախպէր։

—Ասուած բարի է։ Նա կը տերի, դու էլ տերիր, ասում է գողը և ուզում է գնալ։

—Ո՞ւր. ա՛յ մարդ, ասում է տանտէրը. տես ինչքան բան կայ այստեղ. արի վերցնենք՝ ինչքան կարող ենք։

—Թող բարով վայելի իր տէրն, ախպէր։ Այդ բանները ես չեմ վերցնիլ, քեզ էլ խորհուրդ կը տայի՝ չվերցնել։ Փառք Աստուծոյ, ես այնքան հաց եմ վերցրել, որ մի ամբողջ շաբաթ ինձ էլ, հիւանդ կնոջս էլ ու երեխաներիս հերիք կ'անէ, էլ ուրիշ ոչ մի բան ինձ պէտք չէ։

—Դէ՛, արի այստեղ, ա՛րի. ա՛րի վերցրու այս պարկ ալիւրը և տար ձեր տուն։ Ոչնչից չվախենաս, ուղղակի փողոցի միջով անցիր, գնա, իսկ եթէ հարցնող լինի, ասա՝ ալիւրի տէրն ինքն տուաւ ինձ։

—Ի՞նչպէս թէ ալիւրի տէրը, ի՞նչ տէր, հարցնում է լեղապատառ գողը։

—Այո՛, բարեկամ, ալիւրի տէրը, այս տանտէրը, որ կանգնած է քո դիմաց և որն ուզում էր այս կացնով գլխիդ հասցնել։

Գողն իսկոյն ընկնում է տանտիրոջ ոտները։

—Վա՛ր կաց, վա՛ր կաց, ասում է տանտէրը, ա՛ռ հացերը, վերցրու ալիւրը և գնա խաղաղութեամբ։

Սրանից յետոյ եթէ էլի քաղցած լինես, ուրիշների սթերանոցների շուրջը քաշ մի՛ գալ, այլ ուղղակի արի ինձ մօտ։

53. Այրած խրճիթ

1.

Ձմեռն էր. ծովափը ծածկուել էր բաւական հաստ սառոյցով։ Մարդիկ իրենց սահիկներով անվտանգ սահելով զբաղուում էին ծովի երեսով և մեծ բաւականութիւն ստանում։

Մէկ անգամ ծովափի մօտ գտնուած գիւղի բնակիչներից շատերը խումբ խումբ սահիկներով սղզալով ուրախ ժամանակ էին անցկացնում։ Երիտասարդները ծովափից շատ հեռացել էին և մեծ բաւականութիւն էին ստանում։



Ափին մօտ ցածլիկ խրճիթի մէջ ապրում էր Մարթա տատը։ Սա շատ աղքատ էր. բացի այս հին խրճիթից՝ ուրիշ ոչ մի բան չունէր։ Մարթա տատը թէև հիւանդ էր, բայց լուսամուտից սահողներին նայում, ուրախանում էր։ Երկար տարիներ ծովի ափին ապրելով նա շատ լաւ գիտէր, թէ այս կամ այն ամպն ինչի նշան է. ձրն է փոթորիկ բերողը, որը՝ լաւ եղանակ, որն՝ անձրև և այլն։ Յանկարծ նա տեսաւ մութ երկնքի վրայ մի սպիտակ ամպ։

—Ա՜խ, Աստուած, մրմնջաց նա. այդ ամպը շուտով սոսկալի փոթորիկ կը բերէ։ Ջուրը կը բարձրանայ, սառոյցները կը ջարդուեն և սահողներին տակովը կ՚անեն։ Ի՞նչ անել, որքան անմեղ մարդիկ պէտք է զոհ գնան։

2.

Մարթա տատը սարսափից, նպիտ անկողնու մէջ. նա մի գիսակ ոյժ առաւ, մինչև անգամ վեր կացաւ տիղից և դուրս ելաւ։

—Ինչ անիմ, չայն տամ, կանչիմ ասողներին. բայց չէ՞ որ նրանք չարդ կ՚ուտեն, իմ չայնը դի՞ն կարող լսել. իսկ վերանայ վրանդէ մասին նրանց տրիդիկութիւնդ չունի։

—Ինչ անիմ, Ամէր Աստուած, ո՞ւմ դիմիմ...

Թիդ մրաձիլուց յիրոյ, Մարթա տատը նիրս մրաւ խրճիթ, վառարանից դուրս թաղիցն մի վառուած փայտ և դրեց իր յարդէ անկողնու վրայ։ Թիդ յիրոյ ամբողջ խրճիթը բոցավառուում էր։

—Մարթա տատի տունը այրուում է, կանչեցին սահողները։

—Շուտ, հասնենք օգնութեան, ձայն տուին նրանք։ Ամենքն էլ քամու նման արագ սահեցին ծովափ։

Սահողները նոր էին դուրս եկել ծովափ, երբ սոսկալի փոթորիկը վրայ հասաւ, ալիքները բարձրացան, սառոյցները կոտրուելով սարի նման դիզուեցին։

—Եթէ այս հրդեհը չլինէր, մենք ամենքս կորած էինք, սարսափած ասում էին սահողները։

Մարթա տատը իր խրճիթի մօտ նստած՝ ուրախութիւնից լաց էր լինում։

---

54. Մկների ժողովը

Ինչ ձէն, ինչ ձուկ,
Ինչ աղմուկ,
Իր ծակիցը
Ոչ մի մուկ
Դուրս չէր հանում գնչիկը,
Զար կատուն էր քնչիկը.
Գզիրն ընկաւ դռնէ դուռ,
Գիւղամէջը շուռ ու մուռ.
Էլ չթողեց դուռ-կտուր,
Զահել, ահել գեղովի,
Զոչերին ջոկ, տեղովի
Կանչեց՝ բերեց ժողովի,
Թէ ինչ անեն, որ կատուէն
Մի հնարքով ազատուեն։
Եկան գիւղի ջոչերը,
Երկար բարակ պոչերը,
Մասնակցեցին խորհրդին։
Մի ջոչ խօսեց իր հերթին.
—Լսէք, մկներ ցեղակից,
Զունեմ որդի կողակից.
Ես մի անտէր ծերուկ եմ,
Բայց պատուաւոր մի մուկ եմ.
Պակսեց ուժն իմ ոտի,
Պէտք է մեռնեմ անօթի.
Էլ չեմ կրծի չորթանը,
Էլ չեմ ծրծի ես թանը.
Մահս է կանգնել դռանը,
Սով է ղրկել մռռանը,
Ա՜խ, մռռանը, մռռանը,
Վեր է ընկնում մառանը,
Հէչ նման չէ գազանի,
Ինչքան ասես՝ նազ անի,
Ստից սատկի, տաղ անի,
Մեզի տեսնի, վազ անի,
Գլխից բռնի, կախ անի,
Թաթովը տայ, խաղ անի,
Ուտի՝ քէֆը չաղ անի։
Էսպէս գուլում ու կրակ,
Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ։
Բայց թէ ազնիւ մեր ցեղը
Կորչելու չի զուր տեղը.
Ցաւն էլ ունի իր դեղը.
Այ բերել եմ
Ես մի զանգ,
Ծափ-ծնգոց,
Մէջը զնգոց,
Կատուի վզից
Մենք կախ տանք,
Որ ինչքան էլ օրօրայ,
Որ ինչքան էլ շորորայ,
Ստից սատկի,
Տաղ անի,
Գալն իմանանք
Գազանի։
—Է, զանգը ո՞վ կախ անի։
—Ալ՛ օ, դու։
«Ալ՛ օն տանի»։
—Բալ՛ օ, դու։
«Բալ՛ օն կախէ»։
—Զալ՛ օ, դու։
«Զալ՛ օն կաղ է»։
—Մատ՛ օ, դու։
«Մատ՛ օն կարճ է»։
—Փոստ՛ օ, դու։
«Էդ էլ խիղճ է»։
—Համբ՛ օ, դու։
«Ես տկար եմ»։
—Զամբ՛ օ, դու։
Ես տանտէր եմ։
—Սաղ՛ օ, դու։
«Ասենք տարայ,
Բա որ կատուն
Գայ ինձ վրայ»։
—Բտ՛ օն, Խտ՛ օն թող մէկից
Բռնեն կատուին քամակից։
«Ինչ է խօսում չոր զանգը.
Լաւ է՝ դու տար էդ զանգը.
Էլ ի՞նչ Բտ՛ օ, ի՞նչ Փստան,
Ճստաց Բտ՛ օն ճսճստան»։
—Լռի՛, յանդուգ,
Կոտորուէք դուք.
Վախկոտներիդ ես թաղեմ.
Ճառ ասեմ, թէ՞ զանգ կախեմ,
Գոչեց ջոչը,
Քաշեց պոչը։

---

55. Հիւսիսային երկրներում

—Ճի՞շդ է, հայրիկ, որ շներին լծում են։

—Այո՛, Տիգրանուհի, ճիշդ է։

—Բայց չէ՞ որ նրանք փոքր են։ Ի՞նչ բեռ կարող են տանել, հարցրեց Լուսիկը։

—Մեծ մեծ շներ կան, զաւակս, ասաց հայրը. նրանք ուժեղ են և փոքրիկ սայլակներով բաւական բեռ են քաշում։

—Հայրիկ, ո՞վքեր են նրանց լծում։

—Բեռնակիրները, խեղճ մարդիկ. մի քանի երկրներում չունևոր գիւղացիները մօտիկ քաղաքները կարագ, իւղ, պանիր, կաթ և սրանց նման նիւթեր տանելիս՝ շատ անգամ

սայլակներին շներ են լծում։ Իսկ հիւսիսային երկրներում, որտեղ տարւայ մեծ մասը ձմեռ է, այնտեղ ամենքն էլ շներ կամ հիւսիսային եղջերուներ են լծում։

—Միթէ այնտեղ եղներ չկան, հարցրին Տիգրանուհին ու Լուսիկը։

—Այնտեղ եզ, կով, ձի չեն կարող ապրել. նրանց համար ուտելիք չի ճարւում։ Իսկ թեթև շները փոքրիկ սահնակներն առած՝ ձեան վրայից թռցնելով տանում են։

—Հայրիկ, եթէ տարւայ մեծ մասը ձմեռ է և այդչափ ձիւն կայ, հապա ի՞նչպէս են մարդիկ այնտեղ ապրում ,հարցրեց Տիգրանուհին։

—Վայ էն ապրելուն. կարո՞ղ ես երևակայել, հիւսիսային երկրի բնակիչները՝ էսկիմոսները տարւայ մեծ մասը սառցէ, ձնէ տներում են ապրում։ Այդ երկրում ամառւայ մի երկու ամսին օրերը տաքանում են, կանաչի և թռչունների երես են տեսնում, իսկ տարւայ մնացած ժամանակը միշտ ցուրտ ձմեռ է։

—Հայրիկ, ի՞նչպէս են նրանք այդ տները պատրաստում։

—Շատ հասարակ կերպով։ Նրանք քարերի նման քառանկիւնի ձևով ձիւնը կտրում են՝ շրջանաձև երկու կարգ մէկ մէկու վրայ դարսում. այդ ձնէ աղիւսների արանքում մանր ձիւն են լցնում և այս կերպ պատերը բարձրանալով՝ գմբեթաձև ծածկում են։ Իհարկէ, նրանց տները լուսամուտ և դուռ չունին. միայն մի կողմից բաւական երկար և նեղ անցք են թողնում. այս տեղից մի մարդ հազիւ կարող է սողալով ներս ու դուրս անել։

—Միթէ այդ տեսակ տներում նրանք չեն մրսում։

—Ո՛չ, այնտեղ բաւական տաք է. սեղաններն ու աթոռներն էլ սառոյցից են, իսկ նրանց վրայ փռում են եղջերուի, ծովային ցուլերի և այլ կենդանիների մորթիներ։ Ինչ պատերն էլ դրսի ցրտից, ներսի տաքութիւնից հետզհետէ սառոյցի են փոխւում և չեն թողնում, որ ներսի տաքութիւնը դուրս գնայ. միւս կողմից այդ պատերը լուսնի, արևի լոյս են ներս թափանցում և սառցէ խրճիթը լուսաւորում։

—Հայրիկ, ինչով են ապրում էսկիմոսները։



—Նրանց ապրուստը շատ խեղճ է։ Նրանք իւրաքանչիւր սահնակի մի քանի շներ լծած՝ դուրս են գալիս որսի։ Էսկիմոսներն որսում են ձուկ, ծովային հորթ և մի քանի տեսակ ծովային ուրիշ կենդանիներ. ցամաքի վրայ որսում են հիւսիսային աղուէս, բադ, արջ և այլն։

—Ուրեմն նրանք դրանցով էլ կերակրւում են։

—Այո՛, նրանց կերածն այդ է ու մէկ էլ ճարպ. այդ ճարպն է, որ հիւսիսային բնակիչներին տաքութիւն է տալիս։

—Հայրիկ, ուրեմն դրա համար է, որ մենք ձմեռները սիրով ուտում ենք իւղալի կերակուրներ։

—Այո, զաւակս, ճիշդ նկատեցիր, ասաց հայրը։ Հիւսիսային երկրներ ճանապարհորդողներն էլ իւղ, ճարպ շատ են ուտում և նրանց տաքութեան միակ աղբիւրը դա է։

---

56. Ուրախ Նոր տարի

Յուրտ ձմեռուայ գիշեր էր. երկնքում գոհարների նման փայլում էին աստղերը, մէկը միւսից պայծառ, մէկը միւսից լուսաւոր։

Նոր տարուայ գիշերն էր. ասում են՝ դա միակ գիշերն է, որ երկինք ու երկիր, շնչաւոր ու անշունչ առարկաներն իրար հետ խօսում, իրար հասկանում են։

Երկու որբ մանուկ, քոյր ու եղբայր, հասկացան նրանց լեզուն։

Սիրուն աստղերն ասացին նրանց.

—Այդտեղ դուք քաղցած ու մերկ էք. մարդիկ մոռացել են ձեզ. եկէք մեզ մօտ. մենք ձեզ կը պահենք։

Քոյր ու եղբայր, երկուսն էլ մերկ, երկուսն էլ քաղցած, ճանապարհ ընկան դէպի աստղերը...

Գնացին, գնացին, դէմ առան ապառաժ լեռ-քարին։

Ապառաժ լեռ-քարն ասաց նրանց.

—Սիրուն մանուկներ, էս ցուրտ ձմրան, էս մութ գիշերին ուր էք գնում։

—Գնում ենք դէպի աստղերը... տէր-տիրական չունենք։

Ապառաժ լեռ-քարը խղճաց որբերի վրայ ու ասաց.

—Սիրուն երեխաներ, չէ՞ որ դուք մրսում էք. միթէ ձեր ոտները չեն սառչում. ինձ մօտ կացէք այս գիշեր, ես ձեզ կը պաշտպանեմ։

—Չէ, լեռ-ապառաժ, դու մութ ու խաւար ես, իսկ մենք լոյս ենք որոնում, մենք գնում ենք դէպի աստղերը...

—Բարի ճանապարհ։ Գնում են։

Ցուրտը սաստկանում է. նրանք ամբողջ մարմնով դողում են, բայց շարունակում են գնալ...

Գնացին-գնացին, հասան մի մեծ գետի ափին։

Սառցապատ գետը խղճաց նրանց վրայ ու ասաց.

—Այս ցուրտ սառնամանիքին ուր էք գնում. միթէ մարդիկ այնքան քարացել են, որ ձեզ մերկ ու քաղցած զցել են այս ամայի դաշտերն ու անտառները. մնացէք ինձ մօտ։

- Շնորհակալ ենք, ասացին մանուկները. թէև դու բարի ես, բայց դու սառն ես. մենք լոյս ու ջերմութիւն ենք որոնում. մենք գնում ենք դէպի աստղերը...

—Բարի ճանապարհ, ասաց գետը։

Գնում են— գնում քոյր ու եղբայր ընդարձակ ձիւնապատ դաշտերով. հեռուում սեին է տալիս մութ անտառը, որի կատարը կարծես միանում է փայլուն աստղերի հետ։

Քոյր ու եղբայր ճանապարհը կորցրին, մոլորուեցին։

Այս բանը տեսան վայրի գազանները և հարցրին.

—Այս ցուրտ գիշերին ուր էք գնում։

—Մենք գնում ենք դէպի աստղերը, բայց ճանապարհը կորցրինք, մոլորուեցինք և չգիտենք՝ ուր կողմը պէտք է գնալ։

Վայրի գազանները խղճացին որբերին, նրանց իրանց մէջքերի

վրայ նստեցրին և տարան դէպի անտառը, ուր ծառերի սուր սուր կատարները մինչև աստղերին էին հասնում։

Մի եղևնի իր հպարտ կատարը դէպի երկինք էր ցցել և կարծես այնտեղ գրկախառնւում էր փայլուն աստղերի հետ։

Վայրի գազաններն իրանց մէջքից ցած դրին մանուկներին այդ ծառի մօտ ու ասացին.

—Ահա սա է ճանապարհը. եղևնին բաց արաւ մամռապատ խոռոչը. քոյր ու եղբայր ձեռք ձեռքի տուած, ուրախ ժպիտով ներս մըտան ալնտեղ, որտեղից նրանք պիտի բարձրանային դէպի աստղերը...

Ծառի մամռապատ ընի մէջ և փափուկ էր և տաք. քոյր ու եղբայր ննջեցին հանգիստ քնով։

Վաղ առաւօտեան դիւղացիները կացիններն առած անտառ գընացին, եղևնին կտրեցին, սահնակի վրայ դրին ու քաղաք տարան ծախելու։

Եկան Թագաւորի մարդիկը գնեցին այդ եղևնին ու ծաղկեայ ընդարձակ դահլիճում տօնածառ սարքեցին Թագաւորի երեխաների համար։

Նոր-Տարու երեկոյեան, երբ մոմեր ու ճրագներ վառեցին, Թագաւոր-Թագուհին իրանց մեծամեծներով երեխաների ձեռքից բռնած՝ տօնածառի շուրջը պատեցին։

Նւագում էին, երգում ու պարում։

Հաւաքւած իշխանները Թագաւորի երեխաներին թանկագին ընծաներ տւին։

Մէկ էլ յանկարծ երկու որբուկները ձեռք ձեռքի տւած ուրախ ժպիտով դուրս եկան եղևնու խոռոչից և տեսնելով չորս կողմի փայլն ու լուսաւորութիւնը՝ բացականչեցին.

—Այս ինչ փառաւոր է աստղերի աշխարհը՝ տաք, լուսաշող, հրաշալի. մենք այստեղ կը մնանք, այլ ևս յետ չենք դառնայ։

Թագաւորն երկու որբուկին՝ քոյր ու եղբօր իր մօտ պահեց։

Եւ այն օրւանից մինչև հիմա դեռ այսպիսի մի ուրախ Նոր-Տարի չի եղել...



Դիտեցէք, ասումէք, վերնաքիր դրէք և գրեցեք։

57. Ամենապէտքական բանն աշխարհում

1.

Ժամանակով հեռաւոր և ոսկի արեւելքում մի խելացի և արդարամիտ թագաւոր է եղել։ Նա ունեցել է երեք որդի։

Եղաւ որ, այդ թագաւորը ծերացաւ և կառավարութեան սանձն ուզեց դեռ կենդանի օրով յանձնել իր ժառանգներից նրան, որն աւելի ընդունակ կը լինի այդ մեծ գործին։

Եւ դրա համար նա մի օր կանչեց իր երեք որդիներին և ասաց.

—Սիրելի որդիներ, տեսնում էք, որ ձեր հայրը ծերացել է ու էլ չի կարողանում երկիրը կառավարել։ Ես վաղուց իջած կը լինէի իմ գահից, եթէ կատարած տեսնէի այն մեծ միտքը, որ երկար տարիներ պաշարել է հոգիս։ Եւ հիմա ձեզանից նա, ով որ իմաստուն կերպով լուծեց այդ իմ միտքը, նա կ'ստանայ իմ թագաւորութիւնը, նա կը կառավարէ իմ ժողովուրդը։

—Ապրած կենայ մեր սիրելի հայրը, սուրբ է մեզ համար նրա վեհ կամքը։ Այդ ինչ մեծ միտք է, որ չի կարողացել լուծել նրա իմաստուն հոգին։

—Ահա տեսնում էք այն ահագին և մեծածաւալ շտեմարանը, որ վաղուց շինել եմ։ Իմ միտքս էր՝ լցնեմ մի այնպիսի բանով, որ ամենապէտքականը լինի աշխարհիս երեսին և որով կարողանամ բախտաւորացնել իմ ժողովուրդը։ Այդ շտեմարանը դեռ մնում է դատարկ։ Եւ հիմա ձեզանից նա, ով որ կը կարողանայ այդ շտեմարանը, իր բոլոր անկիւններով, ծայրէ ծայր լցնել, նա թող լինի իմ ժառանգը։ Առէք դանձերից՝ ինչքան որ կուզէք և առանձին առանձին ճանապարհ ընկէք քաղաքէ քաղաք, աշխարհէ աշխարհ, գտէք այդ բանը և լցրէք իմ շտեմարանը։ Ձեզ եօթն անգամ քառասուն օր միջոց եմ տալիս։

Որդիները համբուրեցին հօր ձեռքն ու ճանապարհ ելան։

Ամբողջ եօթն անգամ քառասուն օր նրանք շրջեցին քաղաքէ քաղաք, աշխարհէ աշխարհ. տեսան ուրիշ ուրիշ մարդիկ, ուրիշ ուրիշ սովորութիւններ ու ժամանակին կանգնեցին հօր առաջ։

—Բարով էք եկել, անգին որդիներ։ Գտաք, բերել էք՝ ինչ որ ամենապէտքական բանն է աշխարհում։

—Այո, գտել ենք։

Եւ հայրն իսկոյն վերցրեց իր որդիներին և նրանց հետ գնաց շտեմարանի առաջ։ Այնտեղ հաւաքուած էին բոլոր պալատականները և ժողովուրդը։

Թագաւորը մօտեցաւ շտեմարանի դռանը, բացեց և կանչեց մեծ որդուն։

—Ի՞նչով կը լցնես այս ահագին շտեմարանը, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որ աշխարհում ամենապէտքականը լինի։

Եւ մեծ որդին հանեց գրպանից մի բուռն հացահատիկ և պարզելով դէպի հայրն՝ ասաց.

—Հացով կը լցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր։ Ի՞նչն է աշխարհում ամենապէտքական բանը, քան հացը։ Ո՞վ կարող է առանց հացի ապրել։ Շատ թափառեցի, շատ բան տեսայ, բայց հացից պէտքական ոչինչ չգտայ։

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն։

—Ի՞նչով կը լցնես այս ահագին շտեմարանը, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որ աշխարհում ամենապէտքականը լինի։

Եւ միջնակ որդին հանեց գրպանից մի բուռը հող և պարզելով դէպի հայրն՝ ասաց.

—Հողով կը լցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր։ Ի՞նչն է աշխարհում ամենապէտքական բանը, քան հողը։ Առանց հողի հաց չկայ. առանց հողի ո՞վ կարող է ապրել։ Շատ թափառեցի, շատ բան տեսայ, բայց հողից պէտքական ոչինչ չգտայ։

3.

Այն ժամանակ հայրը կանչեց կրտսեր որդուն։

—Ինչով կը լցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակս, ինչ բանով, որ աշխարհում ամենապէտքական լինի։

Այդ միջոցին կրտսեր որդին հաստատ քայլերով մօտեցաւ շտեմարանին, անցաւ շէմքը և գնեց ահագին, մեծածաւալ և մութ ու խաւար շտեմարանը։ Բոլորը հետաքրքիր նայում էին նրան։

Եւ ապա նա գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, կայծաքարին խփեց հրահանը, կայծ հանեց և վառեց մոմը։ Բոլորը կարծում էին, թէ նա ուզում է լոյսի լուսով լաւ գննել շտեմարանը, նրա ահագնութիւնը։

—Դէհ ասա, որդի, ինչով կը լցնես, անհամբեր ձայնով նորից հարցրեց թագաւորը։

—Լոյսով կը լցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստուն հայր, լոյսով միայն։ Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի, բայց լոյսից պէտքական ոչ մի բան չգտայ։ Լոյսն է ամենապէտքական բանը աշխարհում։ Առանց լոյսի հողը հաց չի ծնի, առանց լոյսի հողի վրայ մարդ չէր լինի։ Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի և գտայ, որ լուսաւորութիւն ու գիտութիւնն են ամենապէտքական բանն աշխարհում։ Եւ լոյսով կարելի է լցնել ոչ միայն քո այս ահագին և մեծածաւալ շտեմարանը, այլ և ամբողջ աշխարհն իր բոլոր անկիւններով, ծայրէ ծայր։

—Ապրիս, գոչեց ուրախացած հայրը. քեզ է արժանի իմ գահն ու իշխանութիւնը, քանի որ լոյսով և գիտութեամբ պէտք է լցնես թագաւորութիւնդ և մարդկանց հոգիները։

—Ապրած կենայ մեր եղբայր թագաւորը, գոչեցին ուրախացած եղբայրները. ուղիղ որ նա գտաւ ամենապէտքական բանը աշխարհում։

—Ապրած կենայ մեր երիտասարդ լուսաւոր թագաւորը, գոչեցին ուրախացած պալատականներն ու ժողովուրդը։

Եւ հայրը գրկեց կրտսեր որդուն, փռեց նրա ուսերի վրայ շողշողուն ծիրանին և տարաւ նստեցրեց գահի վրայ։

Ամբողջ ժողովուրդն ընկաւ մեծ ուրախութեան մէջ, երգեց ու պարեց քառասուն օր, քառասուն գիշեր, որ ունեցաւ նորից մի խելօք և լուսամիտ թագաւոր։

---

58. Բրուտի թագին

Ցուրտ ձմեռ էր, բուք ու բորան։
Ու խեղճ գէլը ոլոր-մոլոր,
Փորը վեց-վեց գիշեր բոլոր՝
Ջաղջփում է գիւղի բոլոր,
Գիւղի բոլոր, ոլոր-մոլոր...
Մ՚խ, թէ մի հորթ...
Կամ խենթ ճամբորդ...
Շները յանկարծ որ իմացան,
Աֆ ու լաֆով իրար անցան,
Հարայ տւին, հաւար գցին,
Հաջ ու կանչով աշխարհ լցրին,
Բաղցած գիլուն դուրս խուկեցին,
Դուրս խուկեցին, հա՚ խուկեցին,
Գիւղից հեռու վռնդեցին...
Լեզուն հանած, հնքը կտրած,
Վազ է տալիս գէլը խրտնած,
Վազ է տալիս սար ու ձորով,
Սար ու ձորով սոված փորով...
Վազ է տալիս ու երկիւղով
Ետ է նայում աչքի տակով,
Ետ է նայում ու ինչ տեսնում.
Շուն ու շնուոր չեն երևում,
Մէն-մենակ մի բրուտի թագին,
Հէնց մենակ էն թուլա թագին
Վերջ չի տալիս իրա վազին,
Շունչը կտրած հազ ու հնքից,
Վազ չի գալիս իրա ետքից...
Ու գէլն յանկարծ ետ է դառնում,
Թագու բկից ամուր բռնում.
—Դաւէդ ինչ է, ա՚ շան լակոտ,
Որ վազում ես էդպէս կրակոտ.
Էն Համբարենց հաւն են կերել,
Կիրակոսենց կովն են կերել,
Գարեգինենց գառն են լափել,
Շամիրամենց շանն են խաբել,
Շանն են խափել, գիւղից հանել,
Գիւղից հանել, անուշ արել։
Ես քո տիրոջ ինչ եմ արել,
Կաւ ու կճուճ խոմ չեմ տարել,
Որ դէմս էդպէս կրակ ես դառել...
Գիլու բերան, սոված բերան...
Թագուն արաւ երկու բերան...



Դիտեցէք, պատմեցէք և գրեցէք։

59. Իմ ընկերոջ գիւղը

Ընկերոջս ծնողները գիտէին, որ մենք նոր տարւայ արձակուրդներին պէտք է գիւղ գնայինք։

Զմեռւայ խիստ ցրտին ընկերիս հետ հասանք գիւղը. հանգիստ առանք թէ չէ, տանեցիք ամեն կողմից ձայն տւին։

—Տղէք, լաւ եկաք, լաւ հասաք. այսօր դպրոցում աշակերտական ցերեկոյթ կայ, գնանք տեսնենք, ինչպէս կը հաւանիք։

Երբ դուրս եկանք, ուշադրութիւնս գրաւեցին փողոցները. բոլորը քարած, սայլատակած էին։ Տները գրեթէ շինւած են միակերպ. բոլորն ունեն պատշգամբներ և լուսամուտներ։ Մտանք դպրոց. այստեղ իմացայ, որ ուսումնարանն ունի վեցերորդ բաժանմունք, ուր աղջիկներ ու աղջիկներ միասին են սովորում։

Հանդէսը բացւեց երգով. ներդաշնակ երաժշտութիւնը հէնց սկզբից գրաւեց իմ ուշադրութիւնը. հանդէսը սովորական ձևով չէր. կար մանկական օպերա, գործիքաւոր երաժշտութիւն. ամենից ուշագրաւն այն էր, որ առաջին բաժանմունքը խմբական մի ոտանաւոր ասաւ այնքան լաւ, այնքան գեղեցիկ, կարծես թէ մի մարդ էր ասողը. մանկական խաղերը, մանկական պարերը խելքս տարան. չէի սպասում գիւղում այս տեսակ սիրուն բաներ տեսնել։

Միւս օրը հասարակութեան համար էր կրկնւում նոյն հանդէսը. ժողովուրդը խռնւած էր դպրոցի դռան առաջ. փողը ձեռքերին՝ մարդիկ աղաչում, պաղատում էին տոմսակ տալ...Ոչ մի աղմուկ, ոչ մի իրարանցում. այնքան կրթւած էր երևում այդ գիւղական հասարակութիւնը։

Շատ տներ հիւր եղանք. բոլորն էլ ապրում են մաքուր բնակարաններում, կրթւած և բարեկեցիկ քաղաքացու նման։

—Սիրելի Արմիկ, ինչ ես հարցնում, ինչ ես հետաքրքրւում. այստեղ դպրոցական հասակ ունեցող բոլոր երեխաները գնում են ուսումնարան. այս գիւղում անգրագէտ մարդ չկայ։

—Սիրելի ընկեր, այս լեռների օղակի մէջ ընկած, սարերի կրծքին կպած ձեր անմման գիւղը քաղաքից էլ բարձր է։ Ես կ'ուզէի, որ մեր բոլոր մեծ ու պստիկ քաղաքներն այս գիւղի նման լինեն, այս չքնաղ գիւղի նման։



Դիտեցէք և պատմեցէք։

61. Գայլն ու կատուն

Գայլն անտառից
Փախաւ գեղը.
«Նեղն եմ, նեղը,
Ասաւ կատուին,
Քո հօր պատուին,
Ասլան բալա,
Մի ճար արա,
Մի տես հալա՝
Որսորդ ու շուն,
Թազի, թուլա
Միսս են կրծում,
Ինձ հալածում։
Ատուած կորի
Դրանց հոտը,
Մի մարդ ցոյց տուր,
Պահեմ մօտը»։
—Այ ցեղակից,
Գոչեց կատուն,
Գնա, մտիր
Մարօի տուն,
Նա չափազանց
Բարի կին է։
«Ես էլ գիտեմ,
Որ անգին է,
Բայց որ նրա
Հորթն եմ կերել...»
—Բկիր կանգնէր,
Լաւ չես արել։
Որ էդպէս է, Յովէսի մօտ...
«Նրանից էլ կ'անեմ ամօթ.
Դու մի ասի, էս ամառը
Ցանկարծ չուտեմ նրա գառը»։
—Ո՞ւմ ասել էլ.
Հա, մեր Զաքին։
«Էս գարնան էլ՝
Նրա մաքին»։
—Ո՞վ մնաց էլ...
Հա, երէցը...
«Էս աշնանն էլ՝
Դրա էծը»։
—Այ դու ուտես
Զոռի մեծը.
Ա՛յ զող վատթար,
Գիւղը մտար...
Տեղ չգտար։
Գիւղն յիմար է,
Որ թշնամուն
Պատսպարէ...
Ով ինչ բրդի,
Էն կը խրթի։

---

62. Բարեկենդանը

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում։ Էս մարդ ու կնիկը իրար հաշնելիս չեն լինում։ Մարդը կնկանն է ասում յիմար, կնիկը՝ մարդուն, ու միշտ կռվելիս են լինում։ Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն։ Կնիկը բարկանում է.

—Ա՛յ, որ ասում-ի՞մ յիմար իս, դիս նայուրում.
էսքան իղն ու բրինջը մի անգամից ինչ-ի՞ նա
մար իս առել բերել. նորդ հելիին իս
գալիս, թե գողիդ նարանիթե իս անում։
-Ինչ հելիս, ինչ նարանիթ, ա՛յ կնիկ, ինչ իս
խոսում, գար պանիր, բարեկենդանի նամարէ։
Կնիկը նանգարանում-ի, գանում-ի պանում։

Անց է կենում մի առ ժամանակ, էս կնիկն ապասում է, բարեկենդանը գալիս չի։ Մի օր էլ շէմքումը նստած է լինում, տեսնում է՝ մի մարդ արագ արագ փողոցով անց է կենում։ Ձեռը դընում է ճակատին ու ձէն տալի։

—Ախպէր, ախպէր, հալա մի կանգնի։

Տղէն կանգնում է։

—Ախպէր, բարեկենդանը դու հո չես։

Անցւորականը նկատում է, որ էս կնկայ ծալը պակաս է, ասում է. —Հա՛, ես եմ, տեսնեմ ինչ է դուրս գալի։

—Հա, ես եմ բարեկենդանը, քոյրիկ ջան, ինչ ես ասում։

—Էն եմ ասում, որ մենք քո ծառան հո չենք, որ քո եղն ու բրինձը պահենք։ Ինչ որ պահեցինք, հերիք չէր... չես ամաչում... Ինչի՞ չես գալի, քո ապրանքը տանում...

Դէ էլ ինչ ես նեղանում, քոյրիկ ջան, ես էլ հէնց դրա համար եմ եկել, ձեր տանն էի ման գալիս, չէի գտնում։

—Դէ արի, տար։

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դէմն է անում, երեսը դէպի իրենց գիւղը։

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է.

—Հա՛, էն բարեկենդանն եկաւ, իր բաներն իրեն սեցրի, տարաւ։

—Ինչ բարեկենդան... ինչ բաներ...

—Ա՛յ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերևից գալիս է, մեր տանն էր ման գալի. կանչեցի, մի լաւ էլ խայտառակ արի, շալակը տուի՝ տարաւ։

—Վայ քու անխելք տունը քանդի, որ ասում եմ, յիմար ես, յիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց։

—Այ էն կողմը։

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից։ Ճանապարհին բարեկենդանն ետ է մտիկ անում, տեսնում է մի ձիաւոր քշած գալիս է։ Գլխի է ընկնում, որ սա էն կնկայ մարդը պէտք է լինի։

Գալիս է, հասնում իրեն։

—Բարի օր, ախպէրացու։

—Աստծու բարին։

—Հո էս ճամբովը մարդ չանցկացաւ։

—Անց կացաւ։

—Ինչ ունէր շալակին։

—Եղ ու բրինձ։

—Հա, հէնց էդ եմ ասում։

—Ի՞նչքան ժամանակ կը լինի։

—Բաւականին ժամանակ կը լինի։

—Որ ձին քշեմ՝ կը հասնեմ։

—Ո՞րտեղից կը հասնես, դու ձիով, նա ոտով։ Մինչև քու ձին չորս ոտը կը փոխի՝ մին, երկու, երեք, չո՞ր՝ նա երկու ոտով՝ մէկ—երկու, մէկ—երկու, շուտ-շուտ կը գնայ, անց կը կենայ։

—Բա ինչ անեմ։

—Ինչպէս պէտք է անես, ուզում ես՝ ձիդ թող ինձ մօտ, դու էլ նրա պէս ոտով վազի, գուցէ հասնես։

—Հա՛, էդ լաւ ես ասում։

Վեր է գալիս, ձին թողնում սրա մօտ ու ոտով ճանապարհ ընկնում։ Սա հեռանում է թէ չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամբէն ծռում, քշում։

Էս մարդը ոտով գնում է՝ գնում է, տեսնում է, չհասաւ՝ նա է դառնում, տեսնում՝ ձին էլ չկայ։ Գալիս է տուն։ Նորից սկսում են կռուել, մարդը եղ ու բրնձի համար՝ կնիկը ձիու։

Մինչև օրս էլ էս մարդն ու կնիկը կռուում են դեռ։ Սա նրան է ասում յիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում։

---

63. Ագռաւն ու աղուէսը

Բախտի բերմամբ
Թէ պատահմամբ՝
Մի մեծ ագռաւ
Մի գունդ պանիր
Դաշտում գտաւ,
Կոցում առաւ,
Ծառին թռաւ,
Օ՛,ինչ պանիր, դեղին ոսկի...

Բայց նա չառաւ հաճն իսկի։
Աղուէսն անցաւ
Ծառի մօտով,
Գերուեց,
Էրուեց
Պանրի հոտով։
Վազեց՝ գնաց բերնի ջուրը
Եւ թուլացան կուռն ու ճուռը։

Աղուէսն էդտեղ՝ իրա ձեին,
Ծառի տակից՝աչքն ագռաւին,
Հեղիկ-նազիկ,
Փափկամազիկ,
Ացեց լեզուն
Անուշ-մեղուշ,
Թափեց-չափեց
Շաքար ու նուշ։
«Ի՞նչքան լաւն ես,
Ես քո գերին,
Քո էդ սիրիկ
Վառ աչերին,
Նուրբ ծալքերով
Զոյգ թևերին։
Մի դու մտիկ,
Էդպէս քթիկ,
Էդպէս վզիկ,
Մախմուր անդին,
Խաս ու դումաշ,
Ատլաս հագին։
Գիտեմ, անշուշտ իմ քուրիկի
Զայնն էլ կը լինի հրեշտակի։
Երգիր, քուրիկ, մի ամաչիր,
Իմ ուզածը մի մեծ բան չի։
Թէ որ չքնաղ էդ տեսքիդ հետ
Երգելում էլ եղար վարպետ,
Օ՜, կը դառնաս իմ սիրուհի,
Թռչունների մայր թագուհի»։
Ագռաւ ազին
Գովեստներից՝
Իրաւ ասին՝
Շըշմած, ուռած՝
Ագռաւային բկովը մին
Որ չկռաց,
Պանիրն ընկաւ կտցիցը ցած,
Շողոքորթն առաւ, գնաց։



64. Երկաթուղի

1.

—Մայրիկ, եկ այս կապոցը կայարան տար, ասաց տանտիրոջ որդին։

—Ես չեմ ուզում այնտեղ գնալ, ես վախենում եմ, լալով պատասխանեց Մացակը։

—Մացակ, ինչու՞ ես վախենում գնացքից, հարցրեց տանտիրոջ մեծ որդի Վահանը։

—Ես վախենում եմ, աղա. էն գիշեր նա մեծ մեծ կրակով աչքերով, փնչացնելով, շըշըացնելով էնպես եկաւ, էնպես վրայ պրծաւ, որ ես երկիւղից փախայ։

—Որ այդպէս է, այսօր կայարան մի գնա. վաղը միասին կը գնանք և ես քեզ ամեն ինչ ցոյց կը տամ։ Հետևեալ օրը Վահանն ամեն ինչ ցոյց տուեց։

—Աղա, շոգեմեքենան է արագ գնում, թէ մեր քահլան ձին։

—Իհարկէ, սա արագ է գնում, ասաց Վահանը։

Գնացքը գիշեր, ցերեկ անդադար գնում է, նա հանգիստ ու դադար չունի. միայն տեղ տեղ կայարաններում մարդիկ նրան ջուր, քարածուխ են տալիս և վերջ։ Գնացքը մի օրում քիչը քիչը հինգ հարիւր վերստ է կտրում։

—Հինգ հարիւր վերստ... զարմացած կանչեց Մացակը։

2.

—Գիտես, Մացակ, այդ մեքենան և երկաթուղին քեզ նման մի անգրագէտ տղայ է հնարել։

Անգրագէտ... Էդ ինչպէս իմացաւ, ինչպէս հնարեց, զարմացած կանչեց Մացակը։

—Պատմիր, եղբայր, պատմիր՝ տեսնենք, հարցրին Վահանի եղբայրներն ամեն կողմից։ Վահանն ասաց.—Մեզնից մօտաւորապէս հարիւր տարի առաջ, շատ հեռու աշխարհում, Անգլիայում մի բանւոր թէյի համար ջուր եռացնելիս տեսաւ, որ երբեմն գոլորշին թէյամանի ծածկոցը վեր է բարձրացնում ու գոլորշին էլ քուլայ քուլայ տակից դուրս է գալիս։ «Եթէ գոլորշին ամանի ծածկոցը բարձրացնում է, նշանակում է մենք գոլորշիով կարող ենք ծանրութիւններ բարձրացնել կամ ծանրութիւններ շարժել»—մտածեց նա և սկսեց փորձեր անել։ Շատ փորձերից յետոյ՝ նա հնարեց առաջին շոգեշարժ մեքենան. միայն շատ անկատար էր և լաւ չէր

գործում։ Ուրիշներն էլ փորձեցին, շատ բաներ աւելացրին, բայց դի լաւ չէր շարժւում։

Այդ բանը յաջողուեց Գէորգ Ստեֆէնսօնին։

—Նա ինչպէս գտաւ, հարցրին մանուկները միասին։

—Գէորգն աղքատ բանւորի որդի էր. տասներկու տարեկան տակում հայրը նրան տարաւ քարածուխի հանքերում բանելու։

—Եղբայր, քարածուխի հանքը նման է աղահանքին։

Այո՛, Գանիկ, շատ նման է, միայն քարածուխի հանքերում աւելի դժուար է աշխատելը։

Այ, այդտեղ փոքրիկ Գէորգն աշխատում էր և երբ մի օր էլ բան մեքենավարի օգնական նշանակեցին՝ ուրախացաւ, որովհետև մեքենաների հետ գործ ունենալ շատ էր սիրում։

Շատ անգամ նա մեքենաները քանդում, մաքրում, շինում էր շատ լաւ գիտէր նրա մասերը, նրանց կատարած գործը և այլն։

Գէորգն ուզեցաւ իմանալ, թէ ինչպէս են կազմած միւս մեքենաները. ինչպէս են նրանց շինում, ինչու՞ միւսների շինած մեքենաները լաւ չեն շարժւում։ Նա այս բանի մասին թէև շատ մտածեց, փորձեր արաւ, բայց ոչ միայն ինքն էլ չկարողացաւ, այլ հասկացաւ, որ իր ուժից բարձր է։

—Ինչու՞ չէր կարող, հարցրեցին մանուկները։

—Որովհետև նա անգրագէտ էր, նա աղքատ էր և կարդալ չէր կարող։

Գէորգը չյուսահատուեց։ Նա մի քանի տարի աշխատեց, փող աւաքեց և քսանուվեց տարեկան հասակում գնաց ուսումնարան. փոքրիկ աշակերտների հետ նստեց և գրել-կարդալ սովորեց։ Փողի պակասութեան պատճառով թողեց ուսումնարանը, նորից հանքում աշխատեց և կոպէկները տնտեսելով՝ գրքեր գնեց և շատ կարդաց։

Նա այժմ հասկացաւ, թէ ինչու՞ ուրիշների շինած մեքենաները լաւ չեն շարժւում, ինչու՞ նրանք չեն կարող բանեցնել։ Գէորգը նոր մեքենայ շինեց, երկաթուղի պատրաստեց և իր մեքենան նրա վրայ շատ լաւ շարժւեց։

Տեսնելով Գէորգի յաջողութիւնը՝ հանքի տէրը նրան օգնեց և 1825 թ. առաջին անգամ Գէորգը շինեց երկաթուղի. նրա շոգեշարժ մեքենան ոչ միայն լաւ շարժւում էր, այլ և բազմաթիւ վա-

զօնէրը մարդկանցով ու քարածուխով բեռնաւորուած մի տեղից միւսն էր տանում։ Այն օրից դէսն աշխարհի ամէն կողմերում տարածուեց Գէորգ Ստեֆէնսօնի երկաթուղին։

— Ինչ լաւ բան է կարդալ, տասց Մացակը. ինչ կը լինի ինձ էլ գրել-կարդալ սովորեցնէք։



Ի՞նչ է նկարել ուսուցիչը գրատախտակի վրայ։
Ի՞նչ է ցոյց տալիս աշակերտներին։
Ե՞րբ է ծագում արեւը և ինչ է անում այդ ժամանակ աքաղաղը։

Դիտեցէք այս պատկերը, պատմեցէք և գրեցէք։

66.

— Խնամարուն գուլպակը

Ձիւռաւոր երկրից մի դիւցազն եկաւ
և առանց խօսելու թագաւորի գահի
շուրջը մի կլոր գիծ քաշեց, լուռ ու մունջ
մի կողմ քաշուեց նստեց։ Թագաւորն
այս մարդու արտաքինից ոգին
չեռակայաւ. կանչեց իր խիտանիերին,
նրանք էլ մի բան չեռակայան։ Թագաւորը
շատ վատ դրութեան մէջ էր։ Նրա եա-
մար մէջ ամօթէր, որ իր գիրքուց
Մէջ մի իւլիք մարդ չէր գտնուում
դիւցազնի արածը եռակայելու համար.
Թագաւորը սատրիկ ներգաշաճ յայտնեց
ամբիոնին, որ երբ նրան պատասխանը
տուող չգտնէ, էլ ոչոքի կենդանի չի թողնի։

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամէն կողմ և վերջը մի տան մէջ գտան մի ջուլհակ։ Տեսնում են, որ այն մարդը մի տեղ նստած միևնոյն ժամանակ երեք զոյգ է շինում.— համ իր

կաուն է գործում, համ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ տանիքի վրայ ցորեն է փռել, մօտը մի ճիպոտ է տնկել. երբ ինքն իր կաուի թելերը շարժում է՝ կաուը գործում է, օրօրոցները օրօրւում են, այն ճիպոտն էլ շարժելով՝ տանիքի ծտերն է քշում, ցորենից հեռացնում։

Նրանք այս բանի վրայ շատ են զարմանում։ Յետոյ նրան պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, թագաւորի գահի շուրջը մի գիծ քաշեց, և ոչ ոք չկարողացաւ իմանալ, թէ դրանով ինչ էր ուզում ասել։ Վեր կաց, գնանք. եթէ դու նրա միտքն իմանաս, թագաւորը քեզ մեծ պարգևներ կը տայ։

Զուլֆակը մի քիչ մտածում է, յետոյ առնում է երկու վէգ, մի վառեկ և գնում է հեռները։ Հասնելով թագաւորի մօտ՝ վէգերը հանում է և ձգում է դեսպանի առաջ։ Դեսպանը գրպանից մի բուռն կորեկ է հանում, շաղ տալիս գետնին։ Զուլֆակը բաց է թողնում վառեկը, որ իսկոյն սկսում է կոցահարել կորեկը։

Այս բանը տեսնելով՝ դեսպանը տրեխները հագնում է, սուս ու փուս դուրս գնում։

Թագաւորը Զուլֆակին հարցնում է.

«Այդ ինչ արիր»։ Զուլֆակը պատասխանում է. «Այդ մարդն եկել էր ասելու. «Մեր թագաւորը դալու է քեզ հետ պատերազմելու, քո երկրին տիրելու. խոնարհւում ես, թէ կռւով ես ուզում պատասխանել»։

Ես նրա առաջը վէգեր ձգելով հասկացրի. «Դուք մեզ համար երեխաներ էք, գնացէք, վէգ խաղացէք. դուք ով, մեզ հետ կռւողներն ով»։ Նա իր շաղ ուած կորեկով ուզեց հասկացնել թէ՝ «Մեր զօրքերն անթիւ, անհամար են, դուք ինչ կարող էք անել»։ Երբ ես վառեկս բաց թողի ու նրա կորեկը կերաւ՝ դրանով պատասխանեցի. «Մեր մի մարդը ձեր հազար մարդուն կը ջարդէ. գնա, պատմիր քո թագաւորին»։

Թագաւորն այս բացատրութիւնը լսելով՝ մեծամեծ պարգևներ տուեց Զուլֆակին և ուզեց նրան վէգերի պաշտօն տալ։ Զուլֆակը պարգևների մի մասով բաւականացաւ և թագաւորին ասաց.

«Ոչ, թագաւոր, թող որ Զուլֆակ մնամ. միայն այս եմ խնդրում

քեզանից, որ չմոռանաս, թէ հասարակ արհեստաւորի մէջ էլ կը գտնւի մէկը, որ այսպիսի նեղ օրերում քեզ պէտք կը գայ։

---

67. Պրինցն ու ծիծեռնակը

1.

Շատ դարեր առաջ Անգլիայի կայսրը մի գեղեցիկ որդի ունէր, որին ամենքը «Երջանիկ պրինց» էին կանչում։ Եւ իսկապէս պրինցը շատ երջանիկ էր, որովհետև ամենքը նրան սիրում էին և նա ապրում էր անհոգ ու առանց վշտի։

Բայց երջանկութիւնն երկար չտևեց. կայսեր սիրատուն որդին՝ «Երջանիկ պրինցը» մեռաւ։ Նրա մահը վշտացրեց ամենքին։

Ժողովրդի ներկայացուցիչները որոշեցին մի արձան կանգնեցնել «Երջանիկ պրինցի» յիշատակին ու զարդարել նրան թանկագին քարերով ու ոսկով։

Մի տարի անցած՝ քաղաքի հրապարակի վրայ կանգնած էր «Երջանիկ պրինցի» արձանը, որի թիկնոցը զարդարուած էր ոսկէ տերևներով, սրի կոթը՝ թանկագին կարմիր սուտակով, իսկ աչքերը գեղեցիկ մուգ կապոյտ թանկագին քարեր էին, որ փայլում էին աստղերի նման։

—Պրինցը գեղեցիկ է հրեշտակի պէս, ասում էին մանուկները, հիացած նայելով պրինցի արձանին։

2.

Տարիներ անցան։ Մէկ անգամ, աշնանը, այդ քաղաքով թռչում, անցնում էր մի ծիծեռնակ։

Ամբողջ օրը նա թռչում էր և երեկոյեան մտածեց քնել, հանգստանալ։ Քաղաքի հրապարակի վրայ տեսնելով «Երջանիկ պրինցի» արձանը՝ իջաւ, նրա ոտքերի առաջ կանգնեց։

—Ա՜յ հրաշալի տեղ, բացականչեց նա. որքան ազատ և արձակ է շուրջս. իհարկէ, ես այստեղ կը մնամ, կը հանգստանամ։

Ծիծեռնակը գլուխը կոխեց թևերի տակ և պատրաստւում էր քնելու, մէկ էլ յանկարծ նրա գլխին մի կաթիլ ընկաւ։

—Զարմանալի բան, մտածեց Ծիծեռնակը.—երկինքը պարզ է, աստղերը փայլում են, բայց անձրև է գալիս։

Ծիծեռնակի վրայ ընկաւ երկրորդ կաթիլը։

Նա ուզում էր թռչել, երբ նրա գլխին ընկաւ երրորդ կաթիլը։ Նա բարձրացրեց գլուխը և տեսաւ «Երջանիկ պրինցին»։ Նրա աչքերից հոսում էին արցունքի կաթիլներ և այտերի վրայից գլորւում գետին։ Լուսնի ճառագայթները լուսաւորում էին նրա երեսը։ Նա ա՛յնքան տխուր էր և ա՛յնքան գեղեցիկ, որ Ծիծեռնակի սիրտը թնդաց կարեկցութիւնից։

—Ո՞վ ես դու, հարցրեց նա։

—Ես «Երջանիկ պրինցն եմ»։

—«Երջանիկ, բայց այնպէս դառն արտասուում ես, որ ինձ թրջեցիր քո արցունքներով..Պատմիր, խնդրեմ, ինչ է լացիդ պատճառը»։

—Ես ինձ շատ բախտաւոր էի զգում և կարծում էի, թէ բոլորն էլ բախտաւոր են, բոլորն էլ ինձ պէս գոհ են իրենց կեանքից։ Ինձ անւանում էին«Երջանիկ պրինց» և յիրաւի ես երջանիկ էի...

—«Եւ ահա, առանց իմանալու թէ ինչ է վիշտն ու տանջանքը, ես մեռայ։ Այժմ այստեղ բարձունքից նայում եմ շուրջս և տեսնում եմ մարդկանց չքաւորութիւնն ու տանջանքները։ Այս իմ պողպատէ սիրտն անդամ չի կարող չարտասուել, տեսնելով այդ տանջանքները։ Ահա, նայիր այնտեղ, այն փոքր ու նեղ փողոցին, ուր շինուած է մի աղքատիկ տնակ։ Լուսամուտի մօտ նստած է մի կին, ոսկեթելերով ասեղնագործում է մի պալատական տիկնոջ զգեստ։ Նայիր նրա գունատ և յոգնած դէմքին, նայիր նրա ծակծկուած մատներին, նայիր վերջապէս նրա մանկանը, որ հիւանդ պառկած է աղքատիկ անկողնում։ Նրա շրթունքներն այրւում են տաքութիւնից, նա նարինջ է խնդրում մօրից, իսկ խեղճ մայրը բացի ջրից ոչինչ չի կարող տալ տանջւող մանկանը։ Սիրելի Ծիծեռնակ, խնդրում եմ, բարի եղիր, կցդվդ դուրս քաշիր իմ սրի վրայից թանկագին քարը և տար այդ թշուառ ընտանիքին։ Ես ինքս կը տանէի, եթէ շարժուել կարողանայի։

Ծիծեռնակը նայեց «Երջանիկ պրինցի» երեսին և տեսնելով նրա տխուր հայեացքը, խղճաց և ասաւ.—Թէև այստեղ շատ ցուրտ է և ես ողանեերին այնքան էլ չեմ սիրում, որովհետև նրանք ինձ վրայ քարեր են նետում. բայց մի գիշեր կը մնամ մօտդ և կը կատարեմ քո ցանկութիւնը։

3.

Ծիծեռնակը կցտահարեց թանկագին կարմիր սուտակը և թռաւ դէպի աղքատիկ տունը։ Մանուկը տաքութեան մէջ անքուն էր,իսկ մայրը կարը ձեռին, յոգնածութիւնից նստած տեղը քնել էր։ Ծիծեռնակը դրեց թանկագին քարը նրա առաջ։ Նա իր թեւերով հովւահարում էր մանկան այրւող մարմինը։

—Ի՜նչպէս հով է, ինչ լաւ է, շընջաց փոքրիկը և քաղցը քնեց։

Ծիծեռնակը վերադարձաւ, ամէն ինչ պատմեց«Երջանիկ պրինցին» և ինքը քաղցը քնեց նրա ոտների տակ։

Միւս օրը Ծիծեռնակն ասաց.

—Մնաս բարև, ես գնում եմ։

—Ծիծեռնակ, Ծիծեռնակ, տխուր ձայնով ասաւ պրինցը. տես, այն տնակում մի երիտասարդ կայ, նա նստել է սեղանի առջև և արագ-արագ գրում է։ Ամբողջ օրը նա ոչինչ չի կերել և ոչինչ չուզի ուտելու։ Գրում է, անդադար գրում, թէև նրա մատները սառել են ցրտից։ Եթէ վաղը չվերջացնի իր աշխատանքը, կրկին մի օր քաղցած կը մնայ։

Ի՜նչ, մի սուտակ էլ տանեմ նրան։

—Դժբախտաբար էլ չունեմ, ասաւ պրինցը։ Թանկագին քարերից մնացել են միայն աչքերս. դու պէտք է դուրս քաշես աչքիս մէկը և տանես նրան։ Նա կը ծախի թանկագին քարը, իր համար կերակուր և փայտ կը գնի ու հանգիստ կը վերջացնի իր աշխատանքը։

Ծիծեռնակը այդ էլ կատարեց։

—Ի՜նչ հրաշալի քար է, բացականչեց երիտասարդը. կարող եմ տեսնել հանդիստ գրել յօդուածս։

Բախտաւորացնելով երիտասարդին՝ Ծիծեռնակը վերադարձաւ «Երջանիկ պրինցի» մօտ և նախկին դիշերւայ նման քաղցը քնեց։

Հետեւեալ օրը Ծիծեռնակն ասաւ.

—Սիրելի պրինց, ես պէտք է բաժանւեմ քեզնից։

—Ո՜հ, աղաչում եմ քեզ, մի օր էլ մնաս ինձ մոտ։

—Տես, այնտեղ՝ պարտէզում կանգնած է մի աղքատ աղջիկ և լաց է լինում։ Նա լուցկի ծախող է. նրա սառած ձեռքերից վայր ընկաւ արկղը և բոլոր լուցկիները թափուեցին առուն։ Այժմ, եթէ առանց լուցկիների և առանց փողի գնայ տուն, հայրը նրան կը ծեծի. նրա կիսամերկ մարմինը դողում է ցրտից, բայց նա վախենում է տուն գնալ։ Հանիր, խնդրեմ, միւս աչքս և տար՝ նրան տուր։

—Թող քո ասածը լինի. ես մի գիշեր էլ կը մնամ, բայց քո միւս աչքն ես անկարող եմ հանել. չէ՞ որ դու բոլորովին կը կուրանաս։

—Փոքրիկ ծիծեռնակս, խնդրում եմ, մի մերժիլ խնդիրս, ազատիր փոքրիկ աղջկան ծեծից։

Ծիծեռնակը ցաւելով կատարեց նրա խնդիրը, հանեց երկրորդ աչքն էլ և թռաւ, հասաւ աղջկան, ճարպիկութեամբ ձգեց նրա բուռը թանկագին քարը և վերադարձաւ։

—Ա՛յ լաւ ուլունք, ինչ փայլուն է, բացականչեց փոքրիկը և մոռանալով իր վիշտն, ուրախ ուրախ վազեց տուն։

Վերադառնալով պրինցի մոտ՝ ծիծեռնակն ասաւ.

—Այժմ ուզեմ, չուզեմ պէտք է մնամ քեզ մոտ, որովհետև դու բոլորովին կոյր ես։

—Ոչ, ոչ. բարի թռչնիկս, շտապիր, թռիր Եգիպտոս, այստեղ դու կը սառչես։

—Ես միշտ քեզ մոտ կը մնամ, ասաւ ծիծեռնակը, փաթաթուելով պրինցի ոտքերին և քնեց։

4.

Այնուհետև ծիծեռնակը շարունակ նստած պրինցի ուսին, պատմում էր նրան այն ամենը, ինչ որ տեսել էր օտար երկրներում։

Պատմում էր վարդագոյն եգիպտական արագիլների մասին, որոնք Նեղոսի միջից ոսկէ ձկնիկներ են որսում, ուղտերի քարաւանների մասին, որոնք շարէշար անցնում են անապատով իրենց տէրերի հետ միասին. զարհուրելի օձերի մասին, որոնք փաթաթուում են ամենաբարձր արմաւենիներին և իրենց գոյներով չեն զանազանուում նրա տերևներից։ Պատմում էր նոյնպէս, որ Եգիպտոսի թագաւորները կամ փարաւոններն իրենց համար հսկայական բարձրութեան զերեզմանատներ են շինել տուել, որոնք կոչւում են պիրամիդներ. այդ պիրամիդների մէջ դրուած են փարաւոնների դիակները, որոնք լցուած են զանազան անուշահոտ խոտերով և փաթաթուած մետաքսէ շորերով. նրանց դիակները հազարաւոր տարիներ առանց փչացնելու մնացել են այդ պիրամիդների մէջ։

—Բարի, սիրելի թռչնիկս, ասաւ պրինցը. քո պատմութիւնները շատ հետաքրքիր են, բայց աւելի հետաքրքիր է ինձ համար լսել մարդկանց տանջանքների ու չքաւորութիւնների մասին։ Թռիր, սիրելիս, անցիր ամբողջ քաղաքով, նայիր ուշադրութեամբ չորս կողմդ և ինչ որ տեսնես, ասա՝ պատմիր։

Ծիծեռնակը թռաւ, անցաւ նեղ ու կեղտոտ փողոցներով և հրնացած խրճիթների խաւար ապակիների յետևից տեսաւ գունատ ու նիհար դէմքեր, քաղցած ու հիւանդ մանկիկներ։ Կամուրջի վրայից թռչելիս նա տեսաւ երկու երեխայի, որոնք միմեանց սեղմուած՝ կուչ էին եկել մի փոսի մէջ և մէկը միւսին ասում էր. «Ի՞նչ լաւ կը լինէր՝ մի ուտելու բան գտնէինք»։

Ծիծեռնակը յետ դարձաւ և բոլորը պատմեց։

«Երջանիկ պրինցը» մտքի մէջ ընկաւ և ասաւ.

—Ինձ ծածկել են ոսկէ թերթիկներով։ Ես շատ ուրախ կը լինեմ, եթէ դու պոկես այդ թերթիկները և բաժանես բոլոր աղքատներին և թշուառներին։

Ծիծեռնակը թերթ թերթի յետևից պոկ էր տալիս ու տանում, բաժանում դժբախտներին։ Հետևելով նրանց, նա նկատեց, որ հետզհետէ նիհար ու գունատ մանուկները լցւում ու կարմրում են, նրանց տխուր երեսները փայլում են ուրախութիւնից, հիւանդները առողջացել են, քաղցածները կշտացել։

«Մենք այժմ հաց ունենք», «իսկ մենք կաթ էլ ունենք», յայտնում էին միմեանց մանուկները։

Ձիւնը ծածկեց գետինը, սառուցեալ ցուրտն սկսեց։ Խեղճ ծիծեռնակը շատ էր մրսում, բայց չէր ուզում թողնել իր սիրելի պրինցին։

Նա թևերն արագ արագ թափահարում էր, որ սաքանայ, բայց ի-զուր. նա զգաց, որ այլ ևս չի կարող ապրել և պիտի մեռնի։ Վերջին այժը հաւաքեց, թևերը թափահարեց, թռաւ, «Երջանիկ պրինցի» ուսին նստեց և շշնջաց.—Մնաս բարև՛...

—Գնաս բարև, սիրելիս, գու ամեն ինչ արիր ինձ համար, այժմ կարող ես գնալ Եգիպտոս։ Համբուրիր ինձ վերջին անգամ. ես քեզ շատ սիրեցի։

—Ես Եգիպտոս չեմ գնում, կամաց շշնջաց ծիծեռնակը. ես գնում եմ մահուան աշխարհը, բայց գու մի տխրիլ, ես այլ ևս չեմ մրսում, ես քնել եմ ուզում, քունս տանում է։

Սատաւ թռչնիկը և համբուրելով պրինցին՝ մեռած ընկաւ նրա ոտքերի առաջ։

Այդ միջոցին արձանի ներսից մի ձայն լուեց.«Երջանիկ պրինցի» պողպատէ սիրտը վշտից փշրուեց։

68.

Գիրքերն իկաւ, ապրդունվին իլուն,
Լուսնեակին անուշ-գոլգրլաց,
Ժաղկունվին ամվին նոր իուն մրան
Հմկի գողով, լուսնի լոդով
Հարիանդ-մարմանդ իուն մրան։
Ինչ էլ ինէի, ոսկի ապրդեր,
Վարդ ու սոխակ, իուն եղէի,
Օրոր-ժողեր, ղորոր-հոլեր,
Հինուշ-անուշ իուն իղէի։
Իմ սայր դարդեր, ախ, ժուկ-ցաւեր,
Ինչ էլ մուշ-մուշ իուն եղէի։

---

69. Աղի բիւրեղներ

1.

—Հայրիկ, տես, ինչ գեղեցիկ աղի բիւրեղներ ունեմ։

—Քեզ ով տուեց, հարցրեց հայրը։

—Ես եմ պատրաստել, ես եմ ստացել։

—Ի՞նչպէս ստացար, Բազիկ։

—Հայրիկ, երէկ ուսուցիչը մեզ պատմեց։ Երբ տուն եկայ, փորձեցի. ափսէի մէջ բաւական աղ լուծեցի և այս բրդէ թելերն էլ նրա մէջը կախեցի ու դրի գոլ վառարանի վրայ։ Գիշերը հեռ-գհեռէ ջուրը գոլորշիացել է և այս գեղեցիկ, խորանարդաձև աղի բիւրեղները կազմուել։ Հայրիկ, ափսէի պատերին ու յատակին աղի շատ բիւրեղներ կային, բայց ամենից մեծերն ու գեղեցիկները սրանք էին։ Ուսուցիչը մեզ պատմեց, որ աղի լճերից ու ծովերից արևը ջուրը գոլորշիացնում է, աղի բիւրեղները մէկ մէկու վրայ նստելով՝ մեծ մեծ կտոր աղ են կազմում։

—Երևի ուսուցիչն աղահանքի մասին էլ պատմեց,հարցրեց հայրը։

—Ոչ, հայրիկ, նա խոստացաւ այս կիրակի աղահանք տանել և այնտեղ ամեն ինչ ցոյց տալ։

—Բազիկ, հապա պատմիր, ինչ տեսար աղահանքում։

—Օ՜, հայրիկ, շատ բան տեսայ, շատ զարմանալի բաներ կային այնտեղ։

—Գիտեմ, հայրիկ, աղահանքը գետնի տակն է։ Հանքի տերը լապտերն առած առաջնորդեց նեղ, մութ անցքով։ Մենք գնացինք. շատ գնացինք, քիչ գնացինք, չգիտեմ, յանկարծ կամարաղարդ մի մեծ դահլիճ մտանք։

Տեղ տեղ սիւներից լապտերներ էին կախած։ Դահլիճի մէջ հարիւրաւոր բանւորներ էին ապրում. խումբ խումբ մարդիկ փէտատներով աղ էին քանդում։ Ուրիշները բահերով ու թիերով հաւաքում՝ պատգարակներն էին լցնում։ Մի այլ խումբ էլ դանդաղ կերպով այդ աղերը դուրս էր առնում։ Քիչ էլ գնացինք, իջանք երկրորդ յարկը. ամէն տեղ աշխատանքն եռ էր գալիս։ Տեղ տեղ բանւորներն աղահանքի այս կամ այն պատը փորելով՝ ներս էին սողում։ Մի քանիսն էլ նեղ անցքերում մի կերպ նստած, պառկած աշխատում էին։

—Խեղճ բանւորներ, ինչպէս նեհար էին։ Մէկ էլ ահա մեր առաջ բացւեց փոքրիկ լճակ։ Գիտեմ, հայրիկ, աղի լճակ, աղաջուր էր նրա մէջ։ Մենք նստեցինք նաւակը, անցանք հանքի միւս կողմը։ Ամէն տեղ աշխատանք ու աշխատանք էր։ Քիչ էլ գնացինք, տեսանք՝ մի մեծ գամբիւղ վերևից ներքև է գալիս. նրա մէջ մարդիկ կային նստած։ Մենք իմացանք, որ այդ գամբիւղով մարդիկ վեր ու վար են անում։

—Աղահանքի շատ կողմերում մենք տեսանք աղի մաքուր, բիւրեղացած կաստներ։ Վերջում մտանք մի մեծ սենեակ։ Օ՜...սքչափ գեղեցիկ էր այդ մասը...Ամբողջ սենեակն աղի մաքուր բիւրեղներից էր կազմւած և լոյսի տակ թանկագին քարերի նման փայլփլում էր։ Հէքիաթների մէջ լսածս՝ իմ աչքերով տեսայ։ Երբ դուրս եկանք, ուսուցիչը մեզ պատմեց, որ Կողբի ու Կաղզւանի աղահանքերն էլ շատ գեղեցիկ տեսարաններ ունեն։

---

70. Ոբինզոնի երկիւղը

Մի առաւօտ լամայի վրայ ուտելիք բարձեց, զէնքերը վերցրեց, հովանոցն առաւ և ճանապարհ ընկաւ։ Առաւակից անցնելիս երբ իր պատկերը ջրի մէջ տեսաւ, սաստիկ զարմացաւ. իսկ և իսկ վայրենի մարդ. ոտքից մինչև գլուխ լամայի բրդոտ մորթով ծածկւած՝ տեսնողին սարսափեցնում

էր. ինքն իր վրայ բաւական ծիծաղելով՝ շարունակեց ճանապարհը։ Առաջին գիշերը ծառի վրայ քնեց, միւս օրը ճանապարհը շարունակեց. շատ չէր գնացել, երբ յանկարծ կայծակի խփածի նման՝ քարացած տեղում մնաց։ Նրա մա-

գերը բիզ բիզ կանգնեցին, գոյնը թռաւ և դողդողաց. աւա-
զի վրայ տեսել էր մարդու ոտքի հետքեր, իսկ քիչ հեռուն
մարդկանց գլխի, ոտքի ու ձեռքի ոսկրներ։ Ռոբինզոնը հաս-
կացաւ, որ դա մարդակեր վայրենիների գործն է և նրանց
ոտնատեղերն են։ Նա վախից դէս ու դէն նայեց, մէկ էլ
բոլոր ուժով այնպէս արագ վազեց, կարծես՝ յետևից մար-
դակերներն էին ընկել։

Ռոբինզոնն այնչափ վազեց, որ շնչասպառ գետին գը-
լորուեց։ Երբ ուշքի եկաւ, աչքերը բացեց, տեսաւ ոտքերի
մօտ իր լաման պառկած։ Նա վեր կացաւ, ուզեց նորից
փախչել, բայց ուժ չունէր։ Երկիւղը սրտում, դէս ու դէն
նայելով՝ վերադարձաւ իր այրը և հանգստացաւ,

—Չէ, ինչպէս երևում է, ուրիշ տեղից են եկել այդ
մարդակերները. եթէ նրանք այս կղզու վրայ ապրէին, այս
երեք տարուայ մէջ ինձ կը պատահէին. իզուր երէկ այնչափ
վախեցայ և անհանգստացայ, ասում էր Ռոբինզոնն ինքն
իրեն։

Որպէսզի բոլորովին ապահով լինէր, այրի առաջ բազմա-
թիւ ծառեր տնկեց և փոքրիկ անտառ դարձրեց։ Այրի դռան
առաջ հողի թումբ շինեց, այնպէս որ հեռուից ոչինչ չէր ե-
րևում։ Այրի մէջն էլ ստորերկրեայ անցքեր շինեց, որ թըշ-
նամու եկած ժամանակ այնտեղ մտնէր և պաշտպանուէր։

---

71. Ուրրարը

—Էս ինչ ծուխ է բարձրանում անտառի միջից, ով է
այնտեղ կրակ վառել, սարսափելով ինքն իրան հարցնում
էր Ռոբինզոնը։ Նա բարձրացաւ սարի գագաթը և ինչ տե-
սաւ... Ծովի ափին երեսունի չափ մերկ, վայրենի մարդիկ
մի մեծ խարոյկի չորս կողմը պար բռնած՝ թռչկոտելով
պարում էին։ Նրանցից քիչ հեռու երկու գերի գլուխները
քաշ գցած՝ կանգնած էին։ Մէկ էլ մի քանիսը գերիներից
մէկին գետին գլորեցին և մորթեցին։

—Ա՛յ դուք անպիտան, կատաղի մարդիկ, ատամները
կրճատելով մրմռաց Ռոբինզոնը։

Միւս գերին սարսափից փախաւ. հինգ հոգի նրա յետե-
ւից վազեցին։ Գերին աւելի արագ էր վազում և բաւական
առաջ էր ընկել։ Նա ընկաւ ծովը, լողալով գնաց. վայրենի-
ներից երկուսը նրա յետևից լողալով՝ հալածում էին։ Գերին
դուրս եկաւ ցամաք և վազեց ուղիղ դէպի Ռոբինզոնի բնա-
կարանը։ Վայրենիները հետապնդում էին։

—Պէտք է օգնել խեղճ գերուն, պէտք է ազատել վայրե-
նիներից, մտածեց Ռոբինզոնը և տէգը վերցրած՝ ցած վազեց։

—Կանգնիր, ձայն տուեց Ռոբինզոնը գերուն. կանգնիր,
ես քեզ կ'օգնեմ։

Գերին սարսափեց, երբ գազանի մորթու մէջ փաթաթ-
ուած Ռոբինզոնին տեսաւ։ Ռոբինզոնը ձեռքերով հասկացրեց,
որ նրան պաշտպանելու է եկել։ Ռոբինզոնը տէգի մի հար-
ուածով վայրենիներից մէկին գետին գլորեց և հասաւ միւ-
սին. թէև սա նետով Ռոբինզոնին խփեց, բայց կաշէ հա-
գուստը չծակեց։

—Դու էլ կորիր, անպիտան, ասաց ու մի հարուածով
նրան էլ գետին փռեց։

Գերին մնացել էր կանգնած։ Ռոբինզոնը ձեռքերով,բա-
րեկամական նշաններով կանչեց. նա սիրտ առաւ, վայր ըն-
կաւ, Ռոբինզոնի ոտը գրեց իր վզին, ուզում էր հասկացնել,
թէ ես քո գերին եմ։ Ռոբինզոնը նրան բարձրացրեց, չվա-
խեցնելու համար հանեց իր գլխարկը և նշաններով ցոյց տը-
ւեց, որ ինքն էլ մարդ է, նրա բարեկամն է։ Ապա երկու-
սով միասին վայրենիների դիակներն աւազի մէջ թաղեցին
և գնացին այրը։ Երկուսն էլ զինուած կանգնել էին այրի
դռան առաջ. նրանք որոշել էին մինչև վերջը կուել։ Թէև
հեռուից վայրենիների ձայները լսեցին, բայց երբ մութն
ընկաւ, ձայները կարեցին, ամեն ինչ հանգստացաւ։ Ռո-
բինզոնը հասկացաւ, որ նրանք հեռացել են, դրա համար եր-
կուսով մէկտեղ այրը մտան։ Որովհետև այդ նշանաւոր օրը

ուրբաթ էր, դրա համար Ռոբինզոնը գերու անունը դրեց Ուրբաթ։ Ռոբինզոնը լամայի կաշուց Ուրբաթի համար գոգնոց շինեց և նրա մերկութիւնը ծածկեց.

---

1) Ի՞նչ է ուտում աղջիկն։ 2) Ի՞նչ է անում շունը։ այդպէս ախորժակով։

3) Այժմ ի՞նչ է անում։ 4) Ի՞նչ է անում աղջիկը։

Դիտեցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և գրեցէք։

73. Խորամանկ աղուէսը

1.

Հերու ամառ մեր տանը մի փորձանք պատահեց։

Զարման տատը մի օր գնաց անտառը սունկ հաւաքելու։ Ճրագները էլ վառեցին ու հանգցրին, մեր Զարման տատը չկայ ու չկայ էլ ում աչքը քուն կը գայ։

Խուսափը բաբ պարկէց։ Անկրտնանք
գայլաբերը բռնելու համար մի փոս է
իրենց փորած. պառաւ, դու պառաւ,
գնա՛ ու բրբմի՛ փոսի մէջ։ Զարմանից
ասուազ փոսն իւն ընկած լինում մի գայլ
ու մի աղուէս։ Այդ իրիրը մասիրը
իրկիւղից մինչև ծէգը բացուելը կուղ
իւն իկել։ Ուայել նստած։ Հուսուդիմիրը
որսորդը ապյակը լցած գալիս-գած մարդ
գայ, ինչ գրեանի, իր փոսը գայանիրով
լցվել է։ Որսորդը նէց կարծում է։ թէ
պառաւ Զարմանը էլ գայան է։
Ինչ մարդ, որսորդ աղբէր, փոսի մէջից
մկկրալով կանչում է Զարմանը. ապարիր ինչ ա։
Նէր վիճակից։ — Ես գունը չեմ ազատի, պառաւ,
դու այդ ինչ գրեց իս ընկել։

Ինչ անէր որսորդը, տալիս է գայլին՝ շանսատակ անում ու
մինչև պառաւին ազատելը, աղուէսը մի հնարքով ծլկում է, ու
փախիր որ կը փախչես։ Որսորդը մեր տատին տայրակին նստա-
ցրած բերեց։

— Ինչ եղաւ, ինչ եղաւ, հարցնում էինք մենք. գայլն ինչ էր
անում, աղուէսը ոնց էր։

Զարման տատը մեզ ժողովեց իր գլխին ու սկսեց իր պատ-
մութիւնը։

— Ինչ ասեմ, այ ձեզ մատաղ, ասեց տատը։

Թրբմի ընկայ փոսն ու աչքերս սեւացան։ Շուրջս նայեմ՝ ինչ
տեսնեմ, այս կողմս գայլն է պզզել, այն կողմն աղուէսը, երկիւ-
ղից տեղից չեմ շարժւում։

Մէկ էլ աղուէսը մօտեցաւ գայլին ու փսփսաց։

— Գայլ ախպէր, ինչու չես պառաւին ձեռում, պատատորում,
գոնէ վերջին անգամ մի կուշտ իրիկնատաց անենք։

— Ինչ իրիկնատաց, ինչ ճաշ. այս օրին հաց կուլ կ'երթայ։

Յետոյ սկսեցին գայլն ու աղուէսն իրար հետ խօսք ու զրոյց
անել։ Վերջն աղուէսը պատմեց։

2.

— Վաղուցուն բան եմ պատմում. ես շատ փոքր էի. մի պատ-
ուական բուն ունէինք, տատը կողմից էլ ու մուտ անելու տեղ ու-
նէր. եթէ մի ծակից քիչ երկիւղ էինք զգում՝ ձեռաց միւս ծակն
էինք մտնում ու գէ, հիմի ինչքան կ'ուզես պառաւը, որ մեզ զբա-
նեա։ Ամառուի հէնց բերանումը մի պատիկ գիւղ կար. օր չէր անց
կենում, որ հաւեր չուտէինք։

— Շատ անգամ մեր մայրը ձգում էր քարափի լանջին ու ա-
բեակող անում, իսկ մենք տափի վրայ՝ բաց տեղը սկսում էինք
խաղալ ու վազվզել մայրիկիս չորս բոլորքը։ Մէկ էլ մայրիկս բե-
բում էր մի կենդանի մուկ, տալիս մեզ ու ինքը հեռից մտիկ էր
տալիս և զարմանում, տեսնելով թէ ինչ ենք բերում խեղճ միան
գլուխը։ Երբեմն էլ թռչուններ որսալ էր սովորեցնում մեզ. հէնց

տեսնում էր, որ թռչնիկը թփերի միջից սկսեց իր ծլլոցը, զգուշությամբ մարաղ մտած՝ մտենում էր ու հապ, բռնում էր ողջ ողջ ու տալիս մեզ։ Ինչ որ անելու էք, ասում էր, առաջ լաւ մրտածեցէք, չափ ու ձև արէք, տասը չափեցէք, մէկ կտրեցէք։

—Մէկ անգամ գիւղացիք շներն արձակել էին մայրիկիս վրայ. անիրաւ շներն եկան և ուղիղ մեր բնի գլխին կանգնեցին ու սկսեցին քանդել։ Փորում են ու փորում։ Կուչ ենք եկել մենք բնի մէջ ու սրտերս տրրփտրրփում է. աշկարայ տեսնում ենք, որ մեզ պրծնում չկայ. որ ծակի բերանին մտենում ենք, շներ են կանգնոտած... Ա՜խ, այն ինչ օր էր. ես, քոյրերս, եղբայրներս բոլորս միասին ընկանք մարդկանց ճանկը։ Բոլորին մէկ մէկ կոտորեցին ու ինձ միայն կենդանի թողին։ Տարան ինձ իրանց տունը, վգնոցը շլինքս անց կացրին ու բակումը շղթայով ծառիցը պինդ կապեցին։ Լալիս եմ, ողի արտասուք եմ թափում, մայրիկս միաքս եմ բերում։

—Մութն էր, մէկ էլ տեսնեմ՝ մայրիկս բակի դռան առաջին է. էնպէս կամաց, էնպէս սուսիկ փուսիկ է գալիս, որ կարծես ոտերը գետինը չեն առնում ու օդի մէջ է ման գալիս, անդադար քիթը վերև բռնած՝ այս ու այն կողմը հոտոտում էր. ուրախութիւնից սկսել եմ կոկոնձալ ու մայրիկիս կանչել. իսկ նա պառկել է ու անշարժ մնացել։ Ճարս կարեց, ձէն ու ծպտուն չհանեցի։ Այդ ժամանակ նա տեղիցը կանգնեց, չորս կողմը լաւ աչք ածեց ու յանկարծ պատի գլխովն իրան ներս գցեց՝ ոնց որ մի թրուչուն։ Մոտեցաւ ինձ, սկսեց լալ։

—Ողիզ բալիկս, այս ինչ կրակի մէջ ես ընկել դու։ Յետոյ հարցրեց. հապա ո՞ւր մնացին մէկ էլ քոթոթներս։—Բոլորին, ասացի, աչքիս առաջին կոտորեցին։ Ինչ ա՜խ ու վա՜խ։ Յետոյ նա վեր կացաւ ու սկսեց բակի մէջ նստած հնդուհաւերին խեղդոտել։ Օձի պէս սողալով՝ մտենում էր հնդուհաւին ու էլ շարժուելու ժամանակ չէր տալիս, ատամները թաղում էր կոկորդի մէջ։ Տասնուչորս հատ խեղդոտեց ու բերեց՝ առաջիս շարեց.—Դէհ, քոթոթիկս, ասաց նա, էլ քաղցած չես մեռնի։ Մնաս բարև. թէ որ բան է՝ կենդանի մնացիր, յարմար միջոց ճանկեցիր, պրկ արի ու շունչդ անտառու-

մը քաշիր։ Ով գիտէ, շատ կարելի է, նորից իրար կը հանդիպենք։

3.

—Գերութեան մէջ ինչպէս էիր օրերդ անցկացնում, հարցրեց գայլն ալէքսին։

—Չեմ կարող գանգատուլոր լինել, գայլ ախպէր, լաւ կեանք էի քաշում։ Ուտելիք՝ ինչ որ կամենաս. այնպէս սովորել, ընտելացել էի, որ ուր գնում էր տէրս՝ ես յետևիցն ընկած՝ նրանից չէի բաժանուում։ Մի անգամ տէրս երեք օր, երեք գիշեր սրահիցը դուրս չթողեց։ Տխրեցի, տրամեցի ու մաքուսս դրի փախչել։ Սկսեցի գիշերները գետինը փորել։ Փորեցի, ծակ բաց արի ու ազատութիւն...

—Գնում եմ, գայլ ախպէր, եթէ շները հոտս առնեն, ողջ տեղ չեն թողնի. մէկ էլ՝ առաջս մի մարդ է դուրս գալիս .. Երկիւղից սիրտս փորս ընկաւ...

—Զգուեցի խոտի մէջ ու մեռածի պէս ոտքերս փռեցի. մէկ էլ աչքիս տակով նայեմ, որ ուղիղ գալիս է վրաս... Մօտեցաւ, մէկ խփեց ինձ ոտքով, երկու խփեց. ամենևին մի մազս չեմ շարժում.. Յանկարծ ձեռքը գցեց պոչս, գցեց շալակը ու գնաց։

—Էս չեղաւ, մտածեցի, վերջին օրս է սա. ինձ կը տանի ու կաշիս կը քերթէ։ Ես պինդ կծեցի նրան։ Նա այնպէս ճչաց ու գոռաց... գետնովը խփեց ինձ ու երկու ոտի փոխանակ երկուսն էլ փոխ առաւ, ու փախիր որ կը փախչես։

—Ալէքսի խօսքը բերանումը կիսատ մնաց. սայլակն եկաւ, հորի գլխին կանգնեց։ Որսորդն սկսեց ինձ դուրս քաշել, խորամանկ ալէքսը փէշիցս կախ ընկաւ, դուրս թռաւ, ու գնա որ կ'երթաս։

Անիրաւն իր մօրն էր կարծես քաշել, մօր պէս տակէ տակ խորամանկ էր։

—Դէհ, երեխէք, հերիք է, վերջացրեց Զարման տատը, սեղանը պատրաստ է, ճաշելու ժամանակ է։

---

74. Ամենաղաւ վկայականը

Մի վաճառական լրագրներում յայտարարել էր, թէ իր խանութի համար ուզում է մի աշակերտ վարձել։

Շատ մարդ եկաւ՝ գնաց, վերջապէս վաճառականը մէկին ընտրեց և խանութ ուղարկեց։

—Աստ ինձ, բարեկամ, հարցրեց ծանօթներից մէկը. ինչու այդ տղային ընտրեցիր։ Ոչ վկայական ունէր, ոչ էլ ուրիշ կերպ ճանաչում էիր։ Ուրիշները հրաշալի վկայականներ ունէին, և դու ճամբու դրիր։

—Սխալւում ես, ասաց վաճառականը, այս տղան շատ վկայականներ ունէր։ Սենեակը մտնելուց առաջ ոտները լաւ սրբեց ու դուռը ծածկեց առանց թրխկացնելու, ուրեմն մաքրասէր է ու կարգապահ։ Իր նստած աթոռից վեր կացաւ ու տեղ տւեց կաղ մարդուն. ուրեմն բարեսիրտ է ու յարգում է աւելի հասակաւորներին։ Դեռ շէմքին՝ գլխարկը հանեց և կարուկ, արագ պատասխաններ էր տալիս իմ հարցերին. ուրեմն քաղաքավարի ու աչքաբաց է։ Կռացաւ, բարձրացրեց գիրքը, որ գիտմամբ ձգել էի յատակին, մինչդեռ ուրիշները դէմ էին ընկնում գրքին կամ կողքից անցնում. Հանգիստ սպասում էր իր հերթին՝ չաշխատելով ուրիշների առաջը կարել. ուրեմն լաւ կրթւած տղայ է։ Շուրերը լաւ սրբւած էին, իսկ երեսն ու ձեռները մաքուր։ Ի՞նչպէս ես կարծում, այս ամենը լաւագոյն վկայականը չէ՞։

---

75. Սեւուկն ու Ջանիկը

Կառապան Օնէսը այսպէս էր անուանում իր երկու ձիուն—Սեւուկ ու Ջանիկ։

—Դիտես, բարեկամ, խօսում էր նա իր վարձկալի հետ, իմ Սեւուկն ու Ջանիկն ինձ համար մի ամբողջ թագաւորութեան հաւասար են։

—Դիտես, քանի քանի անգամ են ինձ ազատել բուք ու բքանից. անձրև ու մութ գիշերին սանձը թողել եմ Սեւուկիս ու Ջանիկիս, նրանք ինձ տեղ են հասցրել, փրկել են իմ կեանքը։

—Սեւուկն ու Ջանիկն իմ ընկերներն են, իմ թև ու թիկունքը, իմ տունը կառավարում եմ նրանցով, առանց Սեւուկի ու Ջանիկի փոքրիկներս քաղցից կը կտորւեն։ Ուրախ թէ տխուր ժամանակս ես նրանց հետ եմ անում, խօսում։

—Մի օր էլ մտածմունքների մէջ ընկած՝ ներս մտայ դոմը զարման ու գարի տալու Սեւուկիս ու Ջանիկիս։

—Ուրիշ անգամներ ասում, խօսում էի ձիերիս հետ, աչքերն ու ճակատները շփում, փայփայում.—Դէ, կերէք, Սեւուկ ու Ջանիկ, ես ձեզ մատաղ, կերէք, լաւ կերէք...

—Էս անգամ մաքով ընկած՝ զարման, գարի տի ու լուռ դուրս եկայ. կէս ժամ չանցած՝ ներս մտայ՝ տեսնեմ, կերել են, թէ ոչ։

—Ի՞նչ տեսնեմ, ես դրանց հոգուն մեռնեմ. Սեւուկ ու Ջանիկ խակի բան չեն ասել բերանները. գլուխները թեքած դէպի դուրը՝ ապշած իմ յետեւից նայելով՝ կանգնած մեռցել են տխուր ու տրտում...

—Սիրտս լցւեց, էլ չկարողացայ համբերել, փաթաթւեցի նրանց վզովը, պաչեցի նրանց աչերն ու ճակատը...

—Աստ, իմ բարեկամ, էդ ոչ է ասում, թէ կենդանին խելք չունի, չի կարող մտածել. Աստուած վկայ, ով որ ասել է՝ ինքը խելք չէ ունեցել...



Դիտեցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և դրեցէք։

77. Հուրի-Մաղաք

I

Մի թագաւոր կար, ունէր մի որդի,
Որդիս նամէ էր, ուզէց պատկի.
—Ասա՛, իմ որդի, դու ո՞ւմ ես ընդրում,
Թագաւորս ասաց դէռատեսաս որդուն:
Ձայր իմ, խնդրում իմ, թոյլ տուր ինչ գնամ
Քո պէտութիւնս մեզ պտպրիմ, մաս գամ,
Թէ Ասպատաշ գուցէ որոնիմ, գտնիմ
Ահզիկների մեզ ամենապատիս:
—Հայրը կամք տուեց. որդին մի գիշեր
Հեռն առած մի լաւ, մտերիմ ընկեր,
Շորերը փոխած, երկուսով մենակ
Ընկան դիւղէ դիւղ, քաղաքից քաղաք։
«Արքայի որդին հարս է որոնում՝»
Այս էր միշտ ասում ամենքի լեզուն։
Երեք որբ քոյրեր մի ուշ իրիկուն
Տան շէմքին նստած թել էին մանում.
Մեծ քոյրն ասում էր.—Թէ ինձ հաւան գար,
Այնպէս կը գործէի ես նրա համար
Մի հսկայ վրան, այնքան լայն արձակ,
Որ ծածկէր նրա զօրքին բովանդակ։
Միջնակն ասում էր.—Թէ ինձ հաւան գար,
Ես բաց կ'անէի նրա զօրքի համար
Այնպիսի ճոխ սեղան, որ ինչքան ուտէր,

Տեղը նորը գար, պատառ չպակսէր։
Իսկ փոքրը համեստ, կամաց ասում էր.
—Արքայի տղան թէ ինձ հաւանէր՝
Ես կը ծնէի նրա պատուին վայել
Ոսկի մատերով արքայազուններ,
Տղան՝ աչքերով, ինչպէս արեգակ,
Աղջիկը՝ չքնաղ, ինչպէս հրեշտակ։
Արքայի որդին լսեց բոլորը,
Տուն դարձաւ ուրախ, պատմեց իր հօրը։
Գալատ բերեցին որբուկ քոյրերին,
Տղան, ինչ խօսք, որ կին առաւ փոքրին։
Ճոխ հարսանիք արին, կերաւ խնդաւմ մեծ.
Մի տարի անցաւ. նոր հարսը ծնեց
Մի սիրուն տղայ, մատերը ոսկի,
Աչքերը նման վառ արեգակի։
Եւ մեծ քոյրերն իրենց նախանձից՝
Նորածին մանկան թագցրին մօրից,
Բարուր արեցին մի սև շան ձագուկ
Ու դրին ճօճը՝ մօրից ծածուկ.
Իսկ ոսկի մանկան պինդ փաթաթեցին,
Տարան անտառի խորքը գցեցին։
Մի տարի չանցած թագուհին ծնեց
Մի չքնաղ աղջիկ՝ այնքան նազանի,
Որ մարդու լեզուով պատմել չի լինի,
Աչքերը թովիչ, ասես հրեշտակի,
Մատերը գանգուր, մատերը ոսկի...
Իսկ չար քոյրերն իրենց նախանձից
Այդ նորածնին էլ թագցրին մօրից,
Բարուր արեցին մի կատուի ձագուկ
Եւ դրին ճօճը՝ մօրից ծածուկ.
Ոսկի աղջկան պինդ փաթաթեցին,
Տարան անտառի խորքը գցեցին։
Սակայն այս անգամ արքայի տղան

Սաստիկ զայրացած տուաւ հրաման.
«Դրէք թագուհուն կպրէ-կարասում,
Կարասը թաղէք մեծ հրապարակում,
Որ անցորդ, դարձող նայեն այդ կնկան,
Թքեն խարերայ թագուհու վրան»։

II

Քոյր ու եղբօրից հարցնենք հիմա.
Նրանց խնամից մի զթոտ պարոյ,
Օրօրեց մօր պէս, ծիծ տուաւ, պահեց,
Երբ ոտքի ելաւ, յեսուը զցեց։
Եղբայրը դարձաւ որսորդ համարձակ,
Անտառում շինեց մի սիրուն անտակ.
Անտառներն ընկած՝ նա որս էր անում,
Աչքի լոյսի պէս քրոջը պահում։
Մի օր էլ նախանձ մօրաքոյրերն
Իմացան՝ ողջ են սիրուն որբերը.
Գնացին անտառ, շատ թափառեցին,
Տեսան մի անտակ վառակի ափին.
Լուսամուտի մօտ նստած էր մենակ,
Ես աղջիկ ասեմ, թէ մի հրեշտակ։
—Այ սիրուն աղջիկ, ինչու ես մենակ,
Ո՞ւր է եղբայրդ որսորդ համարձակ.
Նա քեզ չի սիրում, եթէ քեզ սիրէր,
Իզուր չէր քաշ գալ անտառ ու ձորեր։
Մի՞թէ չգիտես, որ հեռու տեղում
Հուրի-Մալաքն է պալատում ապրում.
Հուրի-Մալաքն ունի մի հայլի,
Այդ հայլու մէջն աշխարհք կ'երևի.
Ունի խաղողի այգիներ ոսկի,
Որ ինչքան քաղես չի հատնի իսկի։
Թող քո եղբայրը՝ թէ սիրում է քեզ,
Գնայ մի ընծայ՝ մի բան բերի քեզ
Հուրի-Մալաքի շքեղ ամրոցից՝

Թէկուզ անսպառ ոսկու խաղողից։

III

Որսորդ եղբայրը տուն դարձաւ օրսից,
Տեսաւ քրոջը խոով իրանից։
—Ի՞նչ է պատահել, քոյրիկ իմ անգին,
Եղբայրդ մատաղ քո ծաղիկ կեանքին։
—Դու ամբողջ օրն ընկած անտառում
Քեզ համար ուրախ ժամեր ես անցնում,
Իսկ իմ օրերն անցնում է արտում.
Թէ ինձ սիրում ես, ի՞նչու չես գնում
Հուրի-Մալաքի ամրոցը շքեղ,
Հազար գեղեցիկ բաներ կայ այնտեղ։
Գնա, բեր դու ինձ ողկոյզներ ոսկի,
Որ ինչքան քաղես, չի հատնում իսկի։
—Ես մի քոյր ունեմ աշխարհի վրայ,
Չեմ թողնի երբէք՝ սիրտը վշտանայ.
Աշխարհէ աշխարհ, ծովէ ծով կ'ընկնեմ,
Ինչ որ ուզեցիր, կ'առնեմ, կը բերեմ
Մինչև չգտնեմ Հուրի-Մալաքին,
Չեմ գայ երևալ իմ քրոջ աչքին։
Ասաց պատանին ու ճամբայ ընկաւ
Եւ դիշեր ցերեկ էլ հանգիստ չառաւ.
Շատ լեռներ անցաւ խիտ անտառներով,
Շատ ձորեր անցաւ փրփուր գետերով...
Մի ծեր, ալևոր մարդու պատահեց,
Գդակն հանեց, խոնարհ բարևեց։
—Բարև, ասաց նա, ճրտեղից եկար,
Այս երկրի ճամբէն ինչպէս դու գտար.
Օձն իր պորտով, թուշունն իր թևով
Չի համարձակուել անցնել այս տեղով։
—Հուրի-Մալաքի ամրոցն եմ գնում.
Ասում են՝ այնտեղ խաղող է բուսնում,
Մի հրաշք խաղող ողկոյզը ոսկի,

Որ մի քոյր ունիմ, այդ նա է ուզում։
Մինչև չգանեմ, չեմ դառնայ էլ տուն։
—Այ վիզը կոտրի այն պառաւներին,
Որ քո քրոջը խելքահան արին.
Այնտեղ գնացող ժէռ քար կը դառնայ,
Լսիր ինձ, որդի, խեղճ ես, մի գնա։
—Ոչ, պիտի գնամ, էլ հնար չկայ.
Թէ ճամբէն գիտես, կը խնդրեմ ասա։
—Լաւ, դու ինձ լսիր և գնա անխօս,
Անխօս եմ ասում, լսում ես, անխօս.
Եթէ պատուէրս չկատարեցիր,
Կորած ես անդարձ, կորած, իմացիր։
Եօթն օր այս ճամբէն բռնես կը քայլես,
Եօթն օրում եօթ փունջ ծաղիկ կը կապես.
Եօթն օրւայ վերջում դէմդ կը կանգնի
Մի շքեղ ամրոց, շատրւան, այգի։
Մարմար սանդուղներ ու հազար արձան
Մի լեզու առած ահեղ ձայն կը տան.
—Ո՞վ է այդ տղան, այդ ո՞վ է գալիս,
Դու ձայն չհանես, դու չշփոթւիս։
Աչ ու ձախ ցանիր համասփիւռ ծաղիկ,
Դիմիր ամրոցն անխօս ու լռիկ.
Քանի մօտենաս կախարդ ամրոցին,
Բոլոր սանդուղքը ծաղիկ կը սփռես,
Վերև, միշտ վերև աներկիւղ կ'ելնես.
Եւ երբ բարձրանաս սանդուղքը վերջին,
Ցանկարծ կը տիրէ լռութիւն խորին։
Շուրջդ կը տեսնես անթիւ արձաններ,
Որ երբեմն էին քաջ պատանիներ.
Շաղ տուր և նրանց քո ծաղիկները,
Թող այդ քարացած խեղճ թշուառները
Մի երկու վայրկեան կեանքի բոյրն առնեն,
Որ քո մուրացիկ խափան չլինեն։

Ցեռոյ կը մտնես մի սրահ շքեղ,
Մի չքնաղ աղջիկ կը տեսնես այնտեղ,
Այնքան հմայիչ, այնքան նա սիրուն,
Պատմել չի կարող հրեղէն լեզուն։
Նա ինքն կը գայ, քեզ հարցում կ'անի,
Կ'առնի քո ձեռքը, իր մօտ կը տանի.
Կ'ասի. -Եկել ես՝ իմ ամրոցից
Տանես ոզկոյզներ ոսկի խաղողից.
Դու արժանի ես այդ շնորհքին,
Երբ այդքան քաջ է քո մանուկ հոգին։
—Ա՛ռ ոզկոյզները նրա սեղանից
Եւ խակոյն փախիր շքեղ սրահից,
Թող գոռան հազար ահռելի ձայներ,
Թէ «Տարան, տարան ոսկէ ոզկոյզներ,
Տարաւ համարձակ այդ որսորդ տղան,
Շուտ արէք, հասէք, բռնեցէք դրան»,
Ձերնեմ, չիմանամ՝ սարսես կամ դողաս,
Դու անմեղ կ'երթաս, անփորձ կը դառնաս.
Երկու հզօր բան կայ քեզ օգնական՝
Սուրբ անմեղութիւն, սէր եղբայրական։

IV

«Դէ, մնաս բարե՛, սաւ մեր տղան,
Ինչպէս ասացիր, կ'անեմ ամեն բան»։
Եօթն օր, եօթ գիշեր նա ճամբայ գնաց,
Եօթն անխօս գիշեր դաշտերում մնաց.
Եօթն օրն անցաւ, ժամը լրացաւ,
Հուրի-Մալաքի ամրոցին հասաւ,
Ամեն մի ծաղիկ, ամեն մի մացառ,
Ամբողջ ամրոցի զարդ ու կարասին,
Բիւրեղ արձաններ, սանդուղքներ մարմար
Մի լեզու առած՝ ահեղ ձայն տուին.
—Այդ ո՞վ է գալիս, ո՞վ է այդ տղան։
Լսեց պատանին, անցաւ անխօսով՝

Համասփիւռ ծաղիկ շուրջը փռելով
Ելաւ, բարձրացաւ դէպի մեծ սրահ.
Տեսաւ՝ շարուած են յատակի վրայ
Անթիւ, անհամար բիւրեղ արձաններ,
Որ երբեմն էին քաջ պատանիներ։
Ծաղիկներ ցանեց բոլորի վրայ,
Անցաւ աներկիւղ, հասաւ մեծ սրահ.
Տեսաւ, նստել է ամենեղ մէն մենակ՝
Ես աղջիկ ասեմ, դու մի հրեշտակ.
Այնքան գեղեցիկ, շարմաղ ու սիրուն,
Որ մեզ չի պատմի հրեղէն լեզուն.
Ձեռքին հայելի, աշխարհ բովանդակ
Այն հայելու մէջ ցոլում էր արձակ։
Հուրի-Մալաքը, երբ տեսաւ տղին,
Իսկոյն ցած դրեց կախարդ հայելին,
Ասաց.—Եկել ես, որ իմ ամրոցից
Տանես ողկոյզնէր ոսկէ խաղողից.
Դու արժանի ես այդ մեծ շնորհքին,
Երբ այդքան քաջ է քո կորիճ հոգին։
Պատանին խլեց խաղողը ձեռքից
Եւ իսկոյն փախաւ կախարդ ամրոցից։
Հուրի-Մալաքը տուեց հրաման.
—Բիւրեղ արձաններ, բռնեցէք դրան,
Բռնեցէք խիզախ սրսորդ պատանուն,
Որ ողկոյզներս չտանի իր տուն.
Մարմար սանդուխքներ, բռնեցէք դրան։
—Ինչու՞ ենք բռնում, տէր պատասխան.
Նա մեր վրայից երբ եկաւ, անցաւ,
Համասփիւռ ծաղիկ մեզ նետէր տուաւ։
—Դուք, իմ պարտէզի փուշ ու մացառներ,
Բարձր պարիսպներ, բռնեցէք դրան։
—Նա մեզ ընծայեց անմահ ծաղիկներ,
Թող ապատ անցնի, ասին միաձայն։

V

Եւ քամուց արագ կորիճ պատանին
Թռաւ, սլացաւ, հասաւ անտառին։
—Սիրելի քոյրիկ, ահա բերեցի
Սրտիդ ուզածը՝ ողկոյզներ ոսկի։
—Իսկ ինչու՞ միայն խաղող բերեցիր,
Ինչու՞ այն կախարդ հայելին թողիր.
Այդ ողկոյզներն ի՞նչ արժէք ունին.
Լաւ կը լինի գնաս՝ բերես հայելին։
Զար մօրքուրներն այսպէս ասացին,
Որ փորձանքի մէջ նորից գցէին,
Այնքան գովեցին կախարդ հայելին,
Որ խեղճ քրոջը խելքահան արին։
Քոյրը կախ ընկաւ իր եղբօր վզից.
—Գնա, հայելին բեր այդ ամրոցից։
Նորից պատանին ճանապարհ ընկաւ,
Նոյն ճամբով գնաց և նորից դարձաւ,
Բերեց հայելին այն կախարդական,
Բերեց, նուիրեց քրոջն աննման։
«Վա՜հ, ինչու՞ միայն հայելին բերիր,
Հուրի-Մալաքին ամրոցում թողիր,
Լաւ կը լինի գնաս՝ Հուրի-Մալաքին
Իր ոսկէ ամրոցով բերես միասին»։
Զար մօրքուրներն այսպէս ասացին,
Որ նրան խաղաւ կորուստի տային։
—Գնա՛, բարկացած քոյրն ասաւ նրան.
—Ի՞նչ անեմ փոքրիկ հայելին միայն.
Գնա՛, ասում եմ, գնա բեր ոսկէ ոսկէ
Հուրի-Մալաքին և ամրոցն ամբողջ։
Պատանին ընկաւ քրոջ ոտքերը,
Ասաց.—Խնայիր եղբօրդ օրերը.
Ես ի՞նչպէս գնամ բերելու նրան,
Անյաղթ ուժ ունի նա կախարդական.

Ինձի պէս հազարներ նրա ամրոցում
Այսօրուայ օրս էլ դեռ քար են մնում։
—Ոչ մի խօսք, գոչեց քոյրը զայրագին.
Գնա, բեր իսկոյն Հուրի-Մալաքին,
Հուրի-Մալաքին իր ամրոցի հետ,
Եթէ չբերես, էլ չդառնաս ետ. »

VI

Կարիճ պատանին տեսաւ՝ ճար չկայ,
Գլուխն առաւ, դուրս ելաւ ճամբայ,
Առաջուայ ճամբով գնաց ու գնաց,
Հասաւ ամրոցին, մնաց շւարած.
Ո՞ւր են պարտէզներ, ո՞ւր շատրուաններ,
Ո՞ւր նախկին զւարթ ծառ ու ծաղիկներ,
Ամեն ինչ մեռել, ամեն ինչ թօշնել,
Ասես թէ մահուան քամին է դիպել։
Գնաց, բարձրացաւ մարմար սանդուղքից,
Ոչ մի ձայն չելաւ և ոչ մի տեղից.
Տեսաւ աղջիկն ընկած բարձերին,
Լալիս էր գոհար արցունքն աչերին։
Ներիր ինձ, ներիր, սիրուն թագուհի,
Որ քո հանդիսան ես վրդովեցի.
Հաւատա, ես այդ արի ակամայ,
Ես յանցանք չունիմ, երկինքը վկայ։
Այժմ եկել եմ, որ քեզ էլ տանեմ,
Դողդոջուն ձայնով ասաց պատանին.
Կամ ինձ էլ այստեղ պատժիր, քար դարձրու,
Կամ եկ, ինձ լսիր, գնանք ես ու դու։
Այնտեղ ես ունեմ մի քոյր միայնակ,
Հոգին դեռ մանուկ, դէմքով հրեշտակ.
Մի հրեշտակը թող երկուս լինի,
Ինձ այդ մեծ փառքին արա արժանի...
—Ես կը գամ քեզ հետ. ես քեզ սիրում եմ,
Բայց իմ ամրոցն ես պիտի մաքրեմ։

Այսօր փրկութեան ժամը թող հնչէ,
Քարացածներին թող կեանք ներշնչէ,
Ասաց աղջիկը պատանի քաջին
Եւ դարձաւ գոչեց քար դարձածներին.
«Ելէք, սթափուէք դուք մահուան քնից,
Ելէք, հեռացէք կախարդ ամրոցից».
Յանկարծ բիւրաւոր ձայներ լսուեցին,
Մէկ մարդու նման մէկից շարժուեցին.
Վազող վազողի, փախչող փախչողի՝
Դատարկուեց ամրոցն այն ահ ու դողի։

VII

Հուրի-Մալաքն իր ողջ ամրոցը
Բերեց գետեղեց անտառի ծոցը։
Լուր եկաւ՝ հասաւ արքայորդուն,
Թէ մի ամրոց կայ անտառի խորքում.
Նրա չորս բոլորն այգի ու պարտէզ,
Բիւր շատրուաններ, ծաղիկներ պէս պէս.
Եւ այդինների խաղողը ոսկի,
Որ ինչքան քաղես, չի հատնի իսկի.
Երկու աննման սիրուն աղջիկներ
Ապրում են այնտեղ արքայավայել.
Իրենց հետ ունեն մի հատիկ եղբայր,
Մի քաջ պատանի, մի որսորդ ճարտար։
Արքայի որդին տեսաւ հրաման.
Փողեր հնչեցին պատերազմական,
Ամեն կողմերից եկան շար ի շար
Զինուած կարիճներ հազար ու հազար։
Երբ արքան տեսաւ՝ կազմ է ամեն բան,
Առաջ շարժուելու տուեց հրաման։
Հուրի-Մալաքն երբ տեսաւ զօրքը,
Որ պատել էին իրենց բոլորքը,
Քոյր ու եղբօրը պատմեց ամեն բան,
Ցայտնեց, որ նրանց հայրն է այդ արքան,

Պատմեց նրանց մօր դառը ցաւերը,
Նախանձ քոյրերի սարքած դաւերը։
Քոյր ու եղբայր զարմացք ճնացին,
Չէին իմանում, խնդան՝ թէ լային։
—Կ'երթաս, խոր գլուխ կը տաս արքային.
Կ'ասես, թող շնորհ անի ծառային,
Իր բոլոր զօրքով, իր իշխաններով
Հիւր լինի մեզ մօտ միայն մի օրով։
Ելաւ պատանին, դիմեց ընդառաջ.
Խոր գլուխ տալով՝ կանգնեց հօր առաջ,
Խնդրեց, պաղատեց որպէս մի զաւակ,
Ոտ դնէ հայրը նրա յարկի տակ.
Իր բոլոր զօրքով, իր իշխաններով,
Ինչքան կամենայ, գոնէ մի օրով։
Արքայի սրտին դուր եկաւ տղան,
Հայրական ձեռքով փայփայեց նրան.
Ապա ողջ զօրքով տղի հետ մէկտեղ
Քայլեցին դէպի ամրոցը բիւրեղ։

VIII

Հուրի-Մալաքը տաւ հրաման,
Ազատ անտառում բացւեց մի սեղան,
Տօլմի խնձորը ոսկի թանկագին,
Լալ ու մարգարիտ խնձորի մէջին.
Բրինձը մանրիկ՝ բիւրեղ հուլունքներ,
Լաւաշ հացերը ոսկու թերթիկներ։
—Ասենք, տեսնում եմ, որ շատ էք հարուստ,
Ունիք շատ գանձեր, փառաւոր ապրուստ.
Միայն ինձ ասէք, մարդ ի՞նչպէս ուտէ
Տօլմաներն ոսկի ու մարգարիտէ,
Որսորդ տղային թագաւորն հարցրեց։
Տղան էլ այսպէս պատասխան տւեց.
—Հապա դու ի՞նչու, մեր հզօր արքայ,
Մի հարց չտւիր, թէ երկրիս վրայ

Կարող է մի կին կատու, շուն ծնել
Եւ այդպէս անգութ մեր մօրը տանջել.
Իմացիր, հայրիկ, նա է մեր մայրը,
Մենք քո որդիքն ենք, դու ես մեր հայրը...
Եւ քոյր ու եղբայր լացով ու ժպտով
Ընկան հօր գիրկն անծայր կարօտով։
Թագաւորն լացով համբուրեց նրանց,
Ուրախ տուն դարձաւ՝ գրկած որդկերանց.
Ազատեց իսկոյն անմեղ թագուհուն,
Մահուան սև վճիռ անխիղճ քոյրերուն։

78. Գարուն

Գարնան շոգով,
Անուշ աղով
Ծիծառն եկաւ կարապետ.
Յոգաշաղախ,
Վարդը չբքնաղ
Ժպտաց խոկոյն նրա հետ։

Դաշտ ու արօտ
Վազուց կարօտ
Ջերմ արևին կենսատու՝
Ալ ու ալան,
Կանաչ հապան,
Ողջունեցին իրարու։

Զոր ու անտառ,
Հովիտ ու սար
Գոյն-գոյն ծաղկով զարդարուն՝
Իրար գրկում,
Երգ են երգում.
«Ո՜հ, ինչ սիրուն է գարուն»...



Ի՞նչ են անում այծերը։
Դիտեցէք, պատմեցէք, վերնագիր դրէք և գրեցէք։

80. ԳԷՐՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Էլի ուռին
Զարթնեց լոին,
Ու ադբիւրը ղնդաց,
Խենդ ադմուկով,
Աղաղակով,
Դեան է վազում սրընթաց։

Ու սաւերը,
Զով թեւերը
Կանաչներին է փռում,
Ճանճ ու բզէզ
Գիժ-ուածի պէս
Խաղ են անում գեփիւռում...

Թռչունի երգ,
Զորում համերգ,
Եղեգների ծածանում,
Քամին բոյրով,
Հրապոյրով
Ծառերն է մեղմ տատանում։

81. Ձիւն եւ ձնծաղիկ

1.

—Մենք կանաչ ենք, սիրուն ենք, ասացին խոտերը։

—Մենք կանաչ ենք, դուրեկան ենք, յայտնեցին տերևները։

—Մենք էլ կանաչ ենք, մենք էլ ձեզ հետ ընկեր ենք, կանչեցին թփերն ու հացաբոյսերը։

—Իսկ մենք սիրելի ենք ամենին, պէս պէս գոյներ շատ ունենք, ասացին ծաղիկները։ Մեզ սիրում են մարդիկ, մեզ սիրում են թռչունները, մեզ սիրում են միջատները։ Մեզ մօտ հիւր են գալիս, մեզ պահում են, խնամում են, մեզնից անուշ հոտ են առնում։

2.



—Ես ինչ անեմ, որ գոյն չունիմ, զողզոզալով ասաց ձիւնը։ Նա կուչ եկաւ, մանրիկ փոքրիկ հատիկներով, սուսիկ փուսիկ գնաց, հասաւ կանաչներին ու ասաց.

—Սիրուն կանաչներ, ձեր գոյնից ինձ էլ տուէք. ես գոյն չունիմ, ես անգոյն եմ, տուէք մի քիչ ձեր գոյնից. ես ուզում եմ գոյն ունենալ, կանաչ լինել, որ ձեզ նման ուրախ լինեմ։

—Գնա՝ կորիր, դու ցուրտ ձմեռ, քո սառը հատիկներին մենք անկարող ենք մեր գոյնից տալ, քեզ ընկեր լինել։

3.

Ձիւնը սուս արաւ, նորից կուչ եկաւ և սուսիկ փուսիկ գնաց վարդի մօտ և այսպէս ասաց.

—Սիրուն ալ վարդ, կարմիր վարդ, ինչ կը լինի, քո գոյնից ինձ էլ տաս. ես գոյն չունիմ, ես անգոյն եմ, տուր ինձ մի քիչ քո գոյնից, ես ուզում եմ գոյն ունենալ, կարմիր լինել, որ քեզ նման ուրախ լինեմ։

—Գնա, հեռացիր, տխուր սառը ձիւն, ես անկարող եմ իմ գոյնից տալ, քեզ ընկեր լինել։

Ձիւնը սուս կացաւ, նորից կուչ եկաւ և սուսիկ փուսիկ գնաց շուշանի մօտ և այսպէս ասաց.

—Սիրուն շուշան, սպիտակ ծաղիկ, ինչ կը լինի քո գոյնից ինձ էլ տաս. ես գոյն չունիմ, ես անգոյն եմ, տուր ինձ մի քիչ քո գոյնից, ես ուզում եմ գոյն ունենալ, սպիտակ լինել, որ քեզ նման ուրախ լինեմ։

—Գնա, հեռացիր, ջրիկ սառած ձիւն, ես անկարող եմ իմ գոյնից տալ, քեզ ընկեր լինել։

4.

Ձիւնը սուս կացաւ, էլի կուչ եկաւ, էլի զողզոզաց և սուսիկ փուսիկ շատ տեսակ ծաղիկների մօտ գնաց։

Ամեն ծաղիկ էլ նրան մերժեց։ Իր գոյնիցը բաժին չտուեց։

Ձիւնը մոլորուեց...տխուր ու տրտում մի կողմը քաշուեց, նա բարկացաւ և լաց եղաւ։

—Ինչու՞ ես լալիս, փափրիկ ձիւնիկ. ինչու՞ էք տխուր, սիրուն հատիկներ, հարցրեց մի ծաղիկ։

—Ի՞նչպէս չլամ, ինչպէս չտխրիմ, ասաց ձիւնը բարկացած. շատ խոտերի, կանաչների, ծառերի աղաչեցի, շատ ծաղիկների մօտ գնացի, նրանց գոյնից խնդրեցի, ոչ ոք չուզեց ինձ մի գոյն տալ. ես անգոյն եմ, ես մենակ եմ, ընկեր չունիմ, ինչպէս ապրեմ։

—Եթէ իմ պարզ, սպիտակ գոյնը քեզ դուր կը գայ, ես քեզ կը տամ իմ գոյնը, ասաց ծաղիկը։

Զիւնը լսեց, ուրախացաւ, նա մեծ սիրով այդ գոյնն առաւ, սպիտակ դարձաւ։

5.

Զիւնն ու ծաղիկն ընկերացան, սիրով կապուեցին. ծաղիկն իր անունը դրեց ձնծաղիկ. ամեն տարի գարնան գլխին ձիւնի հետ է դուրս գալիս։ Զիւնն էլ նրան տաք է պահում, բարև տալիս, համբուրում։

Ամեն տարի գարնան գլխին ուրիշ ծաղիկ չէ երևում դաշտում. ձիւնը նրանց խիստ պատժում է, սառեցնում՝ թողնում է։

Ամեն տարի գարնան գլխին ձնծաղիկն է միշտ փայլում։

Ամեն տարի գարնան գլխին մարդիկ նրան են ողջունում։

---

82. Մարտի վրեժը

1.

Մի ապրիլի տատիկ
Հալ ու սիրունիկ
Երեք այծ ունէր,
Հալ ու սիրունիկ։
Մարտը որ եկաւ,
Կերը վերջացաւ.
Ցուրտ, բորան, քամի...
Տատիկ ինչ անի։
Ազաչ-պաղատով,
Հաց ու արմատով
Օրեր էր անցաւ...
Ապրիլը հասաւ։
Այծերն արօտում
Տրտինդ են անում.
Գառան էլ անվախ
Երգում էր ուրախ։
—Գիւղ մարտից պրծայ,
Սև դարդից պրծայ.
Այ անիծուի նա,
Բարեւ չքանայ։

2.

Մարտն ամիրաւ
Էս որ իմացաւ,
Գնաց բարկացած՝
Ապրիլին ասաց.
—Գիտես, հարեան,
Ապրիլ անմտան,
Դու շատ ազիզը,
Ինձ խանդաբեցիր։
—Եկ քո օրերից
Տան օր տուր ինձ,
Գործերս պրծնեմ,
Հեռանամ, կորչեմ...
—Չէ, հարեան ջան,
Չեմ զիջի ես քեզ.
Լսել եմ՝ չար ես,
Բայց որ խնդրում ես,
Չեմ կոտրի ես քեզ.
Լաւ լինի, թէ գէշ՝
Երեք օր փէշքէշ։

3.

—Սպասիր հիմա,
Գառան ատամնայ.
Դու ինձ անիծես...
Հիմի օրդ տես...

Էսպէս մրմրիր
Մարդը խելագարեց,
Զու արաւ վազէց
Գիւղ քամուն կանգնէց։

Հոգալէց երկինք.
Ձիւն ու փոթորիկ...
Քուէ բորան արաւ.
Վայ այծ... վայ պառաւ.
Այծերը կորան,
Բորանից ատան։
Պառաւը մնաց
Անիծար, խելագարեցաւ։

---

83. Գայլաձուկը

Քաղաքի շատրվանները օրօրվելով իրանց ծոր կէր գնացին գիրը։ Ակնարկ դրդիր, մանրիկ ձկներ, ձիրի-փուկներ որոնց ուզում էին։ Մէկ էլ յանկարծ գայլաձուկը նրանց-դէմ աւ, շատրվանների ձկին բռնէց ուներս քա-ղէց Ամպէս նա գրաւաւ երկրորդին,

երրորդին, չորրորդին և կը գանէր
բոլորին, իբէ մայրը չնակուար, լրաց
լրաց դուրս չգար։ Մայր բադիկը լար
գիրկը և այդ գիրն էլ չգնաց որսաց։

Ամեն փորձանքին՝ մի խրատ։

---

84. Սերմնացանը

«Ո՛ւր ես գնում, ա՛յ գիւղացի,
Բնական տակին անքալով.
Այդ ինչ բեռ է,որ շալակած ես
Ու տանում ես խնդալով»։
—Արի՛ ինձ հետ,դու կը տեսնես,
Ուր եմ գնում անքալով.
Երկրի յոյսն է իմ շալակին,
Ես տանում եմ տանջելով...
Ասաց, կապեց իր գոգնոցը,
Ապա նայեց երկնքին.
Սիրտը խօսեց, լեզուն շարժուեց...
Ես նայեցի արցունքին...

«Կապոյտ երկինք, հալալ արտով
Քեզ եմ կանչում՝ միայն քեզ,
Որ դու արև, անձրև շատ տաս
Իմ այս սերմին արքի պէս...
Դու լաւ գիտես՝ թէ քանի մարդ
Աչք կը գնի ցանածիս.
Քանի պարաքեր ու պատուհաս
Միշտ կ'սպասեն սերմածիս...»
Այսպէս ասաց ու երեսին
Խաչակնքեց զողալով,
Սերմը լցրեց գոգնոցի մէջ,
Սկսեց ցանել իր բանով.

---

85. Արևի մօտ

1.

Մի անտէր երեխայ ցնցոտիներ հագած կուչ էր եկել պատի տակ։ Գարնան անուշ արևը բարի աչքերով նայում էր նրան։

—Կարմիր արև, բարի արև, դու ես միայն ինձ տաքացնում, մտածում էր խեղճ մանուկը. դու ես միայն ինձ գգւում, համբուրում, ինչպէս երբեմն իմ անդին մայրս։ Թէ չէ՝ մարդիկ աչք չեն դարձնում վրաս։

Բայց կամաց կամաց արևը թեքւում էր կանաչ սարերի յետևը. երեխան կարօտով ու արցունքով նայում էր նրան, մինչև որ ոսկեհեր արևը սահեց ու անցաւ սարի այն կողմը...

—Զէ, ես չեմ կարող առանց արևի, վճռեց մանուկը. ես պիտի երթամ արևի մօտ, ես գիտեմ ճամբան. ա՛յ, այս սարի յետևը։

Վճռեց ու ճամբայ ընկաւ։

2.

Ուրախ գնում էր և կանաչ սարը սեւթրով ճամփում։
Քանապարին մարդիկ էիր հանդիպում և կ'ուրախ
ցայլ տալիս։—Էյ, էյ, ով իս դու։
Ճամբորդ գրդայ իմ, պատասխանում էր իրիսուս։
Ուր իս գնում։
Արևի մօտ, ա՛յ, այս սարի յետևը։
Ցիմար գրդայ, ասում էին նրանք ու կ'ոռանում
Բայց իրիսաս ուշ չէր դարձնում. նա պարզ
գգում էր, որ արևը այս սարի միւս երեսին է.
Մի քիչ էլ, մի քիչ էլ, ու կը լինի արևի մօտ։
Ու անվախ, կարաս քայլերով գնում էր վերև,
բարձր. միայն բարձր։

3.

Բաւական ուշ էր արդէն, երբ լսեց մօտիկից շների հաչոց ու տեսաւ՝ շատ մօտիկ մի կրակ է շողշողում։

—Ո՞վ ես, լսեց խաւարի միջից մի ձայն. ուր ես գնում։

—Անտէր ճամբորդ ապայ եմ, գնում եմ արևի մօտ։ Ասա, ո՞ւր է արևի ճամբան. մութն է, էլ սարերը չեմ տեսնում։

Ճրագը ձեռքին մօտեցաւ երեխային մի մարդ, նայեց նրան, նայեց ու ասաւ քնքոյշ ձայնով.

—Դու դաղրած կը լինես ու քաղցած, գնանք ինձ մօտ, ասաւ բարի անծանօթը. բռնեց երեխայի ձեռքից ու տարաւ տունն։

4.

Նրա տունը մի հասարակ խրճիթ էր, մէջտեղում վառւում էր օջախը, որի շուրջը նստել էին բարի մարդու կինը և երեք փոքր երեխաները, որոնք համարեա հասակակից էին ճամբորդ երեխային։ Խրճիթին կից մի մեծ սրահում որոճում էին ոչխարներ։ Նա հովիւ էր, սարի հովիւ։

—Սիրելի երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել։ Թող չլինեք երեք եղբայր, եղէք չորս. երեքին հաց տուող ձեռքը չորսին էլ կը տայ։ Սիրեցէք սրան, համբուրեցէք ձեր նոր եղբօրը։

Ամենից առաջ հովիւ կինը մօտ եկաւ, գրկեց երեխային և մօր պէս ջերմ ջերմ համբուրեց. յետոյ երեխաներն եկան և եղբօր պէս համբուրեցին նրան։

Երեխան իր սրտում մի քաղցր տաքութիւն զգաց և նրան այնպէս թւաց՝ թէ արևը հէնց ուղիղ խրճիթի վերևն է վառւում...

5.

Ուրախութիւնից լաց եղաւ. անուշ անուշ լաց եղաւ և պատմեց իր գլխի եկածները։

Յետոյ օջախի առջև սեղան նստեցին, կերան, խմեցին, ծիծաղեցին։ Մայրը նրանց համար անկողին շինեց և ամենքին քնեցրեց իր կողքին։

Երեխան շատ էր յոգնած, տեղը մտաւ թէ չէ՝ խկոյն աչքերը խփեց ու քնեց...

Երազի մէջ նա ժպտում էր ուրախ։

Իբրև թէ ինքն արևի մօտ էր, գրկել էր նրան ամուր ու պառկել էր նրա գրկում տաք ու երջանիկ...

Մէկ էլ սրտի ուրախութիւնից վեր թռաւ, զարթնեց ու տեսաւ, որ արևի փոխարէն իր նոր մօր գրկումն էր։ Եւ նրան թւաց, որ արևը ոչ թէ այս խրճիթի վրան է, այլ հէնց այս խրճիթի մէջը, որ ինքն ուղիղ հէնց արևի գրկումն է...

---

86. Սարերի որդին

Արծաթ գոտին ձիւնոտ սարից
Զգում է ցած ապմկալից
Ու դեռ շրթին ուրախ, զարթ՝
Սէգ սարերի երգը հպարտ՝
Թաղում է խոր
Ժայռատ կրծքում՝
Լալիս անդօր,
Թուլ հեծեծում.
Ու բողոքի,
Աղաղակի
Զայնն է թնդում
Խոր անդնդում,
Դում դում, դում...

Եւ նեբբևում ահա նորից
Փայլփլելով մթին ձորից՝
Մի նոր գոտի է գուրս հոսում,
Բայց անլեզու, էլ չի խոսում.
Երգը մոռցած,
Ամանց փրփուր
Սրգւոր դարձած՝
Սողում է լուռ,
Սողում, յիշում
Երգերն անուշ
Ու վաշ վաշում՝
Վաշ վուշ, վաշ վուշ...

87.

Գարնանային առաւօտ

Առաւօտեան ցողը դեռ ղէր բարձրացել, խոտերից և արքակի ֆառատպարների խաղալով մարգարտեայ կաթիլների կիր, արտասուում էին ծիածանի գոյներով։

Ժամանակ լեռները դեռ պատված էին
ծիրանակ ու թանձրանկյուն մշուշով: Միակ-
ապած գալիքները խոնարհում էին առաջ
նունչ: Մի փոքր դեռ նոր էին վա-
ռում նողը, մի փոքր ցանում էին,
միւս փոքր աբաժանում էին ոչխարների

նատրը. մի խոսքով, որ կողմը նայում
էր, էռ էր գալիս աշխատութիւն. ամէն
ինչ գարժողութեան մէջ էր, ամէն փոքր
իրևում էր կեանք և գործունէութիւն:



Դիտեցէք իրանները, այս պատկերը և յիշողութեամբ նկարեցէք:

Ճանկարծ իմ ականջին լսվեց
մի երգի ձայն, նա խիստ խաղալ եղանակով
հնչում էր առաւօտեան հովերեան մէջ,
իւ պարզ որոշում էի հետևեալ խօսքերը:

«Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը:
Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
Յառաջ տարէք արօրը:

Վարը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեն դիզենք կալի մէջ:

Կը գայ ձմեռ, մենք վախ չունենք, Դէհ, քաշեցէք, սիրուն եղներ,
Ուրախ կ'անցնի մեր օրը. Շուտով վարենք արաերը.
Ուտելու միշտ պաշար ունենք, Թող չասեն մեր դրացիքը,
Լի ու կուշտ է մեր փորը. Ծոյլ են Հասօի եղները։

---

89. Մայիսը

Ահա հասաւ մայիսը, մեղրակաթ մայիս, տատներկու եղբայրների մէջ ամենագեղեցիկը։ Մեր հայրենիքում այս ամիսը հեզիկ նազիկ պարում է բլուրներում ու հովիտներում։ Նրա ձեռքն ու ծոցը, գլուխն ու գօտին լցւած են փունջ փունջ, գոյն գոյն ծաղիկներով։ Նրա գլխովը փրփուր կարած ալբիւրները կանչում, քրքջում են։ Քնքշափեռուր թռչնիկներն երգում, պարում են։ Թեթեթիկ ուլերն ու գառնուկները ցատկում, վազվզում են։ Անուշահոտ հովերն ու գով զեփիւռները տարածում են ամեն կողմեր զարնան քաղցր բուրմունքը, երբ բլրից բլուր սոռոսալով անցնում, վազում է գեղեցիկ մայիսը։ Նրա շաղակաթ շնչից ծաղիկները վառ վառ շողշողում են, պտուղները պուտ-պուտ կարմրում։

---

90. Վարդ մայիսը

Հէնց որ կը գայ վարդ մայիսը՝
Ամիսների թագուհին,
Նախշ ու նկար էն ամիսը,
Նոր կեանք կը տայ ամենքին։

Թռչունները թրուրռալով,
Մրջիւնները վրխտալի,
Զորս ու բոլոր ծրլրլալով՝
«Մայիս» կ'երգեն խնդալի։

91.

Վարդենու փէրը

Դուր դարի առաջ մի սոխակ կար. նա միշտ էր գալ իրիկունները և ուզում էր միգ ծոր ապրել։ Սնարաւի ծառերը, պարտէզի թփերը, բոյսերը ու ծաղիկները ուզում էին, որ սոխակն իրենց ծոր ապրի, իրենց կիր լինի, իրենց համար երգեր երգէ։ Սոխակն ընդդէմ վարդի բուրը։ Վարդենին ծաՁկաՁ էր գեղեցիկ վարդերով և անուշահոտ բուրմունք էր տարածում։

Այն ժամանակ վարդենու վրայ փշեր չկային։ Սոխակը շատ գոհ էր իր ընտրած տեղից. նա ուրախ երգում, սուլում և գեղգեղում էր։ Վարդենու կոկոնները բացւեցին և ամբողջ թուփը ծածկւեց հրաշալի վարդերով։ Թռչնակը բուն շինեց, ձւեր ածեց և շուտով ունեցաւ երեք ձագուկ։ Մայրն ուրախ էր և ամեն ժամանակ ձագերի համար քաղցր քաղցր երգում էր։ Ամեն տեսակ թռչուններ գալիս՝ նստում էին մօտիկ ծառերի վրայ և սոխակի անուշ երգը լսում, չէին կշտանում։

2.

Մայրն ամեն օր երեկոյեան դէմ թռչում էր, որդեր, մժեղներ, ճանճեր, մոծակներ և թիթեռներ որսում, բերում, ձագերին կերակրում։ Մի երեկոյ էլ ձագուկներն ուրախ ծրլրլում, մէկ մէկու ասում էին.

— Շուտով մայրիկը կը գայ, ուտելու բան կը բերէ։ Ցանկարծ

բնի մօտ երևում է մոխրագոյն կատուն։ Նա բարձրանում է վարդենու ճիւղերին և յարձակւում է ձագուկների վրայ. մի ակնթարթում բռնում է ձագերին և գետին ձգում։

—Ձագերին խեղդեց անպիտան կատուն, օգնեցէք, հասէք, ասաց մի ագռաւ և վրայ պրծաւ։ Ագռաւները խումբ խումբ վրայ ուին, կատուին կոծեցին և լաւ պատժեցին։ Մոխրագոյն կատուն ձագերին թողեց, վազեց՝ ուուն մտաւ։

3։

—Ո՞ւր էք, ձագուկներս, ո՞ւրտեղ էք մտել, ճչաց սոխակը. չորս կողմը նայեց և երբ թփի տակ ձագերին վայր ընկած տեսաւ, շատ վրայ հասաւ, թևերը փռեց, գառնագին լացեց։ Լացեց, շատ ողբաց, տխուր երգ երգեց, գառնալով թփին՝ այսպէս ասաւ.

—Սիրուն վարդենի, գեղեցիկ գոլ թուփ, ինչու իմ փոքրիկ թանկագին ձագերին չպաշտպանեցիր. ինչու ձագերիս գերեզման դարձար, ինչու խեղճ մօրս անզաւակ դարձրիր, ասաւ ու լացեց, շատ տխուր երգեց, բոլոր թռչուններին նա լացացրեց։

Վարդենին տխրեց. սրտի ցաւից՝ փշերով ծածկուեց. փշերով ծածկուեց, իրեն մօտեցողին անխնայ ծակեց, անպատիժ չթողեց։ Այս նա տխուր սոխակին ասաւ.

—Թանկագին թռչնակ, տես, ինչպէս հիմա ես փշեր ունեմ, սուր ամուր փշեր. այժմ դրանցով քո սիրուն բնին, փոքրիկ ձագերին ես միշտ կը պահեմ, կը խնամեմ։ Նոր ձևեր ածի, ձագուկներ հանիր։ Սոխակը լսեց, նոր ձևեր ածեց, նոր ձագեր հանեց, տխուր երգերով ձագերին մեծացրեց։

Դիտեցէք, պատմեցէք, վերապատմեցէք ուրիշներ։

93. Եայլաղ

—նքը բացուեց. Թուրք ու հայ եայլաղ գուրս եկան։ Աղ-
բուրների գլխին, ծաղիկների վրայ օրէքը՝ իրենց չաղիրները ուին
ու մարն արին էն անմահական դրախտը։ Առաւօտը որ սեղից վեր
էիր կենում, հազար սարի ծէրից ամպն ու ծուխն իրար հետ խառն
երկինքն էին վերանում և շաղն ու ցօղն անձրևի հետ նրանց շորե-
րի, երեսների վրայ գնում։

Կնանիքը կթի տաւարի հետ էին լինում, կաթ հաւաքում, եղ
ու պանիր շինում. մարդիկը տաւարը սարը տանում կամ բուրդ ու
եղ բազար բերում, ծախում, իրանց տան պակասութիւնը հոգում։

Մենակ էս չէր կնանոց գործը. ցերեկը ճախարակ էին մանում,
շալ ու խալիչայ կամ կապերտ գործում ու իրանց օրն ուրախ, մի-
ամիտ անցկացնում. էլ ինչ ասել կուզի, որ տան պէս՝ աղջիկ ու
հարս էսաեղ կուչ ու ձիգ անելով չէին ման գալիս կամ երեսները
կախում։ Մէկ տան պէս, ում օրէն մանելիը, թուշ էր՝ որ վարդի
պէս փայլում էր, աչք էր՝ որ մարդի խելք առնում էր. օդի ու
ջրի, էն ծաղիկ ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու ոտնդն
ինչ կը լիներ բան։ Յայտնի բան է, որ որսի ու շատ անգամ գողի
ու հարամու հետ շաբթով էին ման գալիս ջահել տղերքն ու սպա-
նած կամ բռնած բերած ժամանակը մէկ հարսանիք էր լինում բո-
լոր օրէքանց միջին։ Ղոնաղ պատահէր, էսաեղ պատահէր. շաբթով,
ամսով էլ չէին թողալ՝ հեռանալ. ու աղբիւրների քչքչոցը, ջրերի
խշշոցը, ծառերի սլսլոցը, դշերի ծլրլոցը, չորանի թութակը, գառան,
ոչխարի ու տաւարի ձէնն ու բառանչը՝ ամեն մարդի ուզում էին՝
առեն. թէ դրախտ ես կամենում, էսաեղ կաց, էսպէս կաց, սիրտդ
անմեղ, միտքդ յիստակ։

---

94. Գարնան երգերից

Դաշտերը հազան խաս խաս կանաչներ,
Մշուշոտ ձորում կարկաչէց առուն.
Երկինքը վառեց ոսկէ ճառանչներ,
Եղաւ ափերից գեղը ոլորուն...

Գարուն է արդէն, ելնենք անտերից
Կանաչ սարերում աղատ շրջելու.
Ծաղիկներ քաղենք առի ափերից,
Թափառենք անվերջ ձորերում հեռու։

Ծառերն ամօթխած հարսերի նման
Զուլեցին իրենց գեղեցիկ զարդով.
Հեռու հարաւից հաւքերն եկան
Նոր նոր երգերով, կրակած սրտով...

Եւ նստած ժայռի բարձր կատարին՝
Լանք հէքեաթը կարկաչող առի.
Եւ ընկեր դառնանք թեթև գեփիւռին,
Ուրախութիւնով սրտերս վառի։

---

95. Շինականի երգը

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակն երկնուց,
Հովի փուն էր անուշ։
Հոտաղն եղներ կ'արածայ,
Մանկալ պառկել, քունն անուշ.
Զրզրզուն քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ։
Դաշտեր, ձորեր մընջել են,
Ջրեր զլզլան, ձէնն անուշ։
Հաւքեր թառան իրենց բուն,
Բլբուլի տաղն էր անուշ.
Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ։

---

96. Մարգարիտի սերմը

1.

—Ո՞ւր ես ինձ տանում, հարցրեց մարգարիտի սերմը։

—Քեզ տանում եմ պահելու, ձմեռայ ցրտից ազատելու, ասաց քամին։ Նա քշեց սերմերը, տարաւ՝ մի աղբիւրի մօտ գցեց։

Սերմիկը կամաց կամաց գետնի մէջ թաղուեց և քնեց։

Գարնանը սերմիկը տաքացաւ, գետնից ջուր ծծեց, նրա հագուստը քիչ քիչ նեղացաւ, ճեղքուեց և նրա միջից մի բարակ ծիլ դուրս եկաւ։

2.

—Քունդ անուշ, մատաղ ծիլ, բարով եկար լոյս աշխարհ, ասաց քամին և նրան սիրեց։

—Շատ ուրախ եմ, հարեան, ասաց կապոյտ անմոռուկը։

—Մենք միասին ուրախ կը լինինք, ասացին ապիտակ ձնծաղիկները։

—Ես էլ ուրախ եմ, ասաւ կակաչը։ Գիտէք, ընկերներ, մարգարիտի ծնողներին ես ճանաչում եմ. նրանք դեղին միջուկով, ապիտակ թերթիկներով ծաղիկներ ունեն։

Մարգարիտի ծիլը շատ ուրախ էր, որ այդ տեսակ ընկերներ ունէր։ Նա մեծացաւ, մեծացաւ, շատ կոկոններ ունեցաւ։

Երբ ամենքը բացուեցին, ծաղիկները ուրախ ուրախ նայեցին, շատ հաւանեցին։ Մեկմիկ քամին էլ հանգարտ փչեց, ծաղիկներին բարեւեց ու գնաց։

Մարգարիտն ուրախ էր։

—Հայրիկ, հայրիկ, եկ տես, ինչ գեղեցիկ մարգարիտ եմ

գտել, կանչեց մի փոքրիկ աղջիկ։ Օհ, ինչքան սիրուն են, ինչքան նաշխուն են, ես ուզում եմ տուն տանել։

Երբ հայրիկն էլ հաւանեց, աղջիկն արագ արագ քանդեց բոյսի չորս կողմը, հանեց, գրեց իւր կողովը։

—Շոգ է, շոգ, ասացին ծաղիկները և գլուխները քաշ գցեցին։

Փոքրիկ աղջիկը մարգարիտը տարաւ պարտէզ և տնկեց մի վարդենու տակ։ Մարգարիտի արմատները ջուր խմեցին, յոգնած ծաղիկներն էլ կուշ եկան և քնեցին։

3.

Առաւօտեան փոքրիկ մարգարիտները վաղ զարթնեցին, զարմացած չորս կողմն էին նայում։

—Բարի գալուստ, գաշտի սիրուն ծաղիկներ, ասաց ապիտակ վարդը։

—Ես ձեզ երէկ էի ուզում բարեւել, ասաց դեղին վարդը, բայց դուք շատ յոգնած էիք. ինչպէս էք այժմ, լաւ էք։

Շնորհակալ ենք, ասացին մարգարիտները։

—Իսկ ես ձեզ կը ծանո-

թացնեմ մեր պարտէզի ծաղիկների հետ, ասաց կարմիր վարդը։

—Ձեր աչ կողմի մեծ, սպիտակ ծաղիկները շուշաններ են։ Այդ փոքրիկ թաղնուածները հինգ թեռանի մանուշակներ են։

Այս խումբն էլ մեխակներ են. նրանց մօտի փոքրիկը յափրուկն է։

Բոլոր ծաղիկները գլուխ տուին, փոքրիկ մարգարիտներն էլ խոնարհուեցին. նրանք խօսեցին, զրոյցներ արին։

Մարգարիտները մեծացան, գեղեցկացան և ամբողջ ամառը ծաղիկներ տուին։

Մի ծաղկով գարուն չի գայ

97.

Գարնանային եօթը յիր ու յան արաշում էր սիրուն ծաղիկների դալար խորերի մէջ։ Ծովի ընկերներս կոռու էին ինչանից, ղաչր կոռա... բայց ես միևակ չէի։ Մանրիկ մանուշակները իրանց խաչուած աչքերով խլլում էին երեսս, սիրուն սէկն ու սիմբիլ խորը զորգի պէս փռուել էր գակս, նստա խնկաշաղիկը։

մեր ժամի կնդրուկի պէս բուրում էր։ Խորերի մէջ խումբ խումբ ցցուած կանաչները էլ նորաստարի պէս, կաս կարմիր վերերը փռած, փոփոչով, լուռ մրմնջում էին մեղմ գիւղերի։ Դիմ ու դէմս նստայի պէս, թիկնը դրուած լերան լանջին, յոգնած ծիրուկի պէս կրթնել, կզրին էր ընկել կինաւորց ժայռը։ Ներա կրծիկ, խոր արցիկ, լուռ խոխոջով հոսում էր աղբիւր ու վերեր առուակը։ Գլխիս վերև, ժայռի գլխին, առուակի ծոր, ամեն գիշեր անուշ ծառողով ճկում, թոկկորում էին ծիրն ու արցուրը, լորն ու սարիկը, մեղուն ու բզեզը, թիթեռն ու ճպուռը։

---

98. Գարնան առաւօտ

Բարի լուսի զանգեր զարկին
Զընգզընգալէն անո՛ւշ, անո՛ւշ.
Լոյսը բացուեց մեր աշխարհքին
Ճըղճըղալէն անո՛ւշ, անո՛ւշ։

Հովտում առուն խոխոջում է
Գըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ.
Թամին բարակ շընկշնկում է
Զըլզըլալէն անո՛ւշ, անո՛ւշ։

Կռունկն եկաւ երամ կապած
Կըռկռալէն անո՛ւշ, անո՛ւշ.
Կաքաւ քարին տաղ է կարդում
Կըղկղալէն անո՛ւշ անո՛ւշ։

Հարսն ու աղջիկ հանդերն ելան
Շորորալէն անո՛ւշ, անո՛ւշ.
Ծաղկանց բուրմունքն անմահական
Սըլսըլալէն անո՛ւշ, անո՛ւշ։

---

99. Ծիծեռնակի մանը

Գարունը վաղուց շացուել էր։ Սարեակն ու ծիծեռնակը վերադարձել էին ուրիշ երկիրներից և ուրախ զարդ ծըլըլալով իրենց համար բներ էին շինում։ Մօսօն շատ էր սիրում տեսնել շինուած բներ։ Նա ձուաններն ու ձագերը դուրս էր տալիս բնից, խաղացնում, վերջը կամ ձուաններն էին կոտրտւում, կամ խեղճ ու կրակ ձագերն անշնչանում։

Այժմ երբ նա լրուած սպասում էր, թէ երբ պիտի թռչունները բներ շինեն, ձագեր հանեն։

Երկու ծիծեռնակ բուն էին գրել նրանց գոմում և բնի կէսն արդէն շինել էին։

Մի օր երեկոյեան դէմ, երբ ծիծեռնակներից մէկը մտաւ գոմը, աղաները գլխարկները ձեռներում՝ ոտքերի ծայրերով զգուշութեամբ ներս մտան ու դուռը պինդ փակեցին, որ բռնեն։ Գոմն էլ ուրիշ անցք չունէր։ Ծիծեռնակն սկսեց այս ու այն պատը թռչել, յուսահատաբար ծուում, ճչում էր. աղաների փափախները թռչում էին ամեն կողմը նրա ետևից. վերջապէս ուժասպառ ընկաւ փափախների հարուածների տակ։ Ընկաւ ու գետնին թպրտում էր։ Երկուսն էլ վրայ պրծան, Մօսօի ձեռքն ընկաւ։ Մօսօն աշխատում էր գոմից դուրս գալ, փախչել։ Գրիգորը փէշից պինդ բռնեց ու էլ բաց չէր թողնում։ Վերջապէս Մօսօն մի կերպ ազատուեց ու դուրս վազեց գոմից։ Գրիգորը նրա յետևից։ Մօսօն ինչքան ուժ ունէր՝ հուպ էր տալիս ծիծեռնակը բռնում։ Գրիգորը հասաւ նրան ու սկսեց մի կատաղի կռիւ։ Իրար քաշքշում էին, կծում, քացի տալիս և երբ վերջապէս Գրիգորը կարողացաւ Մօսօի ձեռքից խլել թռչնակը, խեղճն արդէն աչքերը փակած, վիզն անզօր կախած՝ էլ չէր շնչում։ Գրիգորն էլ վախեցած՝ վայր ձգեց թռչնակը գետնին։ Ծիծեռնակը ոտները կուչ ածած՝ բերանը բաց ու խուփ էր անում։

Այդ միջոցին մի սուր ծղրտոց լսուեց երեխաների գլխներին ու Մօսօն զգաց՝ ինչպէս իր թշին դիպաւ մի սառը հովիկ. դա ծիծեռնակի ընկերն էր, որ հէնց այդ բոպէին վերադառնում էր գոմը ցեխը բերելու։ Նա իր մարմնի ամբողջ ծանրութեամբ վայր սլացաւ դէպի իր շնչասպառ ընկերուհին՝ ծղրտալով, թևերն արագ թափահարելով, պտրտւում էր նրա գլխին, վեր բարձրանում ու ապա նորից ցած նետւում, թևով դիպչում ընկած թռչնակին, կարծես հրաւիրելով ելնել, իր հետ սլանալ վեր, դէպի անամպ երկինքը, մայր մանող արևի վառ ճառագայթների մէջ խաղալու համար։ Նրա ազիզորմ ծղրտոցին ամեն կողմից միացան դեռ մէկ, երկու, ապա ողջ գլուղի ծիծեռնակները, և ամբողջ երամը յուսահատ ծուլով, ճչալով, խառնիխուռն նետւում էր այս ու այն կողմ, մէկ իջնելով դէպի անշունչ ընկերուհին, մէկ էլ սուր սլալով դէպի վեր։

Մօսօն և Գրիգորը կարծես տեսնում էին, թէ ինչպէս ուռչում էին նրանց սպիտակ կրծքերը վշտից և կատաղութիւնից. նրանք կանգնել էին հեռու, ամօթահար, աշխատելով միմեանց երեսին չնայել։ Յետոյ նրանցից մէկը, ապա միւսը մօտեցաւ ծիծեռնակի

ակը, մի փոս փորեցին ու մեռած թռչնակին անխօս մէջն ամփոփեցին։

Ոչ այդ օրը, ոչ էլ յաջորդ օրը՝ չէր լսւում նրանց ուրախ ծիծաղը։ Նրանք էլ երբէք չմօտեցան ոչ մի թռչնակի բնի։

---

100. Հովի սրինգը

Ծառի հովանին, տերևի շրշիւն,
Տխուր ողբերգակ աղբիւրի շաչիւն,
Հաճելի գիրքը գմբուխտ կանաչով,
Մի սքանչելի գեղեցկութիւնով
Միշտ ասում են քեզ. «Ով դու անցաւոր,
Ով ինքնահաւան դու ճանապարհորդ,
Ինչու չես գալիս՝ այս հազարաւոր
Բարութեան լինում մասնակից, կցորդ»։
Եւ ահա հովից մի քաղցր քամի
Բերում է իր հետ անշշան ձայներ...
Լսւ ականջ դիր դու... այն խաշնարածի
Սրնգի երգն է։—Եկել է գիշեր,
Կանչել զառներին, հանգչել խաղերից
Եւ պատսպարւել պատառող գայլից։

---

101. Շերամ

1.

Գարնան սկզբին, հէնց որ թթենիք
Բացում են իրենց տերևներ մանրիկ,
Շերամի ձւից ելնում է մի որդ,
Մի սև անշշան, սեագոյն, փոքրիկ։

Նայում ես նրան ու չես հաւատում,
Որ նա էլ ունի ոտներ ու բերան,
Նա էլ ուզում է աշխարհում ապրել,
[illegible]

Եւ ահա ընկած տերևի վրայ՝
Ուտում է, խժռում գիշեր ու ցերեկ,
Զորս անգամ թմրում, իր մորթը փոխում,
Երեսուն օրւայ մէջ ձգւում, մեծանում։

Երեսուն օր անց՝ նա էլ չի ուտում,
Շուռ մուռ է գալիս, մի անկիւն գնում,
Կերած տերևի ամբարած հիւթը
Բարակ թելի պէս բերանից հանում։

Երեք օր, գիշեր նա այդ թելերից
Գործում է իրեն մի ամուր տնակ,
Փակւում է նրա մէջ, թմրում ու քնում.
Տասնութ օրից յետ թիթեռի փոխւած՝
Բերնի շողիքով տնակը ծակում,
Ճերմակ թևերով լոյս աշխարհ թռչում։
Եւ այդ թիթեռն երեք օրւայ մէջ
Հաղարից աւել ձրւաններ թողած՝
Ընկնում է անշունչ, մեռնում ու կորչում՝
[illegible]

Իսկ ինչ են լինում որդի տնակներ,
Ճերմակ ու դեղին սիրուն բոժոժներ։
Այդ բոժոժները մարդիկ տաք ջրում
Փափկացնում են, թելի ծայր գտնում,
Ճախարակներով բանում ու մանում
Ու այդ մանածից գործարաններում
Հազար մի տեսակ՝ թէ հաստ թէ բարակ՝
Մետաքսի կտոր գործում, պատրաստում։

---

102. Աստղեր

—Հայրիկ, ախ, ինչ գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Ինչպէս սիրուն զարդարած է
Նա անհամար աստղերով.
Թէ ուզիր է, որ ամեն մարդ
Մի աստղ ունի երկնքում,
Ինչի՞ ապա բոլոր աստղեր
Միատեսակ չեն փայլում։
Ինչի՞ համար միայն տեղ տեղ
Վառվռում են լոյս աստղեր,
Իսկ մեծ մասն այնպէս մանր
են՝
Ասես թէ են միայն կայծեր։
Ինչ լաւ կը լինէր, որ բոլորն էլ
Այնպէս պայծառ փայլէին,
Ինչպէս ահա, տես՝ այն աստղը,
Որ վառվում է մեր գլխին։
—Հա, իմ որդի, գեղեցիկ է
Նրան այդպէս զարդարել է
Աստուած կարող իր ձեռքով։
Ճշմարիտ է, ամեն մարդ էլ
Մի աստղ ունի երկնքում.
Եւ քեզ կ'ասեմ, ինչի՞ ողջն էլ
Միատեսակ չեն փայլում։
Ինչպէս այստեղ երկրի վրայ
Մարդիկ միմեանց չեն նման՝
Խելքով, գործով, վարք ու
բարքով
Են միմեանցից զանազան,
Ահա այդպէս էլ երկնքում՝
Բոլոր մարդկանց աստղերը
Հայելու պէս ցոյց են տալիս
Իրենց տիրոջ պատկերը։
Բայց մի կարծիր, որդեակ
քաղցրիկ,
որ այն վառվառ աստղերը,
Զարդարում են երկիրը,
Հարուստներին են պատկա-
նում
Կամ աշխարհիս մեծերին.
Չէ՞, ոսկին, իշխանութիւնն
Այստեղ ոչինչ չունին գին։
Շատ իշխան կայ, որի աստղը
Հազիւ հազ է պսպղում.
Աղքատ էլ կայ, որի աստղը
Գոհարի պէս է փայլում։
Ինչ մարդ այստեղ զարդար-
ւած է
Առաքինի գործերով,
Նրա աստղն էլ միշտ վառ-
ւած է
Գեղեցիկ պայծառ լուսով։
—Հայրիկ, ախ, տես այն գե-
ղեցիկ
Մեծ աստղը թռաւ իր տեղից,
Թռաւ ու հանգաւ և մի պայ-
ծառ
Գիծ թողեց իր յետևից.
Ասա, հայրիկ, այն ում աստղն
էր,
Ափսոս, ինչի՞ նա հանգաւ.
Տես, երկնքի այն մի կողմը
Ինչպէս յանկարծ մթնեցաւ։
—Այո, որդեակ, հազար ափսոս,
Որ պակասեց երկնքից
Այն վառ աստղը, որ գեղեցիկ
Լոյս էր տալիս վերևից։
—Այս բոպէին մի ազնիւ մարդ
Աստծուն տուեց իր հոգին.
Մի ազնիւ մարդ, որ միշտ
անկեղծ
Ծառայել է իր ազգին...

---

103. Ձկնորսը

Ցերկի իլիրի փոքրիկ գնակում
Էս ուշ գիշերվա լոյս է իրևում,
Ժիրուկ ձկնորսը յարակի վրայ
Ուռկաւսա է շրջում, որպէս պիր գնայ։
Ձայրիկ, ի՞նչ գնա, վարդ է էս գիշեր.
Ամբոխ, թեղուկէս յուլում, փրփրում ի՞ն ջրեր

104. Թռչունների հարսանիքը

Տեսէք, տեսէք, էն անտառում
Ի՞նչ երգեր են, ի՞նչ խնդում.
Թռչնիկներն են հարսնիք անում,
Զէնից անտառն է թնդում։

Գորգ են փռել կանաչ, սիրուն,
Աթոռները թուփ ու ծառ.
Գոգնոց կապած սուրճ են բաժնում
Ծիտիկները ժիր, կայտառ։

Խոնարհն է ագռաւ ազին,
Մառանապետը կռչաղակ.
Ծառաները, սրբիչ վզին,
Տասը քսան ծիծեռնակ։

Հրէս բերին հարս ու փեսին՝
Մի գոյգ սիրուն աղաւնի՝
Հագած սիպտակ շորեր անգին
Ու զարդարուած գեղանի։

Պսակն օրհնեց երէց բռնբռնն,
Տիրացուն էր ծեր կրկռն,
Սանամէրը հնդոռ տատին,
Ոսկիք շարած ճակատին։

Պսակից ետ արծիւ արքան
Եղաւ սուփրի թամադան...
Ու ողջ օրը կեր ու խնդում,
Զէնից անտառն է թնդում։

---

105. Կենդանիներ

Կենդանի է վայրենի,
Քնքուշ ու թանկ մորթ ունի.
Ինքն ադամ, խորամանկ,
Բունն ունի հազար ծակ։

Ես մի անդէն կենդանի
Ունիմ անթիւ թշնամի.
Շատ վախկոտ եմ ու պոչատ,
Կրծողներին հարապատ։

Մարդու, հօտի ու դատն
Պահապանն եմ անմատն.
Եւ մշակ եմ և որսկան,
Եւ մի ոչ մի կենդանի։

Տկար մարմնիս լաւ պաշտպան
Փշեր ունեմ անմատն.
Մթնով հիւրն եմ դաշտերի
Ու թշնամի օձերի։

Սիրելին եմ ամեն ատն,
Մանուկներին բարեկամ.
Մուշտակս տաք ու քնքուշ,
Մկնիկների աչքի փուշ։

Մեծ ծառերի խոռոչում
Ես իմ պալատն եմ շինում
Ու ոտերի կատարին
Ոչ մի կենդանի։

Դիտեցէք, պատմեցէք և գրեցէք։

---

107. Եսասէր հսկան

1.

Մի հսկայ ունէր մեծ, հրաշալի պարտէզ։ Այդպիսի գեղեցիկ պարտէզ ոչ մի տեղ չկար։ Գոյնզգոյն անուշահոտ ծաղիկները փռուած էին մշտադալար կանաչների մէջ։ Սիրուն թռչունները շարունակ ծլրտլում ու երգում էին՝ ծառից ծառ թռչկոտելով։ Գարնանը բոլոր ծառերը ծածկւում էին վարդագոյն ու սպիտակ ծաղիկներով և երեխաները դպրոցից վերադառնալով՝ ուրախ ուրախ խաղում էին նրանց տուերի տակ։

—Որքա՜ն լաւ է այստեղ, ասում էին նրանք։

Երեխաները հսկայից չէին վախենում, որովհետև նա տանը չէր։

ևս չի վերադառնայ։

Բայց ահա մի օր լուր տարածուեց. թէ հսկան վերադարձել է։

Երբ երեխաներն եկան պարտէզ, հսկան սաստիկ բարկացաւ և գոռաց.

—Ի՞նչպէս էք համարձակւում ուրիշի պարտէզը մտնել։ Այս պարտէզը իմն է և բացի ինձանից ոչ ոք իրաւունք չունի օգտուել նրանից։

Եւ նա պարտէզի շուրջը բարձր պարիսպ շինեց և դռան վրայ գրեց.«Ուրիշի սեպհականութեան ապահովութիւնը խանգարողը խիստ կը պատժուի»։

Հսկան սաստիկ եսասէր էր, այսինքն բացի իրանից ոչ ոքի չէր սիրում և ոչ ոքի մասին չէր մտածում։

Այդ օրւանից երեխաները զրկուեցին իրենց զեղեցիկ խաղատեղից։ Փոշոտ փողոցը նրանց դուր չէր գալիս. նրանք տխուր նայում էին պարտէզի բարձր պարիսպներին ու փակ դռանը և ահ քաշելով ասում.—Որքան լաւ էր այնտեղ, պարտէզում։

Գարունն եկաւ. ամբողջ բնութիւնը զարդարուեց կանաչով ու գոյնզգոյն ծաղիկներով։ Բայց հսկայի պարտէզում ձիւնը դեռ չէր հալչել։ Թռչուններ չկային, որ երգէին, երեխաներ չկային, որ ուրախ ծիծաղէին ու խաղային։ Պարտէզը լուռ էր, մռայլ։

—Զարմանալի է, ինչու՞ գարունը մոռացել է իմ պարտէզը, ասում էր եսասէր հսկան, դուրս նայելով ամրոցի պատուհանից։

Գարունը չմտաւ նրա պարտէզը և բարձր պարիսպների յետևից անցաւ գնաց։ Հաստաւ ամառը. նա էլ միայն մի կարճ ժամանակով ներս նայեց, տեղ տեղ մի քիչ կանաչ երևացրեց ու նոյնպէս գնաց։ Այսպէս անցաւ մի ամբողջ տարի։ Հսկայի պարտիզում շարունակ ձմեռ էր։

Նա զարմանում էր և չէր հասկանում դրա պատճառը։

2.

Մի զարնանային առաւօտ հսկային թւաց, թէ նրա պատուհանի տակ նստած են. մօտեցաւ, բաց արեց պատուհանը և սաստիկ ցիկ թռչուն էր ծըլրլում նրա պարտէզում։ Շատ ժամանակ է՝ նա թռչնի ձայն չէր լսել։ Հսկան գլուխը դուրս հանեց լուսամուտից և ինչ տեսաւ։ Կանաչ գարունը ներս էր մտել նրա պարտէզը, ծառերը ծաղկել էին, գոյնզգոյն ծաղիկները տարածել էին իրենց անուշ հոտը։

—Վերջապէս, գարունն եկաւ, բացականչեց հսկան և իջաւ պարտէզ. այստեղ նա զարմացած կանգ առաւ։ Պատի նեղ արանքից երեխաները ներս էին մտել և բարձրացել ծառերը։ Ամեն մէկը մի ծառ էր ընտրել, բարձրացել, նստել էր նրա ճիւղին և թռչնակ էր ուրախացել սիրելի հիւրի գալուն, որ սիրտը բացել էր կանաչով ու ծաղիկներով։ Ծառերն ու ծաղիկները ժպտում էին, իսկ թռչնիկներն ուրախ ծըլրլում։ Սա մի հրաշալի տեսարան էր. հսկան հիացած կանգնել էր և չէր կարող աչքը հեռացնել այդ գեղեցիկ պատկերից։ Յանկարծ նա նկատեց, որ մի փոքրիկ մանուկ կանգնել է ծառի տակ և լաց է լինում. նա չէր կարողացել բարձրանալ ծառը։ Եւ այդ ծառն դեռ չէր կանաչել։ Հսկան յուզուեց. նրա սիրտը մեղմացաւ։

—Մի՞թէ ես այնպէս եսասէր եմ եղել, որ չեմ թոյլ տուել երեխաներին մտնել իմ պարտէզը, ասաց նա. այսուհետև ես կը քանդեմ պարիսպը և իմ պարտէզը կը դարձնեմ երեխաների մշտական խաղատեղի։

Հսկան մօտեցաւ լացող մանկանը և բարձրացնելով նրան, նստեցրեց ծառի ճիւղին։ Ծառն իսկոյն կանաչեց և ծաղկեց։ Մանկիկն ուրախանալով՝ ձեռքը մեկնեց, փաթաթեց հսկայի վզովը և համբուրեց։

Միւս երեխաները, որոնք հսկային տեսնելով վախեցել, փախել էին, այդ բանը տեսնելով՝ սիրտ առան և նորից ներս վազեցին։

Այդ օրւանից երեխաներն ամեն օր գալիս էին պարտէզ։ Բարի հսկան խաղում էր նրանց հետ, զբաղեցնում և զուարճացնում էր նրանց։ Միայն այն փոքրիկ մանուկը, որին նա բարձրացրել էր ծառը՝ անհետացել էր և ոչ ոք նրան այլ ևս չէր տեսել.

—Ո՞ւր է այն փոքրիկը և ո՞վ էր նա, հարցնում էր հսկան. բայց երեխաներն ասում էին, թէ նրան չեն տեսել և չգիտեն՝ ուր է նա։

Անցան շատ տարիներ. հսկան ծերացաւ։ Նա այլ ևս չէր խաղում երեխաների հետ, այլ մեծ բազմոցի վրայ նստած՝ նայում էր նրանց խաղին։

—Գիտէք, ես շատ գեղեցիկ ծաղիկներ ունիմ, այնպիսի գեղեցիկ ծաղիկներ, որ ոչ մի տեղ չէք գտնի, ասում էր հսկան իր ծանօթներին. բայց երեխաներն աւելի գեղեցիկ են, քան ծաղիկները և ես նրանց ամեն բանից աւելի եմ սիրում։

Մի ձմռան առաւօտ հսկան դուրս նայեց լուսամուտից և տեսաւ, որ պարտէզի ծառի մէկը ծաղկել է։ Նա սասսիկ զարմացաւ, իջաւ պարտէզը և մօտենալով ծառին՝ կրկին տեսաւ իր առաջին սիրելի մանկանը։ Ուրախացած մօտ վազեց, բռնեց նրա ձեռքից և հարցրեց.

—Ո՞վ ես դու, ասա ինձ, ո՞վ ես դու...

Մանուկը ժպտաց և ասաց.

—Դու բարի գործ կատարեցիր, թոյլ տալով իմ սիրելի մանուկներին խաղալ քո պարտէզում. պարտէզդ դարձրիր նրանց համար ուրախութեան դրախտ և ես քեզ սիրեցի։ Դրա համար եկայ քեզ կանչելու, ասաց ու անհետացաւ։

Հսկան գլուխը խոնարհեց և ծունկ չոքեց։ Դասերից յետոյ երեխաներն եկան պարտէզ, տեսան ծաղկած ծառը և վազեցին դէպի նա, բայց տեսան նրա տակն իրենց սիրելի հսկային։

Նա արդէն մեռած էր և չէր խօսում։

---

108. Մի պատկեր գարնանային կեանքից

Հովտում մի ձայն է լսւում. լուռ կացէք, այդ հովիւն է իր սրինգը փչում, բրդոտ ոչխարներ ջրելու տանում։ Ահա ոչխարի տուտն երևաց, գլուխները քարշ՝ գնում են, գընում, մի մի բառաչում կամ թէ խոտ կրծում ու սասսիկ տաքից հազիւ հաղ քայլում։ Վերջապէս հասան առուի ափին, գլխներն իսկոյն ամենքը մեկնեցին ու պաղուկ ջուրն ագուռ փսսոցով իրենց քաշեցին։ Սրանք մայրերն են. բայց

ուր են գառները՝ սրանց զաւակները։ Նրանք քիչ հեռու մի բլրի վրայ խոտ են արածում, գլուխները ծռում, գէս ու դէն նայում, անուշ մայիսնով կանչում, բղաւում։ Եւ ահա հասաւ կթելու ժամը. ոչխարը նստած տեղից վեր կացաւ. իսկ բլրից գառները խուճջիկ ու մուճջիկ առուի մօտ եկան... մայրը գառնուկին, գառը մայրիկին պատում, որոնում է հարիւրի միջին.. բառաչ ու մայիւն և իրարանցում շարժում են ամենքի սիրան ու հոգին։

Տես, ահա ձայնով գառն մէկ մէկու. լռիկ ու մնջիկ կանգնեց մեր մաքին. գառնուկն առաջի երկու ոտքը ճկեց և մօր ատինքներն իր բերանը քաշեց. անուշ մշշոցով ծծում է, ծծում, իր փոքրիկ դնչով մօր կրծքին խփում, երբեմն էլ մօր ծիծն ատամների տակ ձգում ու կծում և խիստ ցաւեցնում, բայց ներող մայրն իր լեզուն հանած՝ սիրուն զաւակի դնչիկն է լիզում ու մեծ հրճւանքով նրան գուրգուրում...

Անցաւ մի բոպէ. ահա կովկիթներ, կաւէ պատուկներ շրթ՛իկ ու թրթ՛իկ մէջտեղ շարուեցին, և հարս ու աղջիկ ձեռքերը ծալած՝ հովիւների հետ կթել սկսան. խր՛ժ-բր՛ժ, խր՛ժ-բրժ լսւում են ձայներ, փրփրան կաթով լցւում ամաններ. իսկ մեր հեղ մաքին միամիտ կանգնած է տիրոջ առաջին, որ ագահ խլում է զաւկի բաժինը.

Երբ վերջացրին, հովիւներն իսկոյն մօրն իր որդուց նորից բաժանեցին, առաջւայ կարգով արօտ քշեցին...

---

109. Ուռենու հիւրերը

Գիւղին մօտիկ
Բլրի լանջից
Զուլալ աղբիւր
Է բղխում,
Գլգլալով
Ու խնդալից
Դէպ ստորոտ
Շտապում։
Էն աղբիւրի
Ակունքի մօտ
Մի դարաւոր
Ուռենի
Զարգարել է
Լանջը քարոտ՝
Փնքուշ, անուշ
Հով ունի։
Ու կէսօրւայ
Տաք ու տօթին
Իր սիրունիկ
Գառներով
Մօտ է գալի
Էն աղբիւրին
Գառնարածը
Շտապով։

Ծառը անուշ
Սըլսըլոցով
Զով է անում
Հիւրերին.
Թռչունները
Ծրլըրլոցով
Քուն են բերում
Գառներին։

Գառնարածն էլ
Շրւին բերնին
Թիկրն տւած
Ուռենուն՝
Զայնակցում է
Թռչուններին,
Գլգլոցին,
Մեղմ քամուն։

---

110. Խղճմտանքով գողը կամ բունաւորուած գաթան

1.

Մի շատ ընտանիքի հայր կար. նա օր գատում, օր ուտում էր։ Այդ գիւղումն էլ ապրում էր մի իմաստուն ծերունի, ամեն մարդ նրանից խորհուրդ էր հարցնում։

Մի օր էլ մեր խեղճ մարդն եկաւ, գնաց ծերունու մօտ խորհրդի։

—Պապի, ասա՛ նա, օր գատում, օր ուտում եմ. ինչ անեմ, որ սև օրւայ համար մի բան անտեսեմ. հիւանդութիւն կայ, անգործ մնալ կայ, ծերութիւն կայ...

Քիչ մտածելուց յետոյ ծերունին պատասխանեց.

—Որդիս, գնա՛, եօթը տեսակ սերմ առ, եօթը մարգի մէջ ցանիր, ամեն մարգին մի արհեստի անուն դիր. որ մարգը շուտ կանաչեց, էն արհեստը բռնիր, վերջը լաւ կը լինի։

Այս մարդն իմաստունի ասածով եօթը մարդ ցանեց. առաջինի անունը դրեց դարբնութիւն, երկրորդինը՝ խառատութիւն, երրորդինը՝ քարտաշութիւն, չորրորդինը՝ կօշկակարութիւն, հինգերորդինը՝ դերձակութիւն, վեցերորդինը՝ պայտառութիւն, բայց վերջին մարգի վրայ կանգ առաւ, չիմացաւ ինչ անուն դնէր. ինչպէս եղաւ, բերնից թռաւ աւազակութիւն անունը։ Մոլորած միտք արաւ թէ՝ այդ անունը դնեմ, չդնեմ, բայց իմաստունի խօսքը կատարած լինելու համար եօթներորդի անունը դրեց աւազակութիւն։

Հակառակի պէս ամենից շուտ եօթներորդ մարգը կանաչեց. սարսափը բռնեց խեղճ մարդուն.—Ի՞նչ, հիմա պիտի աւազակութիւն անեմ. չէ, էդ իմ բանը չէ. ծերունու խօսքը սուրբ է, բայց ձեռքս չի գնա աւազակութեան, փորձեմ միւս արհեստները, ինչ դուրս կ'ուզէ՝ դայ։

2.

Վեր եկաւ՝ գնաց, մի դարբնի մօտ բանւոր մտաւ. առաւօտը ծէգը ծէգին վեր էր կենում, վառում էր դարբնոցի քուրան, մեծ փուքսը փչում. վարպետը մեծ ունելիքով երկաթը խրում էր ածուխների մէջ. մեր նոր բանւորն այնքան էր փչում փուքսը, մինչև որ երկաթը շիկանում էր. յետոյ վարպետը հանում էր երկաթը քուրայից ու գցում մեծ սալի վրայ, բանւորն էլ վերցնում էր ծանր մուրճը և վարպետի ցուցմունքի համաձայն խփում էր երկաթին, որքան ուժ ունէր...խփում էր մի անգամ, երկու անգամ, հարիւր անգամ. քրտինքն աղբիւրի պէս թափում էր ճակատից, կռները ցաւում էին, այդ դեռ ոչինչ. բանն այն էր, որ հարւածների տակ երկաթից ամեն կողմ անձրևի պէս թափում էին կայծեր, երկաթի

լոյսա փշրանքներ, որոնք ընկնում էին բանւորի ձեռքերի վրայ, երեսի վրայ, այրում-ծակում էին մորթը, վէրքեր բանում և ասստիկ կսկծեցնում. բայց խեղճ մարդը հնար չունէր իր ցաւին նայելու; քանի որ նա շարունակ պիտի մուրճով երկաթը ծեծէր, որովհետև երկաթը տաք-տաք են ծեծում։

Մի օր էլ մի մեծ կայծ թռաւ, ընկաւ աչքի տակ, կոպը այրեց, մազ մնաց, որ աչքը կուրացնէր։

—Չէ, էս իմ բանը չէ, էս գործից խելքս բան չի կարում, երեսս ու ձեռքերս վառեցի, մի օր էլ կայծը լոյսս կը թափէ։

3.

Գնաց խառատի մօտ, բանւոր մտաւ. այստեղ ոչ կրակ կար, ոչ ծանր մուրճ. ազդով մերթ փայտ էր կարում, մէկ ոտնդով տախտակներ մաքրում, մերթ բուրդով փայտ ծակում, կամ մեխ խփում. այդպէս անցնում էին օրերը։ Մի օր էլ ուրադով փայտ տաշելիս՝ ուրադը սահեց փայտի վրայից և սուր բերանով դիպաւ մեծ մատին և եղունգը պոկեց, տարաւ. արիւն հոսեց, սաստիկ ցաւում էր խեղճի մատը։

— Չէ, խառատութիւնն էլ մի արհեստ չէ, մի օր էլ ձեռքս կը կտրեմ, այսպէս ասաց և գնաց քարտաշութեան։

4.

Կապեց կաշէ գոգնոցը և սկսեց տարաղով քարը տաշել. արշինով մէկ չափում էր քարի լայնքն ու երկայնքը, մէկ մուրճով կոտրում, մէկ եռանկիւնով չափում քարի անկիւնները և նորից տաշում, տաշտշում. կռնատուց մէջքը սաստիկ ցաւում էր, իսկ արեր վերից կրակ էր թափում. քրտինքը վազում էր նրա երեսից, իսկ քարի փշրանքներն ու փոշին թռչում, լցնում էին նրա աչքն ու բերանը և քրտինքի հետ շաղակուում, ցեխ դառնում, ծածկում երեսը։

— Էդ ոչինչ, տանելու բան է, հայ աշխատելը հեշտ չէ, սիրտ էր տալիս իրեն խեղճ մարդը և էլի տաշում ու տաշում։

Մէկ օր էլ մի մեծ քար կտրելիս՝ յանկարծ մուրճը քարի ձէրից մի կտոր թռցրեց և այժմ դիպաւ ճակատին, իսկ մուրճը՝ տարին։

Վա՛յ, վա՛յ, տաքս. խեղճը տաքը բռնեց ու նստաւ. մուրճի հարուածից տաքի մատները կապուտել — արնախեղդ էին եղել։

— Թող կորչի էս արհեստը. էս էլ իմ բանը չէ. գնամ կօշկակարութեան, հանգիստ գործ է՝ նստիր ու քեզ համար կօշիկ կարիր։

5.

Կօշկակարի փոքրիկ խանութում նա նստել էր վարպետի առաջը. վարպետը կօշիկի չափ ու ձևը կարում, տալիս էր նրան. իսկ նա բիդով ծակում էր կաշին և բարակ մեխերով իրար կպցնում. կամ մեծ ասեղով կարում, սուր, տափակ բերան դանակով կարատում էր կաշի աւելցուկները կամ խարտոցով հարթում կաշի վրայ խփած մեխերը։

Առաւօտից մինչև երեկոյ նստած՝ կօշիկը հագցրած կապապարի վրայ ու բռնած ծնկների մէջ, կարում էր, կարում կամ մեխեր խփում. այստեղ թէև քրտինք թափել չկար, բայց մէջքը կռանալուց խիստ ցաւում էր։

Մի օր էլ՝ երբ կօշիկը ծնկների մէջ դրած փոքրիկ մուրճով մեխ էր խփում, մէկ էլ յանկարծ՝ մուրճը կօշիկին խփելու տեղ՝ առ հա կուտաս ուղիղ ծնկոսկրին. խեղճ բանւորն այնպէս ցաւ զգաց, որ իմացաւ, թէ ոսկորը փշրուեց. ծունկը բռնելով մի կերպ վեր կացաւ, կուզէկուզ գնաց տուն։ Մի քանի օր յետոյ, երբ ծնկի ցաւն անցաւ, վեր եաւ, ուզուեց դերձակի խանութը։

Հիմա էլ դերձակ է դարձել, ծալապատիկ նստել էր վարպետի մօտ. վարպետն արշինով չափ ու ձև էր անում շորի մեծ կտորի վրայ և կաւիճով նշնում, յետոյ մկրատով կտրում էր կտորը. մեր բանւորն էլ պէտք էր կարէր. մատնոցն անցրեց մատն, ասեղն առաւ ձեռքը, սրում էր թելի ծայրը և աշխատում էր մտցնել ասեղի փոքրիկ ծակը. մէկ, երկու, տասն անգամ փորձում էր, սիրտը շատ էր նեղանում, վերջը հապա թելում էր։ Օր ու գիշեր կարում էր ու կարում և յետոյ կարածը տաք արդուկով կոկում, հարթում։

Մի անգամ էլ ասեղը շորի մէջ մտնելու տեղ՝ յանկարծ խրուեց խեղճի մատի մէջ և կտրուեց. ասեղի կտրած մասը մնաց մատի մէջ, ուռեց ոչ միայն մատը, այլև ամբողջ ձեռքը։

— Ուֆ, էս էլ իմ բանը չէ. կնաջ պէս օր ու գիշեր նստիր, կարիր ու կարիր. ոտքերս կծիկ դարձան, հիմա էլ մատս վրայ ուռչ...

6.

Մատը լաւանալուց յետոյ գնաց պայտատի մօտ, բանւոր եղաւ, [illegible]ած փոքրիկ սալի առջև մուրճով մեխի ծայրն էր սրում կամ [illegible]յտը շինում. բայց բանն այն է, որ նրա փորձած բոլոր արհեստների մէջ ամենից վատանգաւորն այս գործս եկաւ։

Մի օր էլ ձի պիտի պայտէին. մէկն ամուր բռնեց ձիու սանձն, [illegible]երորդը թոկով բռնեց ձիու ոտքը, իսկ մեր ծանօթը մանգաղի [illegible]ն սուր դանակով տաշում էր ձիու սմբակը, շինում, հարթում [illegible], որ վերան պայտը մեխէր։ Ձին փնչում էր, ցաւից ոտները դեռ-

նին տալիս, սանձը կոծում և մէկ էլ ուժ տրաւ, կապած ոտքով մի այնպիսի ամուր քացի տուաւ խեղճ մարդու քթի ու բերանին, որ սա զնդակի պէս գլոր մլոր եղաւ, քթից արիւնն աղբիւրի նման վազեց...

—Տեղն է ինձ, տեղն է, ասում էր մարդը. իմաստուն ծերունու խորհուրդը չլսեցի, պատիժս տուայ, գնամ՝ տեսնեմ ծերունին ինչ խրատ կը տայ։

Գնաց ծերունու մօտ և զլխին եկածը պատմեց։

—Պապի, ամէն բան փորձեցի, ամենն էլ անյաջող եղաւ ու զլխիս փորձանք բերեց. Ցաց աւազակութիւնը. սիրտ չեմ անում՝ էդ անխիղճ գործին գնամ, միամիտ կերպով բերնիցս թռաւ աւազակութիւն խօսքը, չուզեցի էդ ճամբով գնալ, հիմա ինչ անեմ, դու ասա։

—Դէհ, որ մի անգամ ասել ես, էլ հնար չկայ. պիտի կատարես առածս. գնա, որդի, աւազակութիւն արա. մենակ խղճով արա։

Նա էլ գլուխը քաշ զցեց ու գնաց։

7.

Բանեց՝ տարիների ու ձորերի ճամբան. մի օր էլ տեսաւ անտառում մի խումբ աւազակներ նստած հաց են ուտում։

—Բարև ձեզ, ասաց մեր ծանօթը, դուք աւազակներ էք երևում, ես էլ ուզում եմ ձեզ ընկեր լինեմ, հէնց դրա համար էլ եկել եմ։

—Համեցէք, համեցէք, մեր նոր ընկեր, նստիր, ասին աւազակները։

Նստեց նրանց կողքին. հացից յետոյ աւազակներն ասին.

—Մենք գնում ենք աւարի, դու էստեղ կաց, մեր շորերը պահիր։

Ասին ու գնացին. շատ չանցած վերադարձան աւազակները՝ հետները մի բարձած քարաւան բերին, հինգ վաճառական մարդ էլ ձեռները կապուած։

—Ոտքդ բարի էր, ասին աւազակները, լաւ որս ունեցանք. դէհ, քեզ ենք յանձնում այս հինգ հոգուն, տար քո ձեռքերով գլուխները կարիր, որ սովորես մեր արհեստը։

Մեր նոր աւազակը վեր առաւ վաճառականներին, տարաւ անտառի խորքը և ասաւ.

—Ես ինչ ունիմ ձեզ հետ. դուք ինձ ինչ վատ բան էք արել, որ ձեզ սպանեմ. ահա ձեր ձեռքերն արձակում եմ, փախէք, գնացէք, ձեր երեխաները պահեցէք։

Վաճառականները տեսան, որ այս մարդը հոգով աւազակ չէ, ասին.

—Դու աւազակ չես երևում, դու մեզ կեանք տուր, մենք էլ մեր զաղանիքը քեզ բանանք. իմացած եղիր, որ մեր բեռների մէջ թունաւորուած գաթայ կայ, դու նրանից չուտես։

—Դէհ, որ էդպէս է, էստեղ թաղ կացէք, մի գնամ, տեսնեմ՝ ընկերներս ինչ են անում։

Գնաց և ինչ տեսաւ. բոլոր աւազակները գաթան կերել՝ մեռած փռուել են գետին. իսկոյն իմաց արաւ վաճառականներին. նրանք ուրախ ուրախ եկան, իսկ մեր նոր աւազակը բոլոր բեռները վերադարձրեց նրանց։

Վաճառականներն էլ տեսնելով նրա ազնուութիւնը՝ ասին իրար.

—Ա՛յ ընկերներ, էս մարդը մեր կեանքը փրկեց, եկէք, ամէն մէկս մեր հարստութեան մի մասը տանք սրան. մի տեսակ գոնէ



նրա լաւութեան տակից դուրս գանք։

Բոլորն էլ ուրախութեամբ այնպէս արին. մեր խղճմտանքով մարդն էլ անագին հարստութեամբ բարձած քարաւանի գլուխն անցաւ, դարձաւ տուն, իր բազմանդամ ընտանիքի մօտ։

Իմաստուն ծերունին լսեց ու գովեց նրա արարքը։

---

111. Աշխատանք

I

Հարուստ էր Ոսկան, հարուստ,
մեծատուն,
Ունէր նա շատ փող, պատիւ ու անուն։
Նրա տան դուռը ձմեռ ու ամառ
Միշտ բաց էր լինում ամենքի համար.
Քանի՞ դրամներ հաց էին ուտում
Նրա սեղանից ու նրան օրհնում։
Սակայն Ոսկանը գոհ չէր վիճակից.
Նա միշտ տխուր էր, մռայլ, վշտալից։
Նրա հարազատ ու միակ որդին՝
Զնայած իր հօր խօսք ու խրատին՝
Գործով պարապել բնաւ չէր սիրում,
Ուտում էր, խմում ու հանգիստ քնում։

II

Հայրը խրատեց, մտածեց երկար,
Ապա իր որդուն տարաւ այլ աշխարհ.
Նա որդուն յանձնեց մի մեծ վարպետի,
Որ նա սրա մօտ բանի, աշխատի։
Վարպետն էլ սիրով ընդունեց նրան
Ու նշանակեց ռոճիկ տարեկան.
Ոսկանի որդուն շատ չէր բանեցնում,
Հարուստ հօր խաթրու լաւ էր
պաշտպանում.
կուշտ ուտեցնում էր, խմացնում նրան,
Հագցնում, խնամում իր որդու նման։
Իսկ երբ բոլորեց, լրացաւ տարին,
Որդին ստացաւ վարձը լիովին.
Վարպետը նրան հրաժեշտ տուեց,
Դէպի հայրենիք ճանապարհ դցեց։
Ոսկանի որդին, երբ որ տուն հասաւ,
Ստացած փողն իր հօրը տուաւ.
Բոլոր փողերը հայրը համարեց,
Իսկոյն շրջեցաւ, գետը շպրտեց,
Ապա ժպտալով նայեց իր որդուն։
Իսկ անհոգ որդին—ոչ ձայն, ոչ ծըպ-
տուն։

III

Դարձեալ Ոսկանը տխուր էր, մռայլ,
Իսկ նրա որդին ծոյլ էր ու շռայլ։
Մի օր էլ հայրը սաստիկ յուսահատ՝
Կանչեց իրա մօտ որդուն բէդովլաթ.
Նրան խրատեց, նախատեց երկար
Ու տարաւ իր հետ մի ուրիշ աշխարհ.
Այստեղ նա որդուն տուեց վարպետի,
Որ նա սրա մօտ բանի, աշխատի.
Վարպետին պատմեց որդու արարքը,
Ապա յետ գնաց իրանց աշխարհքը։
Այս նոր վարպետը առաջուան պէս չէր,
Սա շատ բարկացկոտ, անգութ ու չար
էր։
Ոսկանի որդուն չէր խղճում երբէք,
Նրան տանջում էր գիշեր ու ցերեկ,
Գործել էր տալիս, անվերջ բանեցնում,
Ցոգնեցնում նրան, հալումաշ անում։
Ոսկանի որդին այնքան նիհարեց
Եւ խեղճի վիզը այնքան բարակեց,
Որ նրա քթից եթէ բռնէին,
Տեղն ու տեղը կ'աւանդէր հոգին։

IV

Վերջապէս մի կերպ տարին լրացաւ,
Ոսկանի որդին Տիրոջ փառք տուաւ...
Նա իր վարպետից ստացաւ ռոճիկ,
Պարկը շալակեց, գնաց հայրենիք։
Երբ որ տուն հասաւ, փողերը հանեց,
Հաշուեց, համարեց ու հօրը յանձնեց։
Երբ հայրը շրջեց դէպի գետ կրկին,
Շտապով բռնեց հօր ձեռքը որդին.
«Հայր աղաչում եմ, ջուրը մի գցիր,
Արիւն քրտինքս գոնէ խնայիր.
Շատ թանգ են նստել ինձ այդ փո-
ղերը.
Թանգ են տանջանքիս այդ պտուղ
ները.
Տիրութեան ամպն իսկոյն չքացաւ,
Ոսկանը հրաւեց և ուրախացաւ,
Նա յուզած սրտով իր որդուն գրկեց
Ճակատը պաչեց և նրան օրհնեց։
Այնուհետ որդին սկսեց բանել,
Հօր պատուէրները լսել, կատարել.
Նա թողեց նախկին իր շռայլ կեանքը,
Սկսեց յարգել սուրբ աշխատանքը։

---

112. Առաջին արլորը

Ծուղրուղու... էյ, թառերին
Հանգիստ քնած աքլորներ,
Իմաց տուէք մեծ ու փոքրին՝
Թէ գործի ժամն է հասել։
Ծեր ու պառաւ ժամ շտապեն,
Հարս ու աղջիկ դէպի գետ,
Հօտ ու նախիր թող դուրս հանեն,
Բշեն հանդը խոտաւէտ։
Մաճկալ, հօտաղ դաշտն երթան,
Ջրուոր, քաղուոր դէպի գործ,
Հնձուորներն արտն երթան,
Մանուկները դէպ դպրոց։

---

113. Ամառային գիշեր

Լուսնկայ անուշ գիշեր էր. աստղերը, երկնքի հազար-հազար աչքերը, մանկան պէս ժպտում էին. ես պառկել էի գետակի ափին ու նայում երկնքի շողշողուն աչքերին։

Զկար ցերեկուայ անախորժ աղմուկներն ու աղաղակները. գետակը մեղմ մրմունջով քչքչում էր, ասես, մի անվերջանալի, անհասանելի հէքեաթ էր պատմում. ափի ուռենիները սաւերներով փաթաթուած՝ գլուխները գցած կախ՝ լսում էին այս գեղեցիկ հէքեաթը։

Լայն ու արձակ դաշտերը ծծել էին լուսնի կաթնոտ շողերն ու քուն էին մտել. քուն էին մտել կարմիր ու նաշխուն, անուշ ու ընքուշ ծաղիկները. քուն էին մտել նրանց

թփերի տակ և նրանց բողբոջների մէջ չարաճճի թիթեռներն ու բզբզան բզէզները...միայն մեղմ քամին էր արթուն, որ բարակ փչում էր իր քնքուշ սրինգը և որն իր դուրեկան շշնջիւնի հետ տարածում էր ծաղիկների անուշ բուրմունքը։

Ես ականջ դրած առւակի հէքեաթին և քամու մեղմիկ շշնջիւնին, հարբած ծաղիկների անուշ բուրմունքով՝ կէս քուն կէս արթուն՝ ասես թէ՝ մի սիրուն հրաշալի երազի մէջ էի։

Ա՜խ, ինչքան գեղեցիկ է, ինչքան չքնաղ է ամառային գիշերը բաց օդում, աստղավառ երկնքի տակ...

---

114. Շինականի առաւօտեան երգը

Ա՜յ մարդ, այսօր շատ քնեցար, ննջեցիր,
Առաւօտեան զով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը սրփոեցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարի գիրանդիով հնձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիներու հովումը։

Ա՜յ մարդ, վեր կաց, սառը ջրով լուացիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։

Խուրձդ կապէ, բարդը բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի,
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը։

Ա՜յ մարդ, հերիք ինչ որ այսօր քնեցար,
Աչքդ մէկ բաց, տես թէ որքան ուշացար.
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լռել է մեր գիրը ձայնելէն։

Ի՞նչ ես պառկել, ինչ ես քնել սիրեկան,
Արեգակն շողը հասաւ մեր դռան.
Մի ծուլանար, ժամանակդ խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ։

---

115. Բնութեան գրկում

I

Սքանչելի պատկեր։ Կանաչ պարտիզում,
Ոչ ինչ ոգելից շարժում է տիրում.
Ամեն ինչ ծաղկած ամեն ինչ փթթած,
Նոր կեանք է շնչում։ Ես ներշնչած
Անխօս դիտում եմ այդ կախարդական
Կենդանութիւնը գեղազարդ գարնան։
Ահա փչում է զեփիւռ հովասուն.
Երգում է սոխակ և նրա զգայուն,
Սիրալից ձայնը, կարծես թէ մագնիս,
Դէպ ինքն է քաշում սիրտս ու հոգիս...
Բայց միայն ես չեմ ակնապիշ այդպէս
Լսում սոխակին։—Ո՛չ, ամբողջ պարտէզ
Կախարդւած նրա երգից ոգեշունչ,
Լսում է նրան, լսում անմոռունչ...

II

Ահա ժպտում է և ծաղիկների
Վսեմ թագուհին—վարդը նազելի
Եւ նրա դէմքին չքնաղ սիրալիր
Կարծես կարդում եմ.«Պատանի, նայ
«Այն իմ ժպիտն է, ժպիտ կուսակա
«Ոգի ներշնչել երգչին բնութեան.
«Այն իմ հայեացքն է, անարատ, և
պայծ
«Որին նա վառած ձգտում է քնար»
Նայում եմ շուրջս—աջ, ձախ, յետ, առա
Ճօճում են ծառեր, ծփում է կանաչ
Եւ մանիշակը հեզ, կապուտաչեկ
Ժպտում է թագուն։ Բացել է յասմի
Բացել են և այլ ծաղկալից թփեր
Եւ շուրջ տարածել հովասուն ստեր

---

116. Ոգևին և օձը

Ամառուայ մի տաք օր էր։ Արեգակի կիզիչ ճառագայթներն այրում, խորովում էին գիւղի տուն ու տրօտները։ Դրսում ամեն ինչ լուռ էր, ամեն ինչ մեռած։ Մէկ էլ Սարգիսն երևաց և ասաց.— Շուտ արա, Յակոբ, գնանք տեսնենք, օձն ու ոգնին կռւում են։ Մենք վազեցինք և ինչ տեսանք։ Ներքև, ձորի մէջ, կռւում էին ոգնին ու օձը։ Կռիւը կատաղի էր։ Օձը սուլում ու թոիչքներ էր գործում ոգնու շուրջը, առանց կարողանալու սակայն որևէ վնաս հաս-

ընել փշոտ ոգնուն։ Ոգնին էլ իր փոքրիկ գլուխը հանում և յարմար տպէից օգուտելով՝ կծում էր օձի մէջքը, փորը, վիզը և այլն։

Վերջին անգամ նա իր փշերի միջից յանկարծ հանեց գլուխը, մի ակնթարթում բռնեց օձի պոչը և կրկին կծկուեց։ Օձը որքան աշխատեց, չկարողացաւ ազատել պոչը ոգնու բերանից. ոգնին ամուր կծկուած էր։

Անտանելի ցաւից վշտալով՝ օձն երբեմն գլուխն էր մօտեցնում պոչին, երբեմն մարմինն էր այս ու այն կողմ նետում, որ մի կերպ ազատուի ոգնուց, բայց իզուր. ոգնու փշերը շատ ամուր և սուր էին, նրանք անխնայ քրքրում էին օձի մարմինն ու գլուխը։

Հետզհետէ օձը թուլացաւ. նրա մարմնի վրայ բազմաթիւ վերքեր կային. նա այլ ևս չէր սուլում, այլ միայն ցնցում էր ամբողջ մարմնով, բայց դարձեալ ապարդիւն. ոգնին կծկուած էր ամուր՝ օձի պոչը բերանում բռնած։

Բաւականին ժամանակ անցաւ, մինչև օձը վերջապէս դադարեց ցնցուելուց. նա արդէն սատկել էր։ Ոգնին թողեց նրա պոչը, զգուշութեամբ մի քանի անգամ հանեց գլուխը, դիտեց շուրջը, նայեց օձին և երբ հաւատացաւ, որ օձն անշնչացած է, թողեց նրան ու ինքը ծածկուեց մօտակայ թփերի տակ։

---

117. Հօ, հո, եզ ջան

Հօ, հо, եզ ջան, հо, կալ արա,
Կալիդ զուրբան, հէյ ընկեր.
Հо, կալ արա, մի հալ արա,
Թէջը դիզենք, ջան ախպեր։

Իրիկուն կուգայ, մութը կ'ընկնի,
Ասող ու լուսին կը բացուին.
Հովիկ կու գոյ, ցուրտը կ'ընկնի,
Հо, հо, մեռնեմ քո ջանին։

Կուրծքս բացած թէջին կ'ելնեմ,
Ցորեն, գարի կը մաքրեմ.
Մատաղ կ'անեմ, խէշին կ'ելնեմ,
Հէյ ջան, մեր ծուն լի ու շէն։

Երբ ձմեռ գայ բուք ու բորանով,
Ցուրտը գայ, սով գայ էս տարուան,
Մեզ համար չեն.—լի բերանով
Փառք տանք տիրոջ, հо եզ ջան։

---

118. Մրջիւններ

Մի օր արմենակն իրենց պատշգամբի սիւնի վրայ անթիւ, անհամար մրջիւններ տեսաւ։ Նրանցից շատերը սիւնի գլխից արագ-արագ իրար յետևից ներքև էին շտապում, շատերն էլ ներքևից վերև էին բարձրանում։ Նա ուշի ուշով դիտեց և նկատեց, որ երկու կողմից եկողներն իրար հանդիպելիս մի փոքր կանգ էին առնում, գլուխ գլխի տալիս յետոյ միասին իսկոյն ներքև էին վերադառնում։

—Էս ինչ բան է, մտածեց Արմենակը, թէ վերև են գնում, էլ ինչու են վերադառնում։

—Շատ մտածեց, բայց ոչինչ չհասկացաւ և հարցրեց հայրիկին։

—Նրանք իրենց կամքով չեն վերադառնում, ասաց հայրիկը, այլ վերևից եկող ընկերներն են նրանց վերադարձնում։

—Ի՞նչպէս, հարցրեց Արմենակը։

—Դու տեսնում ես, որ հանդիպելիս գլուխ գլխի են տալիս։

—Այո, տեսնում եմ։ Ինչու են այդպէս անում, հայրիկ։

—Նրանք խօսում են։

—Խօսում են։

—Այո, իմ սիրելիս. ներքևից գնացողը հարցնում է վերևից իջնողին՝ վերևում հо վատանգ չկայ։ Վերևից եկողն է

պատասխանում է՝ այո, կայ։ Այս է պատճառը, որ վերև գնացողները ճանապարհը չեն շարունակում ու վերադառնում են։

Արմենակն ուզեց անպատճառ իմանալ, թէ ինչ փոանգ կայ վերևում։ Բարձրացաւ կատուրը, մօտեցաւ այն սիւնի գլխին, որտեղից մրջիւնները ներքև էին իջնում. և ինչ տեսաւ։ Սիւնի վերևում սարդը ցանց է հիւսել, ինքն էլ մի կողմում կուչ է եկել, այնտեղից շուտ շուտ յարձակւում է իջնող մրջիւնների վրայ, նրանց բռնում, իր ցանցը քաշ տալիս, վրաներն ընկնում ու ծծում։

Արմենակը մտածեց մի փորձ անել. նա սարդի հիւսած ցանցը քանդեց, սարդին փախցրեց, ներքև իջաւ. էլի կանգնեց սիւնի առաջ ու դիտեց։

Մի քիչ յետոյ նա նկատեց, որ վերև գնացող մրջիւնները թէև էլի գլուխ գլխի էին տալիս իջնողների հետ, բայց էլ չէին վերադառնում, այլ շարունակում էին իրենց ճանապարհը դէպի վեր։

Արմենակը շտապով վազեց հայրիկի մօտ՝ կանչելով.

—Հայրիկ, հայրիկ, ինչ խելօք են եղել այս փոքրիկ մրջիւնները։

Ու հայրիկը նրան շատ ուրիշ զարմանալի բաներ պատմեց մրջիւնների խելքի մասին։

Պատիկ է, բայց ճատիկ է։

---

119. Կռունկն ու սագը

Կապուտակ լճի ջրի երեսին
Ճարպիկ ու արագ սագիկն է լողում.
Սուրում ջրի տակ, դուրս գալիս կրկին
Ու ինքն իրեն բարձրաձայն գովում.

—Օդում թռչում եմ, ցամաքում վազում,
Լճակի ջուրը պատռում նետի պէս.
Ինձ պէս ուրիշը չկայ աշխարհում,
Ողջ թռչունների թագաւորն եմ ես։

—Իզուր ես գովում, յիմար, ինքդ քեզ,
Կռունկը նրան ձայնեց վերևից.
Կարող ես արգեօք լողալ ձկան պէս,
Եղնիկի նման վազել քարափից.

Արծրւի նման հպարտ, փառաւոր
Կարող ես պատռել ծալքերն ամպերի...
Լաւ է գիտենալ մի բան հիմնաւոր,
Քան թէ շատ բաներ, բոլորն էլ թերի...

---

120. Յարդագողի ճանապարհը

Ինչքան սիրուն է ու կախարդական
Աստղերի շարքում յարդագողի ճամբան,
Երբ դու երբեմն պայծառ գիշերին
Նայում ես աստղոտ երկնակամարին։
Ասում են իբրև հին-հին դարերում
Էն կապուտաչեայ երկնակամարում
Բնակւում էին լի ու բախտաւոր
Մի լաւ սանահէր, մի ժլատ քաւոր։
Եղաւ մի օր՝ ձմռան բքին
Բաղդը յանկարծ թողեց մէկին,
Մեր սանահօր յարդը հատաւ
Ու սա տխուր գոմը մտաւ.
Գոմը մտաւ ահից սառած,
Տաւարները ծարաւ, սոված
Սպասում են ու բառաչում,
Բայց... յարդ չկայ մսրի մէջում։
Սանահէրն էր խեղճ-գլխակոր,
Մնաց էսպէս երեք-չորս օր։
Գնալ-խնդրել իր քաւորից
Մինչև ձիւնը հալւէր նորից։

—Աչքի արև, իմ լաւ քաւոր,
Տաւարներս գոմում փակւած,
Բառաչում են ծարաւ-սոված,
Սանահօրդ վրայ գթա,
Մեր կթոցով քիչ դարման տա...
—Ես հոգս անեմ տաւարներիդ,
Ասաւ քաւորն էսպէս կոպիտ.
Ոչ մի ծղնօտ չեմ կարող տալ,
Չեմ կամենում էդպէս գթալ...
Սանահէրն էլ դատարկ դատաւ.
Դարձեալ գոմում քաղցած-ծարաւ
Տաւարներն են խուլ բառաչում,
Բայց...յարդ չկայ մսրի մէջում...
Երբ որ իջաւ գիշերը մութ,
Սև թևերը փռեց խաւուտ,
Շալակն առաւ մեծ կթոցը,
Հայդէ քաւոր յարդանոցը...
Լիքը լցրեց ագահ, ագահ
Ու դառնալիս մտածելով,
Որ յարդի ափն ահա կը գայ,
Վազ էր տալիս հեհեալով.
Ու վազ տալիս չէր նկատում,
Որ դարմանը թափւում է ցած,
Դեղին շերտով ձիւնը ծածկում,

գէս ոսկի գեանին փռած,
այդպիսով առաւօտեան
արդարդին հեռքով դաան։
ա էն հեռքն է, որ պարդ
գիշերին
անում ենք ոսկէ մի գօտենման

Պատած կապտաչեայ երկնակամարին,
Որ կարծես լինի թափթփուած
դարման,
Որին այս գեղքի պատճառով հիմա
Մարդիկ ասում են
«Ցարդապոդի ճամբայ»։

---

121. Ահմեդի ուղտը

Ամառուայ շոգ օրին Ահմեդը հինգ ուղտ յեռակը դցած՝ գնում ։ քաղաք։

Կէս օրին հանդիպեց մի աղբիւրի, որ ճամբի ափին ուրախ ուսխ քշքշում էր ծառերի հով սաւերի տակ։

Երբ Ահմեդը ուշքի եկաւ, տեսաւ, ուղտի մէկը չկայ. կանգնց աղբիւրի գլխին, գիտեց չորս գլին, միայն հեռուում մի գիւղ սաւերի միջից ճերմակին էր տալիս։

Շտապով ոտքի հանեց ուղտերը, գնաց գիւղ։ Մի պառաւ կին տատեց։

—Նանի, ասաւ Ահմեդը, ուղտս կորել է, չես տեսել։

—Իմ կարիճ աքլորն է կորել. ման կը դամ, ման կը դամ, չեմ տանի. քո ուղտն աչքիս կ'երևայ, առաջ—առաջ արի, աքլորս ման անք՝ գտնենք, յետոյ քո ուղտը։

Ահմեդը գլուխը ժամ տալով մտաւ գիւղը, ուղտերը պահ տուաւ գիւղի տանուտէրին ու ինքը գնաց կորուսաը փնտռելու։

Գիւղից դուրս տեսաւ մի մարդ, որի ցորենը թափել է ճամբի բկայնքով. խեղճ մարդը բուռ բուռ ցորեն է հաւաքում, լցնում լարկը և մատներով հողն էր փորփրում։

—Այ մարդ, ուղտս կորել է, էստեղով չէ՞ անցել, չես տեսել,

—Ես իմ գլուխս եմ մոլորել, նեղացած ասաւ մարդը. երեխաերիս ապրուստը հոգ դարձաւ, ասեղս եմ կորցրել, ասեղս, որ կամեմ պարկս, երթամ տուն. արի, առաջ ու առաջ ասեղս փնտռենք, գտնենք, յետոյ քո ուղտը։

—«Խելառ են էս մարդիկը,» մնթմնթաց Ահմեդն ու առաջ գնաց։

Գնաց, հասաւ մի գետի. ափին երկու ձկնորս ոտաբոբիկ աւազն էին քրքրում։

Ախպէրներ, ասաւ Ահմեդը. էստեղով ուղտ չանցաւ, չէ՞ք տեսել, էսպէս—էսպէս մի ուղտ։

—Առաւօտից մինչև հիմի արևի տակն էրեցինք, թէ ինչ է մի երկու ձուկ բռնենք, տներս պահենք. հիմի մեր ուտկանը պատռել է. թելի կծիկն ենք կորցրել, որ կապենք, կարկատենք ուտկանը, գործի լինենք. ուղտն աչքերիս կ'երևայ. արի առաջ ու առաջ մեր կծիկը փնտռենք, գտնենք, յետոյ քո ուղտը։

Ահմեդը նեղացած նստեց մի ծառի տակ և տխուր-տրտում միտք էր անում... քունը վրայ հասաւ և յոգնած Ահմեդը աչքերը փակեց ու երազ տեսաւ։ Մայրն եկաւ, Ահմեդի գլուխը շոյեց և ասաւ.—Որդիս, մի յուսահատուիր, ուղտդ կորած չէ. մենակ այս աշխարհիս բանն այնպէս է, որ առաջ ուրիշի կորուստը պիտի փրնտռես, որ ուրիշն էլ քո կորուստը որոնէ...մի մեղադրիր մարդկանց. ամեն մէկի համար իրեն աքլորն ու ասեղը քո ուղտի չափ է։

Ահմեդը զարթնեց և վազեց աքլորը կորցրած պառաւի մօտ։

—Նանի, աքլորդ գտա՞ր։

—Չէ, որդի, չէ։

—Արի միասին փնտռենք, ասաւ Ահմեդը։

Երկուսով ընկան գիւղի երթևեկներն ու կալերը, մինչև ուշ իրիկուն որոնեցին. մէկ էլ պառաւը ուրախ-ուրախ գոչեց.—Ահա աքլորս, աքլորս պատի տակ նստել է։

Ահմեդը վազեց դէպի աքլորը։ Սա էլ վախեցած, թևերը թափ տալով՝ վազեց դէպի դաշտը. մէկ էլ Ահմեդի աչքին դիպաւ իրեն ուղտը, որ կանաչի մէջ նստած՝ հանգիստ որոճում է։

Ահմեդի ուրախութեան չափ չկայ. մէկ ձեռքով գրկած աքլորը, միւս ձեռքով բռնած ուղտի վզակապի թոկը, խնդերես մտաւ գիւղ։

---

122. Զորա եղանակ

Ես մանուկ եմ ծաղկաւէտ,
Զգեստներս հոտաւէտ,
Դէմքս պայծառ, ժպտերես.
Ասէք, տեսնեմ՝ ո՞վ եմ ես։

Ես ծերուկ եմ անձրեւոտ,
Դէմքս մռայլ մտածկոտ,
Զարդս դեղին ու պէս պէս.
Ասէք, տեսնեմ՝ ո՞վ եմ ես։

—Դու գարունն ես ցանկալի,
Սիրուն երազն աշխարհի.
Բերում ես վարդ, մանուշակ,
Անթիւ երգեր ու թռչնակ։

—Դու աշունն ես հովասուն,
Շորդ սիրուն ու նախշուն.
Բերում ես մեզ գինի, միրգ՝
Անուշ, հոտոտ ու քաղցրիկ։

Պատանի եմ ուրախակէզ,
Այրում եմ ձեռք ու երես,
Ընծաներ եմ բերում ձեզ.
Ասէք, տեսնեմ՝ ո՞վ եմ ես։

Ալեոր եմ սպիտակ,
Բերում եմ բուք ու սառնակ,
Կարմիր ներկում թուշ, երես.
Ասէք, տեսնեմ՝ ո՞վ եմ ես։

—Դու ամառն ես արեւոտ,
Ունես բարիք անհամար
Եւ ամենքին քո ծոցից
Առատ բաժին ես տալիս։

—Դու ձմեռն ես ցրտաբեր,
Բերում ես տաք վերմակներ,
Որ արմատը բոյսերի
Ցրտից, քամուց չսառի։

---

123. Կարկուտ

1.

Սև ու ծանր ամպերը սարի յեռևից զանգաղ եկան, գիզ-գիզին ու կախ ընկան երկնքից. խորին մթութիւնը ամեն ինչ պատեց։

Յանկարծ արուտաց երկինքը, երկիրը դղրդաց, ցոլաց փայլակը, կայծակը խփեց, մոնչեց քամին, ծառերը զողացին, թեքեցին գլուխները. խոշոր ու ծանր կաթիլներ ընկան տերևներին։

Անձրևը սաստկացաւ. անձրևի յեռևից էլ սառցէ գնդակներ շրրը՛խկ հա շրրը՛խկ թակեցին գետինը յորդ և ուժեղ։ Թակում են, թակում, սար ու ձոր ծածկում, ոչ դաշտ են հարցնում, ոչ արտ ու այգի։

2.

Ամեն տեղ շփոթ ու իրարանցում։ Հօտը ցրւում է, նախիրը փախչում, ձիերը խրտնած դէս ու դէն են վազում, թռչունները պահւում են իրենց բներում. հորթարած, փայտահատ, ամենքն իրենց գործերը թողած՝ թփերի տակին ապաստան են փնտռում։

«Կարկուտ, ա՜խ ինչ կարկուտ, կանչում են գիւղացիք իրենց դռանը կանգնած. այս ինչ պատիժ է»։

Ծերը ծնկաչոք, արցունքն աչքին Աստուած է կանչում. պառաւն երկաթէ կասկարն հանում շպրտում է բակը ու նզովք է կարդում. հարսներն ու աղջիկները պատի տակ շարուած սուր դանակներով կարկուտ են կտրում ու նայում երկինք. իսկ երկրագործը կանգնած է անճար, ձեռքը ծոցում, շարժում է գլուխը ու ա՜խ է քաշում։

1.

Կարկուտը դադարեց, լռեց որոտը, ամպերի ճեղքից նայեց արեւը. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ։

Այգեպանը վազեց իր այգին, նայեց իր շուրջը և գլխին տուաւ։ Ծառերը տերևաթափ և ճղակոտոր, պտուղները կարկտահար ու թաւ զորզի նման փռուած գետին...

—Ափսո՜ս իմ այգի, ափսո՜ս իմ աշխատանք. հեծեց նա յուսահատ և աչքերը լցեցին։

Արտատէրը վազէվազ իր արտը հասաւ։ Հասկերը ջարդուած, հողին հաւասար, ցեխին ու աւազն արտումը կիսուած... Ոտքերը թուլացան, աչքերը սևացան, քարացած մնաց։

---

124. Ա՜յ սեւ ամպեր

Ա՜յ, սև ամպեր, վա՜յ, սև ամպեր,
Սիրտս պատեց սև ու մութ.
Արդեօք ինչ էք դուք ինձ բերում,
Գարնան անձրև՞, թէ կարկուտ...

Յուսով-յուսով արտ եմ ցանել,
Արիւն թափել ու քրտինք,
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,
Աղօթք արել, որ երկինք

Արտիս նայի, տանս խնայի,
Օր ասայ, կեանք ասայ իմ հացին.
Վա՜յ բալէքիս... Աստուած չանի,
Գարնան անձրև՞, թէ կարկուտ...

Ա՜յ, սև ամպեր, ինչ էք գոռում,
Սիրտս պատեց սև ու մութ.
Արդեօք ինչ էք արտիս բերում,
Գարնան անձրև, թէ՞ կարկուտ...

ՅԱՆԿ

Երկու խօսք . . . 3

I

ԱՇՈՒՆ

1 Կարդա՛, ոտ. Ա. Ծատուրեան . 5
2 Լեռնային երեկոյ, Բաֆֆի, ձեռագիր (եր, ներ) . . 6
Դպրոցական իրերի պատկերներ՝ նկարելու համար . . 7
4 Գիշեր, ոտան. Հ. Հայրապետեան 7
5 Լեռներում, Աւ. Ահարոնեան . 8
6 Այրի մօր գուրգուրանքը, ձեռ. (հրամայական ա, իր. իկ. ուկ,) մեծատառեր . . 11
7 Նիհարիկը 11
8 Հայրենի աղբիւր, ոտան. . 15
9 Գիսակ, Մխակ, ձեռագիր (յատուկ անուններ և մեծատառեր) Յ. Աղաբաբ . . . 15
10 Իշխանի բերդն ու ջրաղացը . 15
Էն ինչն է հանելուկ(ջրաղաց)16
Շարադրական պատկեր,քնած մանուկը . . . 17
12 Սիրոյ բունը, ոտան . . 17
13 Ջրաղաց, ոտ. Ա. Խնկոյեան . 18
14 Առիւծը 19
15 Աշնան վերջին,Բաֆֆի . . 21
16 Աշուն, ոտան. Գ. Մեսեան . 21
Էն ինչն է, ձեռագիր (ից) .22
Շարադրական պատկեր, մանուկներ 23
19 Քաջ որսկանը . . . 23
20 Ա՜խ, մեր սիրաը, ոտան, ձեռագիր (ից, մեծատառեր) . 25
21 Ջինուած քուրդը, Բաֆֆի . 26
22 Քուրդը ձիու վրայ, Բաֆֆի . 27
Շարադրական պատկեր, աղջիկն ու փիսիկը . . 28
24 Աղէքսն ու գայլը, ոտան. Ա.Թ. Խնկոյեան . . . 28
25 Սիրելի ընկեր Վարդան, ձեռագիր (երորդ, բորդ) . . 30
26 Արագածի որսորդը . . 32
27 Խորամանկ կապիկը . . 33
28 Գերի արագիլն, ոտան. ձեռագիր (ած), Յով. Յովհան. 34
29 Զրի կաթիլի ճանապարհորդութիւնը 34
30 Հովի դարձը սարից, ոտ. Բարխուդարեան . . . 37
31 Քրդի կարծիքը գրի մասին . 37
32 Սիրելի քոյրիկ, ձեռագիր (եր, ներ, առոգ. նշաններ, անց. անկատար ժամանակ) . . 39
33 Ջան, այ լուսին, ոտան. Յ. Աղաբաբ 40
34 Ռոբինզոնը կղզու վրայ . . 41
Շարադրական պատկեր, աշակերտի առաւօտեան գործը . 42
36 Կկուն և տատրակը, ոտան.Ա.Թ. Խնկոյեան . . . 42
Էն ինչն է, ձեռագիր (յ—բառավերջում) . . . 44
(բացատր. ուսում)
38 Ռոբինզոնի գիւտերը . . 44
39 Պատկեր, ոտ. Հ.Հայրապետեան 45
40 Նապաստակները, ոտան. Ա.Թ. Խնկոյեան . . . 46
41 Խալիֆի դատաստանը . . 46
42 Թռչուններ, ոտ. ձեռագիր մի մասը (իկ, ակ, ող, ան վերջաւորութիւններ), Հ. Հայրապետեան 49
Շարադրական պատկեր,նկարիչ տղան ու աղջիկը . . 50
44 Ռոբինզոնի ճանապարհորդութիւնը և նոր գիւտերը . 51
45 Անձնուէր պահապանը . . 54
46 Խեցգետնի արկածը . . 56
47 Գիւղացու երջանկութիւնը, Խ. Արովեան . . . 58
48 Սիրելի հայրիկ, ձեռագիր (բարդ բառեր, անց. կատ. ան, ա, ղժ, չ) 59

II

ՁՄԵՌ

Ձմեռ—շարադրական պատկեր 61
49 Ծեր ձմեռը. ոտ. Զաւախեցի . 61
50 Աղդան, Սիմակ . . . 61
51 Հարսնաքար, ոտ. Հ. Հայրապետեան . . . 62
52 Գողին բռնեց . . . 63
53 Այրուած խրճիթ, մի մասը ձեռագ. (ւ, և կէտադրութիւն), փոխ. Զ. Չիլինկ. . . 66
54 Մկների ժողովը, ոտան. Ա.Թ. Խնկոյեան . . . 68
55 Հիւսիսային երկրներում . 69
56 Ուրախ նոր տարի . . 72
Նոր տարի, շարադրական պատկեր . . . 75
57 Ամենապէտքական բանն աշխարհում . . . 76
58 Բրուտի թագին,ոտ.Զաւախեցի 79
Շարադրական պատկեր, երեխան վառարանի մօտ տաքանալիս 80
59 Իմ ընկերոջ գիւղը . . 80
Շարադրական պատկեր . 82
61 Գայլն ու կատուն, ոտան. Ա.Թ. Խնկոյեան . . . 83
62 Բարեկենդանը,մի մասը ձեռագիր(կէտադրութիւն), Յովհ. Թումանեան . . . 84
63 Ագռաւն ու աղէքսը ոտ. Ա.Թ. Խնկոյեան . . . 86
64 Երկաթուղի . . . 87
Շարադրական պատկեր, ուսուցիչը դասարանում . . 90
66 Իմաստուն ջուլհակը, մի մասը ձեռագիր (անց. կատարեալ), Սրւանձատեան . . . 91
67 Պրինցն ու ծիծեռնակը,փոդխազը. Զ. Չիլինկարեան . . 93
68 Գիշերն, ոտան. ձեռագիր (էք, ով և առոգ. նշաններ) . 98
69 Աղի բիւրեղներ . . 99
70 Ռոբիզոնի երկիրը . . 101
71 Ուրբաթը . . . 102
Շարադրական պատկեր, աղջիկն ու շունը . . 104
73 Խորամանկ աղէքսը. մի մասը ձեռագիր (ած, ւ, եր, ներ), փոխ. Պ. Պռոշեան . . 104
74 Ամենալաւ վկայականը,Սահակ 112
75 Սևուկն ու Զանիկը . . 112
Շարադրական պատկեր, ծիտիկների կռիւը . . 113
77 Հուրի-Մալաք, ոտ. մի մասը ձեռագիր (կէտադրութիւն) 114

III

ԳԱՐՈՒՆ

78 Գարուն, ոտան. Գ. Մեսեան 129
Շարադրական պատկեր,երկու կամակոր այծեր . . 127
80 Գարնան երգերից . . 127
81 Ձիւն ու ձնծաղիկ . . 128
82 Մարտի վրէժը, ոտ. մի մասը ձեռագիր (անց. կատարեալ), Հ. Հայրապետեան . . 130
83 Գայլաձուկը,ձեռագիր(եր,ներ) 131
84 Սերմնացանը,ոտ.Արարատեան 132
85 Արևի մօտ. մի մասը ձեռագիր (անց. անկատար) . . 132
86 Սարերի որդին,ոտ.Գ.Մեսեան 135
87 Գարնանային առաւօտ, ձեռա-

գիր (անց. անկատար), Բաֆֆի . . . 135
Մի քանի հայաբոյսերի և երկրագործական գործիքների պատկերներ՝ նկարելու համար . 137
89 Մայիսը, Ալիշան . . 138
90 Վարդ մայիսը, ոտ. Ց. Աղար. 138
91 Վարդենու փշերը, մի մասը ձեռագիր (եր, ներ, ել) ըստ. Մ. Նորդաուի . . 139
Շարադրական պատկեր, Աղուէսը բաղ որսալիս . . 141
93 Եայլաղ. Խ. Աբովեան . 142
94 Գարնան երգերից . . 143
95 Շինականի երգը, ժողովրդ. 143
96 Մարգարիտի սերմը . . 144
97 Գառներիս հօտը, ձեռագիր (անց. անկատար, կէտագր.) 146
98 Գարնան առաւօտ, ոտան. 148
99 Ծիծեռնակի մահը, Զ. Մեսեան . . . 148
100 Հովի սրինգը, ոտ. Ս. Շահազիզ 150
101 Շերամ, ոտան. Կ. Մելիք-Շահնազարեան . . 150
102 Աստղեր, ոտան. Թարգ. Բարխուդարեանի . . . 152
103 Ձկնորսը, ոտան. ձեռագիր (ներկայ ժամանակ) . 153
104 Թռչունների հարսանիքը, ոտ. 154
105 Կենդանիներ, ոտ. Հ. Հայրապ. 154
Շարադրական պատկեր, մանուկ և շնիկներ . . 155
107 Եասէր հոկան, փոխադր. Զ. Զիլինկարեանի . . 155
108 Մի պատկեր գարնանային կեանքից, Կ. Մ. Շահնազարեան 158
109 Ուռենու հիւրը, ոտան. Հ. Հայրապետեան . . 159
110 Խղճմտանքով գողը կամ թունաւորուած գաթան . . 160
Ընտանեկան իրերի պատկեր՝ նկարելու համար . . 165
111 Աշխատանք, ոտան. Յար. Թումանեան . . . 166
112 Առաջին աքլորը. ոտան. Հ. Հայրապետեան . . 167

IV

Ամառ

113 Ամառային գիշեր . . 167
114 Շինականի առաւօտեան երգը, Գ. Քաթ. . . . 168
115 Բնութեան գրկում, ոտան. Ծատուրեան . . . 169
116 Ոգնին ու օձը, Ա. Յակոբեան . . . 169
117 Հօ, հօ, եղ, ջան, ոտ. Սարբ. 170
118 Մրջիւններ, Մ. Տ. Սարգսեան 171
119 Կռունկն ու սագն, Հ. Հայրապետեան . . . 172
120 Յարդագողի ճանապարհը, ոտ. Հ. Մազմանեան . . 173
121 Ահմէդի ուղտը . . 174
122 Զորս եղանակ, ոտան. . 176
123 Կարկուտ . . . 176
224 Ա՛յ սեւ ամպեր, ոտան. . 177

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011058